Գիրքը հրատարակվել է ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի հովանավորությամբ

ՀՀ դատավորների միությունը շնորհակալություն է հայտնում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետին, ՀՀ իրավաբանների միությանը, Զարգացման հայկական ինստիտուտին, «Ամբրելլա» իրավաբանական ծառայությունների կենտրոնին իրենց առաջարկություններով ու դիտողություններով ընտանեկան հանրամատչելի իրավաբանական գրադարանի ստեղծմանն աջակցելու համար

Ընտանեկան հանրամատչելի գրադարանի շարքի մյուս հրատարակություններին կարող եք ծանոթանալ՝ այցելելով ՀՀ դատավորների միության ինտերնետային կայքէջ հետևյալ հասցեներով՝

www.datavor.am
www.judge.am

**ASSOCIATION OF JUDGES
OF THE REPUBLIC OF ARMENIA**

**ARTUR CHAKHOYAN
GOR GRIGORYAN**

DATABASE OF SOCIAL RIGHTS

FAMILY LAW MANUAL

Editors: **Hrachik SARGSYAN**
Chairman of Armavir marz general jurisdiction court of the RA,
President of the Association of Judges of the RA

Vahe YENGIBARYAN
Executive Director of the Association of Judges of the RA,
Professor of YSU Law Faculty, PhD in law,
Associated Professor of Jurisprudence

Lingvo-stylistic editor: ***Amalya HARUTYUNYAN***

Yerevan
«Antares»
2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆ
ԳՈՌ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագիրներ՝ **Հրաչիկ ՍԱՐԳՍՅԱՆ**
Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահ, ՀՀ դատավորների միության նախագահ

Վահե ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ՀՀ դատավորների միության գործադիր տնօրեն, իրավագիտության թեկնածու, դոցենտ

Լեզվաոճական խմբագիր՝ **Ամալյա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Երևան
«Անտարես»
2014

ՀՏԴ 373.1: 342.7
ԳՄԴ 74.2 + 67.91
Չ 166

Տպագրվում է
ՀՀ դատավորների միության խորհրդի որոշմամբ

Չախոյան Ա., Գրիգորյան Գ.
Չ 166 Սոցիալական իրավունքների շտեմարան/Արթուր Չախոյան, Գոռ Գրիգորյան: ՀՀ դատավորների միություն: Խմբ.՝ Հրաչիկ Սարգսյան, Վահե Ենգիբարյան.- Եր.: Անտարես, 2014.- 176 էջ:

Ձեռնարկում համակարգված ձևով վերլուծվել և ներկայացվել են սոցիալական իրավունքին վերաբերող առանցքային հիմնահարցերը, ինչպես նաև այս բնագավառում ՀՀ օրենսդրության հիմնական դրույթներն ու դատական պրակտիկան:

Աշխատանքը նպատակաուղղված է քաղաքացիներին, ինչպես նաև շահագրգիռ այլ անձանց ու կազմակերպություններին ներկայացնելու Հայաստանի Հանրապետությունում սոցիալական իրավունքի բնագավառում առկա վիճակը և իրավակիրառ պրակտիկայի զարգացման ուղղություններն ու հեռանկարները:

Այն կարող է օգտակար լինել ինչպես պրակտիկ իրավաբանների՝ դատավորների, դատախազների, փաստաբանների և իրավակիրառ գործունեություն իրականացնող մյուս մարմինների, այնպես էլ իրավաբանական բուհերի ուսանողների, իրավունքի բնագավառում գիտական հետազոտություններ կատարող անձանց համար:

ՀՏԴ 373.1: 342.7
ԳՄԴ 74.2 + 67.91

ISBN 978–9939–51– 573-1

© ՀՀ դատավորների միություն, 2014
© Սարգսյան Հրաչիկ, 2014
© Ենգիբարյան Վահե, 2014
© Գրիգորյան Գոռ, 2014
© Չախոյան Արթուր, 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ I Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալական իրավունքը 7

1. Սոցիալական աջակցություն ստանալու իրավունքը 7
2. Սոցիալական ծառայությունների տրամադրման ձևերը 9
3. Սոցիալական ոլորտի պետական կարգավորումը 17
4. Սոցիալական աջակցության տրամադրման կարգը 22
5. Հաճախորդի և սոցիալական աշխատանքի մասնագետի իրավունքներն ու պարտականությունները 23
6. Բնաիրային օգնության տրամադրման կարգը 27

Գլուխ II Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական իրավունքը 28

1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանությունը 28
2. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքները.....30
3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառման կարգը 34
4. Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավունքների պաշտպանությունը 37

Գլուխ III Հաշմանդամների սոցիալական իրավունքները 41

1. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը 41
2. Հաշմանդամների իրավունքները և պարտականությունները 42
3. Անձին հաշմանդամ ճանաչելու կարգը 46
4. Հաշմանդամության կանխարգելումը 48
5. Հաշմանդամների կրթությունն ու մասնագիտական ուսուցումը.....50
6. Հաշմանդամների աշխատանքային իրավունքների երաշխիքը 53

7. Հաշմանդամների համար սոցիալական ենթակառուցվածքի մատչելիության ապահովման պայմանների ստեղծումը 55
8. Հաշմանդամներին ցույց տրվող սոցիալական օգնությունը..... 57
9. Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկումը բարելավելու կարգը 59

ԳԼՈՒԽ IV Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական իրավունքները..... 63

1. «Զինծառայող» հասկացությունը..... 63
2. Զինծառայողների աշխատանքային երաշխիքները 64
3. Զինծառայողների աշխատելու և հանգստի ժամանակը 67
4. Զինծառայողների բժշկական սպասարկումը և բնակարանային ապահովումը..... 68
5. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների ամենամսյա դրամական օգնության իրավունքը 71

ԳԼՈՒԽ V Դատավորի գործունեության սոցիալական երաշխիքները 75

Գլուխ VI Դատախազի գործունեության սոցիալական երաշխիքները 79

Հավելված..... 83

ԳԼՈՒԽ I
Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալական իրավունքը

1. Սոցիալական աջակցություն ստանալու իրավունքը

Հայաստանի Հանրապետությունում սոցիալական աջակցություն ստանալու իրավունք ունեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում կացության համապատասխան կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք:

Սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով, ենթաօրենսդրական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է սոցիալական աջակցության հասկացությունը, կազմակերպման և տրամադրման սկզբունքներն ու կարգը, ֆինանսավորման աղբյուրները, սոցիալական աջակցության կառավարման համակարգը:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

կյանքի դժվարին իրավիճակ՝ հաշմանդամության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, հիվանդության, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, երկարատև գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերից վերադառնալու հետևանքով մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող.

սոցիալական աջակցություն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, կյանքի դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու, նրանց հիմնական պահանջմունքները բավարարելու, հասարակության մեջ ինտեգրվելու, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու նպատակով ընտանիքին տրամադրվող սոցիալական ծառայությունների ամբողջություն.

հիմնական պահանջմունքներ՝ ֆիզիկական անձի կեցության համար անհրաժեշտ պայմանների (սնունդ, հագուստ, կացարան, բուժօգնություն, հիմնական ընդհանուր կրթություն, բնակարանային կոմունալ ծառայություններ) ամբողջություն.

հաճախորդ՝ վերոնշյալ օրենքի համաձայն՝ սոցիալական աջակցություն ստացող անձ.

ծեր՝ ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած անձ.

անօթևան՝ մշտական կամ ժամանակավոր կամ փաստացի բնակության վայր չունեցող անձ.

բռնություն՝ անձի ֆիզիկական և (կամ) հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված արարք կամ դրա սպառնալիք.

սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին՝ պետական մարմին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում, որն իր սպասարկման տարածքում բնակչությանը տրամադրում է սույն օրենքով նախատեսված սոցիալական աջակցություն.

սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություն՝ նշված օրենքով սահմանված սոցիալական աջակցություն տրամադրող կազմակերպություն՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից:

Սոցիալական աջակցության հիմնական նպատակն է բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հիմնական պահանջմունքները, ստեղծել պայմաններ հասարակության մեջ ինտեգրվելու համար, խթանել նրանց ինքնօգնության և ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը, ինչպես նաև օժանդակել նրանց սոցիալական, ֆինանսական խնդիրների լուծմանը:

Սոցիալական աջակցության կազմակերպման և տրամադրման հիմնական սկզբունքներն են՝

- ✓ Երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթությունը՝ սոցիալական ծառայություններ տրամադրելիս երեխաներին նախապատվություն տալը.

- ✓ հասցեականությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրումը իսկապես դրա կարիքն ունեցող անձին.
- ✓ համագործակցությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրումը պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմիններ-ի, սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների և սոցիա-լական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների համա-գործակցության հիման վրա.
- ✓ մատչելիությունը՝ սոցիալական ծառայություններ ստանալու հասանե-լիության ապահովումը.
- ✓ համարժեքությունը և շարունակականության ապահովումը՝ անձի պա-հանջմունքներին առավել համապատասխան սոցիալական ծառայու-թյունների տրամադրումը, դրանց շարունակականության ապահովումը.
- ✓ համալիրությունը՝ տարատեսակ սոցիալական ծառայությունների զուգակցված տրամադրումը.
- ✓ թափանցիկությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի հասանելի լինելը հասարակության համար.
- ✓ սոցիալական խնամառության բացառումը՝ անձի ակտիվության դրսևոր-ման և ինքնօգնության ունակությունների զարգացումը սոցիալական աջակցությունից շարունակական կախվածությունը բացառելու համար.
- ✓ մարդու արժանապատվությունը չնվաստացնելը:

2. Սոցիալական ծառայությունների տրամադրման ձևերը

Սոցիալական ծառայությունների հիմնական տեսակներն են՝ խորհրդատվական օգնության տրամադրումը, վերականգնողական օգ-նության տրամադրումը, դրամական օգնության տրամադրումը, բնա-իրային օգնության տրամադրումը, ժամանակավոր օթևանի տրամադ-րումը, խնամքի կազմակերպումը, իրավաբանական օգնության տրա-մադրումը: Բացի նշվածներից կարող են լինել սոցիալական ծառայու-թյունների՝ օրենքով չարգելված այլ տեսակներ:

Խորհրդատվական օգնությունը տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն ստեղծված իրավիճակից դուրս գալու, նրա սոցիալական խնդիրների լուծման ուղիներ և եղանակներ գտնելու միջոցների մասին խորհուրդների և առաջարկությունների, ինչ-պես նաև համարժեք սոցիալական ծառայություններ ստանալու վերա-բերյալ տեղեկատվություն տրամադրելու ձևով:

Վերականգնողական օգնությունը տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն բժշկական վերականգնման, վերականգնման տեխնիկական միջոցների և այլ օժանդակ սարքերի, հոգեբանական վերականգնման կամ մասնագիտական վերականգնման ու աշխատանքային թերապիայի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ ձևերով: Վերականգնողական օգնության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ կառավարության կողմից հաստատված վերականգնողական օգնության տրամադրման կարգի համաձայն՝ վերականգնողական օգնությունը տրամադրվում է հաճախորդին սոցիալ-հոգեբանական անհատական վերականգնողական ծրագրի համաձայն: Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունը (այսուհետ՝ գործակալություն) անձի կամ նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում ընդունելու դեպքում կազմում է հաճախորդի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիր (այսուհետ՝ ծրագիր)՝ ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սոցիալական աջակցության կազմակերպման և տրամադրման սկզբունքներով:

Գործակալությունը ծրագրերը հաշվառում է սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրերի հաշվառման գրանցամատյանում, որտեղ նշվում են ծրագրի հերթական համարը, ծրագրի կազմման ամսաթիվը, հաճախորդի անունը, ազգանունը և բնակության վայրը:

Գործակալությունը հաճախորդին կամ նրա օրինական ներկայացուցչին ծանոթացնում է ծրագրով նախատեսված միջոցառումների, հաճախորդի իրավունքների և պարտականությունների հետ:

Հաճախորդը ծրագրից կամ ծրագրով նախատեսված որոշակի ծառայություններն ստանալիս կարող է հրաժարվել միայն գրավոր, որի մասին ծրագրում կատարվում է գրառում: Միաժամանակ հաճախորդին զգուշացվում է դրա հնարավոր հետևանքների մասին:

Ծրագիրն ընդգրկում է հաճախորդի սոցիալական խնդիրների նկարագիրը և դրանց լուծման հնարավոր ուղիներն ու եղանակները:

Ծրագրում առաջարկվող սոցիալական ծառայությունների տեսակներն ու ձևերն ընտրվում են անձի պահանջմունքներին համապատասխան և համարժեք՝ ապահովելով դրանց շարունակականությունը:

Ծրագրի նպատակը հաճախորդի հիմնական պահանջմունքները հնարավորինս բավարարելն է, նրա ինքնօգնության և խնդիրներն

ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը խթանելն է, ինչպես նաև նրա սոցիալական և ֆինանսական խնդիրների լուծմանն օժանդակելն է:

Գործակալությունը ծրագիրն իրականացնում է ինքնուրույն կամ համագործակցելով համապատասխան կազմակերպությունների հետ, որի մասին նշվում է ծրագրում:

Գործակալությունը հաճախորդի դիմելուց հետո 15-օրյա ժամկետում կազմակերպում է տնային այցելություն և գնահատում նրա սոցիալական խնդիրներն ու կարիքները և դրանք ամրագրում ծրագրում:

Գործակալությունը պարզում է հաճախորդի՝

ա) կենսաթոշակի իրավունքի հարցը, այն իրացված չլինելու դեպքում, հաճախորդին է ուղղորդում Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի տարածքային մարմին.

բ) գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության իրավունքի հետ կապված հարցը և այն իրացված չլինելու դեպքում նրան ուղղորդում է զբաղվածության պետական ծառայություն.

գ) խնամք ստանալու իրավունքի հարցը և դրա կարիքն ունենալու դեպքում կազմակերպում է խնամքի տրամադրումը տնային պայմաններում կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում կամ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

դ) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու հանգամանքը և նրան ներկայացնում է բժշկահոգեբանամանկավարժական գնահատման.

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվելու կամ դրանց դիմաց դրամական օգնություն ստանալու իրավունքը և այն իրացված չլինելու դեպքում նրան ուղղորդում է իրավասու մարմին.

զ) առողջապահական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում անվճար բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու իրավունքի հարցը և տրամադրում տեղեկանք ընտանիքի անապահովության միավորի մասին:

Հաճախորդի մոտ օրգանիզմի ֆունկցիաների խանգարումների առկայության դեպքում գործակալությունը նրան ուղղորդում է իր բնակության վայրի ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատություն՝ բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրման համար:

Գործակալությունը պարզում է հաճախորդի բնաիրային օգնություն ստանալու իրավունքի հարցը և իրականացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Բնաիրային օգնության տրամադրման կարգը սահմանելու մասին» N 958-Ն որոշմամբ իրեն վերապահված լիազորությունները:

Հայաստանի Հանրապետության կառավարության նշված որոշմամբ հաստատված կարգով սահմանվում են սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների միջոցով (այսուհետ՝ գործակալություն) միջազգային, օտարերկրյա կազմակերպությունների, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից որպես մարդասիրական օգնություն հատկացված բնաիրային օգնության տրամադրման հետ կապված հարաբերությունները և նշված կարգի դրույթները չեն տարածվում այլ իրավական ակտերով կարգավորվող բնաիրային օգնության տրամադրման հետ կապված հարաբերությունների վրա:

Որպես մարդասիրական օգնություն հատկացված բնաիրային օգնությունը տրամադրվում է նպատակային և հասցեական՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին՝ նրանց հիմնական պահանջմունքների բավարարման համար:

Բնաիրային օգնությունը տրամադրվում է սննդի, հագուստի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների ձևով:

Գործակալությունը բնաիրային օգնության տրամադրման ժամանակ համագործակցում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ:

Յուրաքանչյուր բնաիրային օգնության տրամադրման համար հաստատվում է բնաիրային օգնության ծրագիր՝ գործընթացն սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ:

Բնաիրային օգնության ծրագիրը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները՝

ա) ծրագրի անվանումը և նպատակները.

բ) բնաիրային օգնություն հատկացրած կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը (համաձայնությամբ).

գ) ծրագրի իրականացման մյուս մասնակից և պատասխանատու կազմակերպությունների անվանումները.

դ) ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք, բնակավայր).

ե) մեկ բաժին օգնության նկարագիրը (տեսականի, չափի միավոր, մեկ չափաբաժնի պարունակություն).

զ) բնաիրային օգնության ծրագրի ընդհանուր ծավալը (չափաբաժիններ-ի թիվը).

է) հաճախորդների թիվը և տրամադրման հիմքը.

ը) ծրագրի ժամկետները՝ սկիզբը և ավարտը:

Ծրագիրը հաստատում է.

ա) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, որպես սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ ծրագիրն իրականացնելիս՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը՝ կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը բնաիրային օգնություն հատկացրած կազմակերպության լիազոր ներկայացուցչի կամ ֆիզիկական անձի հետ համատեղ.

բ) տարածքային կառավարման մարմնի հետ ծրագիրն իրականացնելիս՝ Հայաստանի Հանրապետության մարզպետը (Երևանի քաղաքապետը) կամ Հայաստանի Հանրապետության մարզպետը (Երևանի քաղաքապետը)՝ բնաիրային օգնություն հատկացրած կազմակերպության լիազոր ներկայացուցչի կամ ֆիզիկական անձի հետ (համաձայնությամբ) համատեղ:

Ծրագրի ավարտից հետո չբաշխված բնաիրային օգնության տրամադրման համար հաճախորդների ցանկը կազմվում է սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ՝ գործակալության պետի կողմից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Գործակալությունը, ծրագրի իրականացման մյուս մասնակից կազմակերպությունները բնաիրային օգնության ծրագրի իրականացումից առնվազն 10 օր առաջ զանգվածային լրատվության միջոցներով իրազեկում են բնակչությանը՝ նշելով ծրագրի իրականացման ժամկետները, դիմելու կարգը և հաճախորդների շրջանակը: Բնաիրային օգնությունը տրամադրվում է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները, իրավաբանական կամ ֆիզիկական անձինք բնաիրային օգնությունը տրամադրում են օրենքով սահմանված կարգով:

Գործակալությունը հաշմանդամ հաճախորդի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրում ներառում է հաշմանդամի համար Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական

փորձաքննության գործակալության հաստատած վերականգնողական անհատական ծրագիրը:

Հաճախորդի՝ սահմանված ծրագրով տրամադրվող սոցիալական ծառայություններից գրավոր հրաժարվելու դեպքում գործակալությունը մեկշաբաթյա ժամկետում գրավոր տեղեկացնում է բժշկասոցիալական փորձաքննության գործակալության համապատասխան տարածքային մարմնին:

Ծրագրում նշվում են սոցիալական ծառայության տեսակը, տրամադրման ժամկետի սկիզբը, եթե այն տրամադրվում է ժամկետով, ապա դրա ավարտը, կատարողը, ծառայության տրամադրման արդյունքը, այն չիրականացվելու դեպքում դրա պատճառը, առաջարկություն այլ ծառայություններ տրամադրելու մասին, շարունակական վերահսկման ժամկետները: Ծրագրով սահմանված շարունակական վերահսկման ժամկետներում գործակալությունն ուսումնասիրում է ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը և արդյունքների մասին նշում ծրագրում:

Գործակալությունը կազմակերպում է ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումն ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատության, կրթություն իրականացնող կազմակերպությունների, սոցիալական ապահովագրության տարածքային մարմինների, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային կենտրոնների հետ:

Գործակալությունը ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի մասին տեղեկանում է ծրագրով շարունակական վերահսկողության սահմանված ժամկետներում՝ հաճախորդի և համապատասխան կազմակերպությունների հետ հանդիպումների ժամանակ՝ դրա մասին ծրագրում կատարելով գրառումներ:

Հաշմանդամի վերականգնողական անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման մասին դրանք իրականացրած կազմակերպությունները հաշմանդամի վերականգնողական անհատական ծրագրում կատարում են համապատասխան գրառում:

Հաճախորդի պահանջմունքներին համապատասխան՝ պետական ծրագրերում չներառված սոցիալական ծառայության տրամադրման անհրաժեշտության դեպքում, գործակալությունը տվյալ հաճախորդի ծրագիրը ներկայացնում է սոցիալական աջակցության խորհրդի քննարկմանը և դիմում սոցիալական ծառայություններ մատուցող այն կազմակերպությանը, որը կարող է մատուցել անհրաժեշտ ծառայությունը:

Գործակալությունը հաճախորդի սոցիալական խնդիրների լուծման ընթացքում համագործակցում է նրա բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմնի հետ, որն իր լիազորությունների շրջանակներում նպաստում է հաճախորդի հասարակությանն ինտեգրվելուն, սոցիալական մեկուսացման կանխարգելմանը և նմանատիպ այլ խնդիրների լուծմանը:

Բժշկական վերականգնման օգնությունը տրամադրվում է համապատասխան բուժօգնության տեսակ իրականացնող հանրապետական, մարզային, քաղաքային և համայնքային բժշկական հաստատություններում, վերականգնողական կենտրոններում և առողջարաններում՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից:

Հոգեբանական վերականգնման օգնությունը տրամադրվում է հոգեբանական օգնություն տրամադրող մասնագիտացված հաստատություններում, ինչպես նաև հանրապետական, մարզային, քաղաքային և համայնքային բժշկական հաստատություններում և վերականգնողական կենտրոններում (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) գործող հոգեբանական ծառայությունների կողմից:

Սոցիալական ծառայությունների հաջորդ տեսակը, ինչպես արդեն նշել ենք, դրամական օգնության տրամադրումն է:

Դրամական օգնությունը պետական բյուջեից կամ համայնքի բյուջեից անհատույց տրամադրվող հասցեական, նպատակային աջակցություն է:

Դրամական օգնության ձևերն են՝

1) պետական նպաստները.

2) նպատակային նշանակություն ունեցող դրամական օգնությունը.

3) քաղաքացիների որոշակի ծախսերի մասնակի հատուցումը:

Դրամական օգնության տրամադրման կարգը սահմանվում է օրենքով: Բնաիրային օգնությունը տրամադրվում է սննդի կազմակերպման, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների, օրենքով սահմանված դեպքերում բնակելի տարածության, հատուկ տրանսպորտային միջոցների, հաշմանդամների վերականգնողական տեխնիկական միջոցների տրամադրման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով: Բնաիրային օգնության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ժամանակավոր օթևան տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, անօթևան կամ բռնության ենթարկված քաղաքացիներին ժամանակավոր կացարան ապահովելու և նրանց սոցիալական խնդիրների լուծումներ գտնելու նպատակով: Ժամանակավոր օթևանը տրամադրվում է մինչև 60 օր տևողությամբ: Ժամանակավոր օթևանում հաճախորդին տրամադրվում են սնունդ, հիգիենայի պարագաներ, հագուստ, կոշիկ, սոցիալական, բժշկական, հոգեբանական և իրավական օգնություն, իսկ համարժեք սոցիալական ծառայություններ ստանալը անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է մասնագիտական կազմակերպություններում:

Խնամքի տրամադրումը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ծեր, հաշմանդամ քաղաքացիներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմանները ապահովելու կամ ծեր, հաշմանդամ քաղաքացիներին իրենց հարազատ սոցիալական միջավայրում հնարավորինս երկար պահելու նպատակով անհրաժեշտ օգնությունն է:

Խնամքը տրամադրվում է սննդի, այդ թվում՝ դիետիկ, բժշկական, սանիտարահիգիենիկ սպասարկման, հագուստի, կոշիկի և առաջին անհրաժեշտության այլ պարագաների տրամադրման, մշակութային, կրթական, ժամանցի, անհրաժեշտության դեպքում՝ հաճախորդների դիսպանսերիզացման և հոսպիտալացման, իրավաբանական օգնության և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով: Մահամերձ վիճակում գտնվող քաղաքացուն տրամադրվում է հոսպիսային օգնություն՝ կյանքի վերջին ամիսների, օրերի ընթացքում նրան, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նրա ընտանիքի անդամներին նրանց ֆիզիկական և հոգեկան տառապանքները թեթևացնելու նպատակով: Խնամքը տրամադրվում է տնային պայմաններում կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում կամ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունն ապահովում է երկարաժամկետ կացարան, շուրջօրյա լրիվ խնամք, իսկ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնը՝ խնամքի տրամադրում ցերեկային ժամերին տնային պայմաններում և կենտրոնում:

Իրավաբանական օգնությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպության իրավասությունների շրջանակում տրամադրվող իրավաբանական խորհրդատվություն է, ինչպես նաև նրա իրավունքնե-

րի և օրինական շահերի պաշտպանության նպատակով փաստաբանական օգնության կազմակերպումը:

3. Սոցիալական ոլորտի պետական կարգավորումը

Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է սոցիալական աջակցության քաղաքականության հիմնական ուղղությունները, ապահովում է միասնական պետական քաղաքականության իրականացումը, սահմանում է պետական ծախսերի ծրագիրը և հաստատում է օգնությունների տրամադրման կարգերը:

Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորած պետական մարմին)՝

1) մշակում և իրականացնում է սոցիալական աջակցության բնագավառի միասնական պետական քաղաքականությունը.

2) ներկայացնում է առաջարկություններ՝ սոցիալական աջակցության զարգացման ուղղությունների և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին.

3) իրականացնում է սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների մեթոդական ղեկավարումը.

4) հաստատում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի օրինակելի կանոնադրությունը՝ դրանում սահմանելով տարածքային մարմնի աշխատողներին ներկայացվող մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող միասնական պահանջներ, ինչպես նաև նրանց իրավունքների և պարտականությունների նկարագրերը.

5) պետական վերահսկողություն է իրականացնում սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններում.

6) ստուգում է այլ մարմիններից և կազմակերպություններից (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) տրված սոցիալական աջակցության տրամադրման համար իրավունքը հաստատող փաստաթղթ(եր)ի հավաստիությունը.

7) կազմակերպում է «Սոցիալական աշխատանք» մասնագիտացման դասընթացներ, ինչպես նաև սոցիալականաշխատանքի մասնագետների որակավորման բարձրացման դասընթացներ.

8) սահմանված կարգով մասնակցում է «Սոցիալական աշխատանք» մասնագիտության պետական կրթական չափորոշիչի ձևավորմանը.

9) հաստատում է սոցիալական աշխատանքի մասնագետների էթիկայի կանոնները.

10) հաստատում է տնային այցելություն կատարելու մեթոդական ցուցումները.

11) հանդես է գալիս հաճախորդի օրինական շահերի և իրավունքների պաշտպանությամբ նրա դիմելու դեպքում կամ իր նախաձեռնությամբ.

12) տրամադրվող սոցիալական ծառայությունը օրենքով սահմանված կարգին չհամապատասխանելու դեպքում պահանջում է տեղեկատվություն՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններից տրամադրվող սոցիալական ծառայությունը սահմանված կարգին համապատասխանելու վերաբերյալ, պահանջ է ներկայացնում սոցիալական ծառայություններ տրամադրող մարմնին՝ սահմանված ժամկետում վերացնելու հայտնաբերված անհամապատասխանությունը, դիմում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի վերադասին՝ համապատասխան սոցիալական աշխատանքի մասնագետին օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ.

13) սահմանում է սոցիալական ծառայությունների որակի վերահսկման հետադարձ կապի մեխանիզմները.

14) ստեղծում և վարում է սոցիալական օգնություն ստանալու համար դիմած քաղաքացիների և հաճախորդների անհատական տվյալների տեղեկատվական բազա.

15) ուսումնասիրում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների և սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների հետ կապված բողոքները, խախտումներ հայտնաբերելու դեպքում ձեռնարկում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված միջոցառումներ դրանք վերացնելու ուղղությամբ:

Տարածքային կառավարման պետական մարմինը իրականացնում է մարզի (Երևան քաղաքի) սոցիալական աջակցության պետական ծրագրերը, համակարգում և իրականացնում է մարզի (Երևան քաղաքի)

սոցիալական աջակցության ծրագրերը, աջակցում է սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններին մարզում (Երևան քաղաքում) սոցիալական աջակցության ծրագիր իրականացնելիս:

Տեղական ինքնակառավարման մարմինը սոցիալական ծառայություններ է տրամադրում պետության պատվիրակած լիազորությունների շրջանակներում, սոցիալական աջակցության համայնքային ծրագրերի շրջանակներում և կամավոր լիազորությունների շրջանակներում: Համայնքի ղեկավարը համագործակցում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի և սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ: Համայնքի ղեկավարն աջակցում է սոցիալական աջակցության պետական ծրագրերի իրականացմանը դրանց հասցեականության մեծացման հարցում՝ հայտնաբերելով համայնքի առավել աղքատ, ինչպես նաև աջակցության ծրագրերում ընդգրկված ոչ աղքատ ընտանիքներին: Համայնքն իր ուժերով կամ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի կամ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպում է տնային այցելություններ և հնարավորության դեպքում լուծում տալիս տվյալ ընտանիքի կամ քաղաքացու սոցիալական խնդիրներին: Համայնքի ղեկավարն ապահովում է հաճախորդի սոցիալական վիճակի վերաբերյալ իր տնօրինության տակ գտնվող հավաստի ու ամբողջական տեղեկատվության տրամադրումը սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնին:

Համայնքի ղեկավարն ապահովում է բավարար պայմաններ իր կողմից հաճախորդներին տրված փաստաթղթերի հավաստիության ճշտման նպատակով պետական լիազոր մարմնի կողմից իրականացվող ստուգումների, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից իրականացվող ուսումնասիրությունների ժամանակ:

Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը՝

1) հայտնաբերում է աղքատ ընտանիքներին և սահմանված կարգով նրանց հաշվառում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում.

2) օրենքով սահմանված կարգով իրականացնում է դրամական օգնության նշանակումը և վճարման կազմակերպումը.

3) պարզում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը՝ դրանք տրամադրած մարմիններում և կազմակերպություններում.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կազմում է հաճախորդի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրեր և դրանք իրականացնում ինքնուրույն կամ համագործակցելով համապատասխան կազմակերպությունների հետ.

5) հաշմանդամների սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը կազմելիս հաշվի է առնում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտի իրավասու մարմնի կազմած հաշմանդամի անհատական վերականգնողական ծրագիրը.

6) մասնակցում է մարզի, իր սպասարկման տարածքի համայնքների սոցիալական զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին.

7) ապահովում է քաղաքացիների համար սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ, սոցիալական աջակցության մատչելիություն և համարժեքություն հաճախորդների անհատական պահանջմունքներին.

8) հանդես է գալիս հաճախորդի օրինական շահերի և իրավունքների պաշտպանությամբ նրա դիմելու դեպքում կամ իր նախաձեռնությամբ.

9) համագործակցում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ.

10) մասնակցում է մուրացկանության և թափառաշրջության խնդիրների լուծման, ինչպես նաև դրանց կանխարգելման ուղղությամբ այլ մարմինների կողմից ծրագրերի իրականացման աշխատանքներին.

11) քաղաքացիներին ապահովում է նրանց անհրաժեշտ տեղեկատվությամբ և խորհրդատվությամբ, առավել խոր մասնագիտական օգնության կարիքի դեպքում նրանց կողմնորոշում այլ կազմակերպություններ, որտեղ կարող է ցուցաբերվել մասնագիտական օգնություն.

12) հաշվառում է խնամք ստանալու համար դիմած քաղաքացիներին, ուսումնասիրում նրանց ընտանեկան, սոցիալ-կենցաղային ու սոցիալ-տնտեսական պայմանները, աջակցում նրանց փաստաթղթերի ձևակերպմանը և ուղեգրում խնամք տրամադրող համապատասխան կազմակերպություն.

13) իրականացնում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Սոցիալական աջակցության տեղեկատվական բազաներն ստեղծվում են սոցիալական ծառայությունների չափերի, հեռանկարային զար-

գացման ուղղությունների, դրանց ֆինանսավորման հնարավոր միջոցների կանխատեսման, սոցիալական ծառայությունների տեսակների տրամադրման համակարգման նպատակով: Սոցիալական աջակցության տեղեկատվական բազան պարունակում է սոցիալական ծառայություններ ստանալու համար դիմած քաղաքացիների անհատական տվյալները, սոցիալական աջակցությունը ստանալու հիմքը կամ մերժելու պատճառը, ստանալու ժամկետները, պարբերականությունը, սոցիալական աջակցության չափը, տրամադրման դադարեցման ժամկետը: Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները և սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները պարտավոր են սոցիալական ծառայություններ տրամադրելու մասին տվյալներ ներկայացնել լիազորած պետական մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում:

Սոցիալական աջակցության պետական քաղաքականություն իրականացնելիս լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները համագործակցում են սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ:

Լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպություններ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում տեղեկատվություն են փոխանակում հաճախորդների և իրենց տրամադրած սոցիալական ծառայությունների մասին:

Սոցիալական աջակցության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցներից, համայնքի բյուջեի միջոցներից, իրավաբանական և ֆիզիկական անձանց բարեգործական նվիրաբերումներից և նվիրատվություններից և սոցիալական աջակցության վճարովի ծառայություններից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին:

Սոցիալական աջակցության խորհուրդները ստեղծվում են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության ապահովման նպատակով: Սոցիալական աջակցության խորհուրդները ստեղծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշ-

մամբ և գործում են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին կից հասարակական հիմունքներով, որի կազմում ընդգրկվում են մարզպետարանի ներկայացուցիչը, տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման ներկայացուցիչը, զբաղվածության տարածքային մարմնի ներկայացուցիչը և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչները:

4. Սոցիալական աջակցության տրամադրման կարգը

Պետական ծրագրերի շրջանակներում սոցիալական աջակցություն տրամադրվում է հաճախորդի կամ նրա օրինական ներկայացուցչի՝ սոցիալական աջակցություն տրամադրելու մասին հաճախորդի բնակության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին ներկայացրած գրավոր դիմումի և սոցիալական ծառայության տվյալ տեսակի համար անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա, որոնց ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Սոցիալական աջակցության տրամադրումը մերժվում է սոցիալական ծառայության տվյալ տեսակի համար օրենքով սահմանված բավարար հիմքի բացակայության, դիմողի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը չներկայացնելու և սոցիալական աջակցություն ստանալու համար դիմողի կողմից կեղծ տեղեկություններ ներկայացվելու դեպքերում: Սոցիալական աջակցություն տրամադրելու կամ սոցիալական աջակցության տրամադրումը մերժելու մասին որոշումն ընդունում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը:

Սոցիալական աջակցություն տրամադրելու կամ այն մերժելու մասին որոշումը սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը կայացնում է դիմելուց հետո ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում, որի մասին գրավոր տեղեկացնում է դիմողին: Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում ընդունելու համար լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության դեպքում դիմողին սույն հոդվածի առաջին մասում նշված ժամկետում տեղեկացնում է լրացուցիչ ուսումնասիրություններ անցկացնելու անհրաժեշտության մասին: Դիմողին վերջնական պատասխան տրվում է ոչ ուշ, քան դիմելուց հետո՝ 30 օրվա ընթացքում: Սոցիալական ծառայություններ տրամադրող

տարածքային մարմինը սոցիալական աջակցություն տրամադրելը մերժելու մասին որոշման մեջ նշում է մերժման հիմքը:

Արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող, կյանքի դժվարին իրավիճակներում սոցիալական աջակցությունը սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից տրամադրվում է անհապաղ այդ մասին տեղեկատվություն ստանալուց հետո: Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի գործողությունը կամ անգործությունը քաղաքացին կարող է բողոքարկել սոցիալական աջակցություն տրամադրող տարածքային մարմնի ղեկավարին, լիազորած պետական մարմնին կամ դատարան:

Պետական ծրագրերի շրջանակներում սոցիալական աջակցության տրամադրումը դադարեցվում է սոցիալական աջակցություն ստանալու հիմքերի վերացման, հաճախորդի կողմից կեղծ տեղեկություններ ներկայացնելու, սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական աջակցություն ստանալուց հրաժարվելու և հաճախորդի մահվան դեպքում: Սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք սոցիալական աջակցությունը տրամադրում են օրենքով սահմանված նպատակներին և սկզբունքներին համապատասխան:

Սոցիալական աջակցության տրամադրումը չի կարող՝ ուղեկցվել քաղաքական կամ կրոնական քարոզչությամբ, հետապնդել տրամադրված սոցիալական ծառայությունների դիմաց այլ ծառայություններ կամ որևէ փոխհատուցում ստանալու ակնկալիք, վնաս պատճառել հաճախորդի առողջությանը, կյանքին և գույքին: Սոցիալական աջակցության տրամադրման մասին սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող անձի գործողությունները կամ անգործությունը քաղաքացին կարող է բողոքարկել լիազորած պետական մարմին կամ դատարան:

5. Հաճախորդի և սոցիալական աշխատանքի մասնագետի իրավունքներն ու պարտականությունները

Հաճախորդն իրավունք հետևյալ իրավունքները.

1) ստանալու տեղեկատվություն իր սոցիալական իրավունքների, դրանց իրացման պայմանների, կարգի և տվյալ սոցիալական խնդիրը լուծելու եղանակների մասին.

2) պահանջելու և ստանալու սոցիալական ծառայությունները տվյալ սոցիալական ծառայության համար օրենսդրությամբ սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում.

3) ստանալու իր կյանքի և առողջության համար անվտանգ սոցիալական ծառայություններ.

4) սոցիալական ծառայության տրամադրման մերժման դեպքում ստանալու գրավոր պատասխան.

5) մասնակցելու սոցիալական ծառայություն ստանալու վերաբերյալ որոշման ընդունման գործընթացին.

6) հրաժարվելու տրամադրվող սոցիալական ծառայություններից.

7) իր իրավունքների խախտման դեպքում բողոքարկելու օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաճախորդը պարտավոր է՝

1) մասնակցել իր սոցիալական խնդիրների լուծմանը.

2) տրամադրել անհրաժեշտ և հավաստի տվյալներ.

3) լինել ակտիվ իր սոցիալական հմտությունների զարգացման հարցում.

4) չխոչընդոտել օրենքով սահմանված սոցիալական աշխատանքի մասնագետների կողմից իրականացվող տնային այցելություններին.

5) սոցիալական աջակցությունն օգտագործել նպատակային:

Քաղաքացուն, առանց նրա կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերով բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղավորելու որոշումը սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի առաջարկությամբ կայացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

Տնային պայմաններում խնամքի տրամադրումը քաղաքացուն կարող է մերժվել, եթե նա քրոնիկ ալկոհոլամոլ կամ թմրամոլ է, վարակակիր է, տառապում է այնպիսի հիվանդություններով, որոնց բուժումը հնարավոր է միայն հատուկ մասնագիտացված բժշկական հաստատություններում: Հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սոցիալական աշխատանքը մարդու անհատական սոցիալական խնդիրների լուծման նպատակով հոգեբանական և մանկավարժական մեթոդների ու եղանակների կիրառման միջոցով իրականացվող մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է մարդու (անձամբ այն իրականացնելու անկարողության դեպքում) կյանքի դժվարին իրավիճակը

հաղթահարելուն, մարդուն, ընտանիքին, անձանց խմբին անհատական օգնություն ցուցաբերելով՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Սոցիալական աշխատանքի մասնագետներն են սոցիալական աշխատողը և սոցիալական սպասարկողը:

Սոցիալական աշխատողը «Սոցիալական աշխատանքի» բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող և սոցիալական աշխատողի մասնագիտական գործունեություն իրականացնող քաղաքացին է: Սոցիալական աշխատող կարող է լինել նաև այլ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող և «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացներ ավարտած, համապատասխան փաստաթուղթ ստացած քաղաքացին, որն ունի սոցիալական ոլորտի աշխատանքի առնվազն մեկ տարվա փորձ:

Սոցիալական սպասարկողը «Սոցիալական աշխատանքի» միջին մասնագիտական կրթություն ունեցող և սոցիալական սպասարկողի մասնագիտական գործունեություն իրականացնող քաղաքացին է: Սոցիալական սպասարկող կարող է լինել նաև այլ միջին մասնագիտական կրթություն ունեցող և «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթացներ ավարտած, համապատասխան փաստաթուղթ ստացած քաղաքացին:

Սոցիալական աշխատողն իրավունք ունի՝

1) կատարելու տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրելու սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները.

2) ներկայացնելու առաջարկություն սոցիալական աջակցության ծրագրերի ձևավորման և դրանց կատարելագործման վերաբերյալ:

Սոցիալական աշխատողը պարտավոր է՝

1) օրենսդրությամբ սահմանված դեպքերում կազմել հաճախորդի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը, առաջարկել սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած քաղաքացուն տրամադրվող սոցիալական ծառայության տեսակը, դրանով ապահովել սոցիալական ծառայության համարժեքությունը հաճախորդների անհատական պահանջմունքներին.

2) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած քաղաքացուն օգնել հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը, կատարելագործելու առկա սոցիալական ունակությունները և ձեռք բերելու նորերը.

3) հայտնաբերել և հաշվառել սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիներին և ընտանիքներին.

4) ապահովել քաղաքացիների համար սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ.

5) պահանջել սոցիալական աջակցության համար դիմած քաղաքացուց կամ հաճախորդից միայն սոցիալական աջակցության տրամադրման հետ կապ ունեցող տեղեկություններ, աջակցել անհրաժեշտ փաստաթղթերի ճիշտ ներկայացմանը.

6) ապահովել իր սպասարկման տարածքում բնակվող քաղաքացիների (ընտանիքների) սոցիալական աջակցության իրավունքի իրացման պահանջների կատարումը և պահպանել սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը.

7) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել իր վկայականը:

Սոցիալական աշխատողն ունի օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ իրավունքներ և կրում է պարտականություններ: Սոցիալական սպասարկողն իրավունք ունի կատարելու տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրելու սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների (ընտանիքների)սոցիալական և նյութական պայմանները:

Սոցիալական սպասարկողը պարտավոր է՝

1) տնային պայմաններում տրամադրել սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրով սահմանված տնային խնամքի ծառայություններ.

2) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած քաղաքացուն օգնել հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը.

3) հայտնաբերել սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիներին, ընտանիքներին և աջակցել նրանց հաշվառմանը.

4) պահպանել իր կողմից սպասարկվող քաղաքացիների (ընտանիքների) սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը.

5) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել իր վկայականը:

Սոցիալական սպասարկողն ունի օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ իրավունքներ և պարտականություններ:

Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքում գործող այլ կազմակերպությունները, անկախ կազմակերպական-իրավական ձևից, պարտավոր են աջակցել սոցիալականաշխատանքի մասնագետին իր ծառայողական պարտականությունները կատարելիս: Սոցիալական աշխատանքի մասնագետն ունի վկայական, որը տալիս է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի ղեկավարը:

6. Բնաիրային օգնության տրամադրման կարգը

Բնաիրային օգնության տրամադրման կարգը սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ, որով սահմանվում են սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների միջոցով (այսուհետ՝ գործակալություն) միջազգային, օտարերկրյա կազմակերպությունների, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից որպես մարդասիրական օգնություն հատկացված բնաիրային օգնության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Որպես մարդասիրական օգնություն հատկացված բնաիրային օգնությունը (այսուհետ՝ բնաիրային օգնություն) տրամադրվում է նպատակային և հասցեական՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին՝ նրանց հիմնական պահանջմունքների բավարարման համար: Բնաիրային օգնությունը տրամադրվում է սննդի, հագուստի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների ձևով:

Գործակալությունը բնաիրային օգնության տրամադրման ժամանակ համագործակցում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ: Յուրաքանչյուր բնաիրային օգնության տրամադրման համար հաստատվում է բնաիրային օգնության ծրագիր՝ գործընթացն սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ:

Գործակալությունը, ծրագրի իրականացման մյուս մասնակից կազմակերպությունները բնաիրային օգնության ծրագրի իրականացումից առնվազն 10 օր առաջ զանգվածային լրատվության միջոցներով իրազեկում են բնակչությանը՝ նշելով ծրագրի իրականացման ժամկետները, դիմելու կարգը և հաճախորդների շրջանակը: Բնաիրային օգնությունը տրամադրվում է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Գլուխ II
Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական իրավունքը

1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանությունը

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական, կազմակերպական հիմքերը, նպատակները, սկզբունքները և ձևերը սահմանվում են օրենքով:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում 18 տարին չլրացած այն երեխան, որի ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18-23 տարեկան այն անձինք, որոնց ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց (այսուհետ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ) հաշվառումն իրականացնում են խնամակալության և հոգաբարձության մարմինները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հայաստանի Հանրապետությունում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակներն են՝

1) ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը.

2) ամրագրել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և օրինական շահերի հիմնական երաշխիքները, իրավունքների խախտման դեպքում վերականգնել դրանք, ինչպես նաև չթույլատրել նրանց նկատմամբ որևէ խտրականություն.

3) ձևավորել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության իրավական հիմքերը.

4) նպաստել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ֆիզիկական, մտավոր, հոգևոր զարգացմանը, հասարակության մեջ նրանց ինտեգրմանը, հայրենասիրական ոգով դաստիարակմանը.

5) կանխարգելել սոցիալական դժվարությունների առաջացումը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանությունը սոցիալական ապահովության պետական քաղաքականության առաջնահերթ խնդիրներից է, որի հիմնական սկզբունքներն են՝

1) մարդասիրությունը.

2) սոցիալական արդարությունը.

3) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն ու դաստիարակությունն ընտանիքում կազմակերպելու առաջնահերթությունը և առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ դաստիարակող և խնամող ընտանիքներին աջակցելը.

4) դաստիարակչական, բուժական և բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվող կամ բնակվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչների սահմանումը և պահպանումը.

5) սոցիալական խնամառության բացառումը.

6) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ զբաղվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու հասարակական կազմակերպությունների համագործակցությունը:

2. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքները

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները, որոնք ընդգրկում են՝

1) հանրակրթական, մրցութային կարգով միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթություն.

2) անվճար բժշկական օգնություն և սպասարկում, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սննդի ապահովում՝ սննդի նվազագույն չափորոշիչներին համապատասխան.

3) երեխաների առողջության վերականգնման և հանգստի կազմակերպում.

4) 16 տարին լրացած առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար մասնագիտական կողմնորոշում, գործունեության բնագավառի ընտրություն, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի տեղավորում, աշխատանքի պաշտպանություն.

5) սոցիալական աջակցության՝ սոցիալական ադապտացման և սոցիալ-հոգեբանական վերականգնման միջոցառումներ՝ օրենքով սահմանված կարգով.

6) բնակարանի իրավունքի ապահովում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

7) անվճար իրավաբանական օգնության ցուցաբերում:

Բուժական, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվող կամ բնակվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները կամ նրանց օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն պահանջելու պարբերաբար ուսումնասիրել խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին՝ երեխաներին տրամադրվող ծառայությունների համապատասխանությունը: Տվյալ ուսումնասիրությունները կազմակերպում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը և տեղական ինքնակառավարման մարմինները՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կամ նրանց օրինական ներկայացուցիչների

դիմումների հիման վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նշված կազմակերպություններում պաշտոնատար անձինք պարտավոր են վերացնել բացահայտված խախտումները և տեղեկացնել այդ մասին լիազորված պետական կառավարման մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Պաշտոնատար անձինք նշված խախտումները չվերացնելու դեպքում ենթարկվում են պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հիմնական ընդհանուր կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների նախապատրաստական դասընթացներ ընդունվում և սովորում են անվճար: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներն ընդհանուր մրցույթով պետական միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ ընդունվում են վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում:

Պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ ուսումնական հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրականացնող պետական մասնագիտացված կազմակերպությունների աշխատողների ամսական աշխատավարձի չափը չի կարող ցածր լինել «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով նախատեսված չափի եռապատիկից, որի նկատմամբ սահմանվում է նաև հավելավճար՝ աշխատողի տարիֆային աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի) 50%-ի չափով: Նման մասնագիտացված կազմակերպությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրամադրվում է անվճար բժշկական օգնություն պետական պատվերի շրջանակներում:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին կարող են տրամադրվել սպորտ-առողջարարական ճամբարների, հանգստյան տների, համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում՝ առողջարանային բուժման ուղեգրեր՝ պետական և համայնքային բյուջեներից այդ նպատակով նախատեսված միջոցների և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները բուժական, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվելու կամ բնակվելու, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու, հանրապետության զինված ուժերում ծառայելու կամ ազատազրկման վայրերում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում պահպանում են իրենց բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իրավունքը: 18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, որոնք չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը, իրավունք ունեն ստանալու նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն:

Բնակելի տարածություն չունեցող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակտարածությունը տրվում է արտահերթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից: Զբաղվածության պետական ծառայությունն իրեն դիմած 16 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար իրականացնում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ և, հաշվի առնելով նրանց աշխատանքային ունակություններն ու առողջական վիճակը, աջակցում է նրանց աշխատանքի տեղավորմանը: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ կազմակերպական-իրավական ձևից, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար կարող են ստեղծվել մասնագիտացված աշխատատեղեր: Կազմակերպության լուծարման դեպքում գործատուները պարտավոր են կազմակերպել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասնագիտական ուսուցումը և այլ գործատուների մոտ նրանց աշխատանքի տեղավորումը:

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները հատուկ հոգածության և պաշտպանու-

թյան իրավունք ունեն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որոնք պետք է նպաստեն երեխաների լիարժեք կենսագործունեությանը և զարգացմանը, ինչպես նաև ապահովեն նրանց մասնակցությունը հասարակական կյանքին:

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով տարածքային կառավարման պետական մարմինը, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը, սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնները, դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, կազմում են երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին համապատասխան՝ երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքները և օրինական շահերը ոտնահարելու դեպքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին հասցված վնասի փոխհատուցումը դատարանի վճռով գանձվում է մեղավոր անձանցից՝ հաշվի առնելով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական ադապտացման և սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացումը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը դատարանում իրականացվում է օրենքով սահմանված կարգով: Դաստիարակները, մանկավարժները, բժիշկները, սոցիալական աշխատողները, հոգեբանները և մյուս մասնագետները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ պատասխանատվություն են կրում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, սոցիալական պաշտպանության ապահովման համար, տարածքային կառավարման պետական մարմնի, խնամակալության և հոգաբարձության ու այլ իրավասու մարմինների հանձնարարությամբ կարող են մասնակցել համապատասխան մարմինների կողմից իրականացվող երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցառումներին, ինչպես նաև հանդես գալ դատարանում: Հասարակական, բարեգործական և միջազգային կազմակերպությունները կարող են աջակցել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին՝ իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցում:

3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառման կարգը

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառման նպատակը դաստիարակության համար նրանց ընտանիք հանձնելն է (որդեգրման, խնամակալության (հոգաբարձության) կամ խնամատար ընտանիք, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում տեղավորելն է, նրանց անհատական վերականգնման սոցիալ-հոգեբանական ծրագրերը կազմելն է, ինչպես նաև «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված երաշխիքներ տրամադրելն է:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման նպատակը նրանց անհատական վերականգնման սոցիալ-հոգեբանական ծրագրերը կազմելն է և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված երաշխիքներ տրամադրելն է:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումը (սկզբնական, տարածքային և կենտրոնացված) իրականացվում է համապատասխանաբար խնամակալության և հոգաբարձության մարմինների (սկզբնական հաշվառում), Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) (տարածքային հաշվառում) և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից (կենտրոնացված հաշվառում): Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց սկզբնական հաշվառումը և դրա համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմումն իրականացնում է երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը: Նախադպրոցական, հանրակրթական, բուժպրոֆիլակտիկ և այլ հաստատությունների պաշտոնատար անձինք, որոնք տեղեկություն ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին, պարտավոր են դրա մասին հայտնել երեխաների փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին:

Դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության և նմանատիպ այլ հաստատությունների ղեկավարները, որտեղ գտնվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, պարտավոր են 7 օրվա ընթացքում, այն օրից, երբ տեղեկություն են ստացել, որ երեխան կարող է հանձնվել ընտանիք՝ դաստիարակության, հայտնել այդ հաստատության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին:

Խնամակալության և հոգաբարձության մարմինը, տեղեկանալով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին, պարտավոր է եռօրյա ժամկետում հետազոտել երեխայի կյանքի պայմանները և ծնողական խնամքի բացակայության փաստը հաստատվելու դեպքում երեխայի մասին տվյալները գրանցել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սկզբնական հաշվառման մատյանում:

Սկզբնական հաշվառման վերցնելուց հետո 3 օրվա ընթացքում երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը լրացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի անձնական քարտը, որի պատճենը և երեխայի լուսանկարը՝ 2 օրինակից, ուղարկում է մարզպետարան (Երևանի քաղաքապետարան)՝ երեխային տարածքային հաշվառման վերցնելու համար: Խնամակալության և հոգաբարձության մարմինը մարզպետարան (Երևանի քաղաքապետարան) է ուղարկում նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց անձնական քարտերը:

Խնամակալության և հոգաբարձության մարմինն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավական կարգավիճակի փոփոխման դեպքում (ծնողի (ծնողների) ծնողական իրավունքների վերականգնման, երեխայի որդեգրման և այլն) 3-օրյա ժամկետում դրա մասին տեղեկացնում է մարզպետարան (Երևանի քաղաքապետարան): Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց մասին խնամակալության և հոգաբարձության մարմնից տեղեկություն ստանալուց հետո մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) 3 օրվա ընթացքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց լուսանկարները և անձնական քարտերի պատճեններն ուղարկում է նախարարություն՝ երեխաներին կենտրոնացված հաշվառման վերցնելու և Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտանիքներում դաստիարակության հանձնելուն աջակցելու, ինչպես նաև առանց

ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական երաշխիքներն ապահովելու համար:

Մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) խնամակալության և հոգաբարձության մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա լրացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց տարածքային հաշվառման մատյանները և ձևավորում է տվյալ մարզի (Երևան քաղաքի) տարածքում բնակվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տվյալների տարածքային շտեմարան և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց տվյալների տարածքային շտեմարան: Մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվից առանձնացնում է այն երեխաներին, որոնց որդեգրման համար օրենքով սահմանված կարգով ծագել են իրավական հիմքեր: Մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) վարում է որդեգրման ենթակա այն երեխաների հաշվառումը, որոնց որդեգրման համար օրենքով սահմանված կարգով ծագել են իրավական հիմքեր:

Տարածքային հաշվառման վերցված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավական կարգավիճակի փոփոխման դեպքում (ծնողի (ծնողների) ծնողական իրավունքների վերականգնման, որդեգրման և այլն) մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) 7-օրյա ժամկետում դրա մասին տեղեկացնում է նախարարություն: Մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) հայտնած տվյալների հիման վրա նախարարությունը ձևավորում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տվյալների կենտրոնացված շտեմարան, վարում է այդ երեխաների կենտրոնացված հաշվառումը, առանձնացնում է առանց ծնողական խնամքի մնացած այն երեխաներին, որոնց որդեգրման համար օրենքով սահմանված կարգով ծագել են իրավական հիմքեր և եռօրյա ժամկետում կենտրոնացված հաշվառման մասին տեղեկությունը փոխանցում է համապատասխան մարզպետարան (Երևանի քաղաքապետարան):

Նախարարությունն աջակցում է առանց ծնողական խնամքի մնացած երեխային ընտանիքում դաստիարակության հանձնելու հարցի լուծմանը և առանց ծնողական խնամքի մնացած երեխային ընտանիքում դաստիարակության վերցնելու ցանկություն հայտնած անձանց: Նախարարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով, մարզպետարաններին (Երևանի քաղաքապետարանին), իրենց հարցման հիման վրա, տալիս է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տվյալների հանրապետական շտեմարանում եղած տեղեկությունները:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխային կենտրոնացված հաշվառման վերցնելու ամսաթիվ է համարվում նախարարությունում առանց ծնողական խնամքի մնացած երեխայի անձնական քարտի լրացման ամսաթիվը: Կենտրոնացված հաշվառման վերցված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավական կարգավիճակի փոփոխման մասին տեղեկատվության հիման վրա նախարարությունը հաշվառման մատյանում կատարում է համապատասխան գրառում (առանց ծնողական խնամքի մնացած երեխային հանում է կենտրոնացված հաշվառումից):

4. Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավունքների պաշտպանությունը

Առանց ծնողական խնամքի մնացած երեխան ունի պետության և նրա համապատասխան մարմինների կողմից պաշտպանության, խնամքի, դաստիարակության և օգնության իրավունք: Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են նման երեխաների խնամքը և դաստիարակությունը՝ որդեգրման, խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու և խնամատար ընտանիքում տեղավորելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համապատասխան մանկատներում տեղավորելու միջոցով:

Խնամքի ձևն ընտրելիս հաշվի են առնվում երեխայի դաստիարակության հաջորդականության ապահովումը, մայրենի լեզուն, տարիքը, սեռը և այլն: Երեխայի որդեգրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Ելնելով երեխայի, նրա օրինական ներկայացուցիչների շահերից՝ պետությունը և նրա համապատասխան մարմինները երեխայի կենսապայմանների, առողջական վիճակի գնահատումը կատարում են գաղտնի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Երեխան 16 տարին լրանալուց հետո ունի ինքնուրույն ապրելու իրավունք՝ բավարար կենսապայմանների, պետության և նրա համապատասխան մարմինների կողմից նյութական օգնության և որոշակի պայմանների ստեղծման դեպքում:

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը վերահսկողություն է իրականացնում մանկատներում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) երեխաներին տեղավորելու, ինչպես նաև նրանց խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչների կիրառման նկատմամբ: Մանկատներում երեխաների տեղավորման կարգը և նրանց խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծնողազուրկ երեխայի անձնական հաշվին փոխանցվում է կենսաթոշակ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Երեխայի ֆիզիկական, մտավոր և հոգևոր ունակությունների լիարժեք զարգացման, նրան ինքնուրույն կյանքի նախապատրաստելու նպատակով մանկատներում, գիշերօթիկ հաստատություններում ստեղծվում են ընտանեկանին մոտ պայմաններ: Մանկատանը գտնվող կամ տեղավորված և խնամակալի կարիք ունեցող առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամակալի պարտականությունները, ինչպես նաև այդ երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում է մանկատան ղեկավարը:

Պետությունը և նրա համապատասխան մարմինները հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխային երաշխավորում են անվճար մասնագիտացված բժշկական, արատաբանական և հոգեբանական օգնություն, իր հնարավորություններին համապատասխանող բազային և մասնագիտական կրթություն ստանալու, աշխատանքի տեղավորվելու հնարավորություն, սոցիալական վերականգնում, լիարժեք կյանք՝ նպաստելով նրա ինքնավստահության ամրապնդմանը, դյուրացնելով նրա մասնակցությունը հասարակական կյանքին: Նման երեխաները կարող են իրենց ցանկությամբ սովորել հանրակրթական դպրոցներում: Պետությունը և նրա համապատասխան մարմինները նրանց համար ստեղծում են հատուկ մանկատներ, գիշերօթիկ հաստատություններ, իրականացնում են հաշմանդամ երեխաների բուժման հետևանքով նրանց թվաքանակը նվազեցնող սոցիալ-տնտեսական միջոցառումներ, կազմակերպում են հաշմանդամ երեխաների կենսագործունեության համար անհրաժեշտ տեխնիկական սարքերի արտադրությունը և դրանց ձեռքբերումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ հաշմանդամ երեխաներն ունեն հաշմանդամության սայլակների, հատուկ պրոթեզաօրթոպեդիկ կոշիկների ու բոլոր տեսակի

պրոթեզային իրերի (բացի թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզներից) և հաշմանդամ երեխաների կենսագործունեության համար անհրաժեշտ տեխնիկական այլ սարքերի (առարկաների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունք՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Հաշմանդամ և կերակրողին կորցրած երեխան ունի կենսաթոշակ ստանալու իրավունք, որի նշանակման և վճարման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Երեխան ունի նպաստ ստանալու իրավունք, որի նշանակման և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Արտակարգ իրավիճակներում հայտնված երեխային պետությունը տրամադրում է անհապաղ և անվճար օգնություն, միջոցներ է ձեռնարկում վտանգավոր գոտուց նրան տեղափոխելու, ընտանիքի հետ վերամիավորելու, անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար: Պետությունն ու նրա համապատասխան մարմինները ապահովում են արտակարգ իրավիճակներում հայտնված երեխայի սոցիալական պաշտպանվածությունը՝ հոգալով նրա առաջնահերթ կարիքները: Արգելվում է երեխային ներգրավել ռազմական գործողություններին, զինված ընդհարումներին, ինչպես նաև՝ երեխաների շրջանում պատերազմի և բռնության քարոզչությունը, մանկական ռազմականացված միավորումների ստեղծումը: Արգելվում է մինչև 15 տարեկան երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին: Զինված հակամարտությունների ժամանակ պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի հատուկ պաշտպանությունը:

Ռազմական գործողությունների և այլ ընդհարումների հետևանքով բնակելի տարածությունից և անձնական գույքից զրկված փախստական երեխան ունի իր շահերի պաշտպանության իրավունք: Պետությունը և նրա համապատասխան մարմինները միջոցներ են ձեռնարկում երեխայի ծնողների կամ հարազատների որոնման ուղղությամբ, ցուցաբերում են նյութական, բժշկական և այլ օգնություն, անհրաժեշտության դեպքում նրան տեղավորում են բուժկանխարգելիչ, գիշերօթիկ կամ այլ հաստատություններում:

Երեխան ունի անձի անձեռնմխելիության իրավունք, որը պաշտպանվում է օրենքով: Երեխային չի կարելի ձերբակալել, խուզարկել կամ կալանավորել այլ կերպ, քան սահմանված է օրենքով: Երեխայի ձերբակալման կամ կալանավորման մասին անհապաղ հայտնվում է

ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին: Ազատազրկման դատապարտված յուրաքանչյուր երեխա ունի օրենքով սահմանված կարգով ազատազրկման դատավճիռը բողոքարկելու իրավունք: Արգելվում է երեխային չափահասների հետ միասին կալանքի տակ պահելը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում երեխային քրեական պատասխանատվության ենթարկելիս փաստաբանի (հոգեբանի, մանկավարժի) ներկայությունը հետաքննության, նախաքննության և դատաքննության ընթացքում պարտադիր է:

Երեխան պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ծնողների կամ մերձավոր ազգականների դեմ: Արգելվում է որպես վկա ցուցմունքներ վերցնելու կամ սեփական հանցանքը խոստովանելու համար երեխայի նկատմամբ բռնության, սպառնալիքի և այլ ապօրինի գործողությունների կիրառումը:

Երեխային հատուկ դաստիարակչական հաստատություն է ուղարկում միայն դատարանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացմամբ: Երեխան առանց օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական հաստատություն կարող է հոսպիտալացվել միայն դատարանի վճռով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Հատուկ դաստիարակչական կամ բուժկանխարգելիչ կամ հոգեբուժական հաստատություններում գտնվող երեխան ունի հարգալից վերաբերմունքի, առողջության պահպանման, համապատասխան կրթության և մասնագիտական պատրաստության, ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների, հարազատների և այլ անձանց հետ տեսակցության և նամակագրության իրավունք: Հատուկ դաստիարակչական հաստատության խնդիրն է երեխային ուղղելը և վերադաստիարակելը:

Գլուխ III
Հաշմանդամների սոցիալական իրավունքները

1. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքով: Բացի նշվածից, հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին օրենսդրությունը բաղկացած է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, այլ օրենքներից և իրավական ակտերից:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը:

Օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

հաշմանդամ՝ անձ, որը, առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն.

կենսագործունեության սահմանափակումներ՝ անձի ինքնասպասարկման ապահովման ունակության, ինքնուրույն տեղաշարժվելու, կողմնորոշվելու, հաղորդակցվելու, սեփական վարքը հսկելու, ուսումնառելու և աշխատանքային գործունեությամբ զբաղվելու (երեխաների համար՝ նաև խաղալու) կարողությունների կամ հնարավորությունների լրիվ կամ մասնակի կորուստ (ներառյալ՝ վերականգնման տեխնիկական միջոցների և այլ օժանդակ պարագաների օգտագործմամբ տեղաշարժվելը, տեսնելը, լսելը և (կամ) խոսելը).

վերականգնման տեխնիկական միջոցներ և այլ օժանդակ պարագաներ՝ կենսագործունեության սահմանափակումների լրիվ կամ մասնակի հաղթահարման, փոխարինման (փոխհատուցման) համար նախատեսված հատուկ սարքեր և տեխնիկական միջոցներ (սայլակներ,

քայլակներ, լսողական ապարատներ, օրթեզներ, պրոթեզներ, հենակներ, ձեռնափայտեր և այլն).

բժշկասոցիալական փորձաքննություն՝ հիվանդության, խեղման կամ վնասվածքի հետևանքով օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումներով պայմանավորված՝ կենսագործունեության սահմանափակումների գնահատման հիման վրա հաշմանդամության սահմանումը, ինչպես նաև հաշմանդամի վերականգնման և սոցիալական պաշտպանության տեսակների որոշումը.

կենսագործունեության միջավայրի մատչելիության ապահովում՝ հաշմանդամների կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու նպատակով և նրանց կարիքները հաշվի առնելով՝ բնակելի և հասարակական շենքերի, փողոցների, բժշկական, արտադրական, ուսումնական, մշակութային, մարզական և այլ շինությունների նախագծումը, կառուցումը և վերակառուցումը, ինչպես նաև հասարակական տրանսպորտի միջոցների հարմարեցումը.

հաշմանդամների սոցիալական պաշտպանություն՝ տնտեսական, սոցիալական և իրավական միջոցառումների համակարգ, որը հաշմանդամների համար ապահովում է կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու, փոխարինելու (փոխհատուցելու) պայմաններ և ուղղված է հասարակական կյանքում նրանց մասնակցության համար մյուս քաղաքացիներին համարժեք հնարավորությունների ապահովմանը:

2. Հաշմանդամների իրավունքները և պարտականությունները

Հաշմանդամներն ունեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված նույն իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչպես այլ անձինք:

Օրենքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու ազատությունները տարածվում են նաև օրենսդրությամբ սահմանված կարգով փախստականի կարգավիճակ ունեցող անձանց վրա:

Հաշմանդամների իրավունքները և պարտականությունները կարող են վերացվել կամ փոփոխվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված դեպքերում և կարգով, եթե դրանց իրացումն անհնար է հաշմանդամի կենսագործունեության սահմանափակման պատճառով:

Հաշմանդամների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ոտնահարման համար մեղավոր պաշտոնատար անձինք և քաղաքացիները ենթակա են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող գործատուի (անկախ սեփականության ձևից) մեղքով աշխատանքային խեղում կամ մասնագիտական հիվանդություն ստացած և սահմանված կարգով հաշմանդամ ճանաչված քաղաքացիների աշխատունակության կորստի հետ կապված նպաստների, առողջարանային բուժման, նրանց տրանսպորտային միջոցներով, թիկնասայլակներով, պրոթեզային իրերով և այլ տեխնիկական միջոցներով ապահովելու ծախսերի հատուցումը կատարվում է գործատուի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվող կարգով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, որոնք մասնակցում են հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության իրականացմանը (հաշմանդամներին ցույց տրվող սոցիալական օգնության միջոցառումների ֆինանսավորում, հաշմանդամների համար նախատեսված տեխնիկական և այլ միջոցների արտադրություն, ծառայությունների տրամադրում, հաշմանդամներին սպասարկող սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների շինարարություն և սպասարկում, գերազանցապես հաշմանդամների աշխատանքն օգտագործող արտադրությունների կազմակերպում և այլն), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվում են հարկման և այլ արտոնություններից:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) ապահովում է հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտի պետական քաղաքականության իրականացումը.

բ) պետական բյուջեի կազմում Ազգային ժողով է ներկայացնում հաշմանդամների սոցիալական պաշտպանության տարեկան ծրագիրը.

գ) հաստատում է հաշմանդամների վերականգնման բազային ծրագիրը և դրա իրականացման կարգը.

դ) սահմանում է հաշմանդամների բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնելու և վերականգնման անհատական ծրագրերը կազմելու, ինչպես նաև բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների գործունեության կարգերը.

ե) սահմանում է բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչները և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշները.

զ) սահմանում է սոցիալական ծառայությունների, վերականգնման տեխնիկական միջոցների պետական ստանդարտները, ինչպես նաև հաշմանդամների համար կենսագործունեության միջավայրի մատչելիությունն ապահովող նորմերը և կանոնները.

է) աջակցում է հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին.

ը) սահմանում է հաշմանդամների առանձին խմբերին օրենքով նախատեսված նպաստների և արտոնությունների տրամադրման կարգերը.

թ) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը օրենսդրությամբ սահմանված կարգով՝

ա) իրականացնում է հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտի պետական քաղաքականությունը.

բ) վերահսկում է հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին օրենսդրության պահանջների կատարումը.

գ) մշակում է Տարեկան ծրագիրը և մասնակցում դրա իրականացմանը.

դ) մշակում է հաշմանդամների վերականգնման բազային ծրագիրը և ապահովում դրա իրականացումը.

ե) հաստատում է բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների կազմը, համակարգում և ապահովում է դրանց գործունեությունը.

զ) համակարգում և վերահսկում է հաշմանդամների վերականգնման ոլորտի կազմակերպությունների գործունեությունը.

է) ապահովում է հաշմանդամների բժշկասոցիալական փորձաքննության և վերականգնման ոլորտի մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը.

ը) աջակցում է հաշմանդամության և հաշմանդամների հարցերի վերաբերյալ կատարվող գիտական հետազոտությունների իրականացմանը.

թ) հաշմանդամների սոցիալական պաշտպանության հարցերի վերաբերյալ մշակում է մեթոդական փաստաթղթեր.

ժ) համագործակցում է հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ.

ժա) իրականացնում է այլ լիազորություններ.

ժբ) ստեղծում է հաշմանդամների տվյալների բանկ:

Բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնում են բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները, որոնց կազմավորման և գործունեության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Իրենց լիազորությունների շրջանակում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների ընդունած որոշումները պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց, կազմակերպությունների համար ենթակա են պարտադիր կատարման՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների որոշումները՝ անձին հաշմանդամ ճանաչելու կամ չճանաչելու, ինչպես նաև հաշմանդամության այս կամ այն խումբը, հաշմանդամ երեխայի կարգավիճակը սահմանելու վերաբերյալ, կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով: Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների գործունեության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմիններն օրենսդրությամբ սահմանված կարգով՝

ա) որոշում են անձի կենսագործունեության սահմանափակման բնույթն ու աստիճանը և վերականգնողական ներուժը.

բ) անձին ճանաչում են հաշմանդամ, սահմանում են հաշմանդամության խումբը, հաշմանդամ երեխայի կարգավիճակը, որոշում են հաշմանդամության պատճառական կապը, ժամկետը և վաղեմությունը.

գ) որոշում են սոցիալական պաշտպանության միջոցառումների տեսակներից, ձևերից և ծավալներից հաշմանդամի կարիքները, մշակում և հաստատում են հաշմանդամի անհատական վերականգնողական ծրագիրը.

դ) բժշկասոցիալական փորձաքննություն անցնող անձանց անհրաժեշտության դեպքում ուղեգիր է տալիս լրացուցիչ հետազոտությունների.

ե) որոշում են անձի մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանը աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջությանը հասցված այլ վնասի դեպքում, թույլատրում են երկարաձգել ժամանակավոր անաշխատունակության թերթիկի ժամկետը.

զ) աշխատանքային խեղումների և մասնագիտական հիվանդությունների դեպքերում գործատուներից ստանում են անհրաժեշտ տվյալներ համապատասխան անձանց աշխատանքի բնույթի և պայմանների վերաբերյալ.

է) որոշում են տուժած անձանց մահվան պատճառական կապը արտադրական խեղման, մասնագիտական հիվանդության, ռազմաճակատում գտնվելու, զինվորական ծառայության և այլ հանգամանքների հետ.

ը) վերահսկում են վերականգնողական միջոցառումների իրականացումը և հաշմանդամների աշխատանքային պայմանների համապատասխանությունն օրենսդրության պահանջներին.

թ) ուսումնասիրում են հաշմանդամության վիճակը և առաջացման պատճառները.

ժ) մասնակցում են հաշմանդամության կանխարգելման, հաշմանդամների բժշկասոցիալական վերականգնման ծրագրերի մշակման աշխատանքներին.

ժա) մասնակցում է բժշկասոցիալական փորձաքննություն անցած անձանց տվյալների բանկի ստեղծմանը.

3. Անձին հաշմանդամ ճանաչելու կարգը

Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինն անձին հաշմանդամ է ճանաչում օրենքի պահանջներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան՝ ելնելով բժշկասոցիալական փորձաքննության արդյունքներից:

Հաշմանդամության պատճառ կարող են լինել՝

ա) մանկուց հիվանդությունը.

բ) ընդհանուր հիվանդությունը.

գ) աշխատանքային խեղումը կամ վնասվածքը.

դ) մասնագիտական հիվանդությունը.

ե) բնական, տեխնածին և այլ աղետները, ինչպես նաև դրանց վերացման աշխատանքների ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը.

զ) Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարի և այլ ճառագայթային աղետների վերացման աշխատանքների ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը.

է) Հայրենական մեծ պատերազմի և այլ պետություններում մարտական գործողությունների ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը.

ը) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը.

թ) զինվորական ծառայության ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը.

ժ) զինվորական պարտականությունները կատարելիս ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը.

ժա) օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերը:

Նշված համապատասխան պատճառական կապով որևիցե աստիճանի կենսագործունեության սահմանափակման հայտնաբերման դեպքում տվյալ անձը ճանաչվում է հաշմանդամ: Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին տրվում է հաշմանդամության խումբ (1-ին, 2-րդ և 3-րդ խումբ), իսկ մինչև 18 տարեկան երեխաներին հաշմանդամ երեխայի կարգավիճակ:

Հաշմանդամության խումբը կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակը տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան՝ տվյալ աստիճանի կենսագործունեության սահմանափակման համար սահմանված ժամկետով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի սահմանման չափորոշիչները բխում են երեխայի զարգացման և կառուցվածքային-գործառնական առանձնահատկություններից:

Օրենքով տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան՝ վերականգնման ոչ ենթակա կենսագործունեության սահմանափակում ունեցող անձանց հաշմանդամության խմբերը սահմանվում են անժամկետ: Հաշմանդամի վերափորձաքննությունը կատարվում է հաշմանդամության խմբի կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալու, նրա առողջական վիճակը վատթարանալու, նրա՝ բժշկասոցիալական փորձաքննության որոշման համար հիմք հանդիսացող

փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու կամ հաշմանդամության սահմանման կարգի խախտման դեպքերում, ինչպես նաև նրա (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի համաձայն կամ դատարանի որոշմամբ:

Անժամկետ հաշմանդամ ճանաչված հաշմանդամի վերափորձաքննությունը կատարվում է նրա՝ բժշկասոցիալական փորձաքննության որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու, նրա հաշմանդամության խմբի որոշման սահմանված կարգի խախտման դեպքերում, ինչպես նաև նրա (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի համաձայն կամ դատարանի որոշմամբ:

4. Հաշմանդամության կանխարգելումը

Հաշմանդամության կանխարգելումը ներառում է բնակչության առողջ կենսաձևի ապահովման, բնապահպանական անվտանգության, աշխատանքի անվտանգ պայմանների ստեղծման, հիվանդների ժամանակին բուժման և ժառանգական հիվանդությունների կանխման սոցիալ-տնտեսական համալիր միջոցառումների համակարգ, որը մշակվում և իրականացվում է պետական իշխանության և կառավարման շահագրգիռ մարմինների կողմից՝հաշմանդամների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հաշմանդամների վերականգնումը ներառում է բժշկական, մասնագիտական և սոցիալական միջոցառումներ, որոնք ուղղված են հաշմանդամի կենսագործունեության սահմանափակման վերացմանը կամ հնարավորինս փոխհատուցմանը: Վերականգնողական միջոցառումներն իրականացվում են հաշմանդամի առողջության, աշխատունակության և սոցիալական կարգավիճակի վերականգնման նպատակով, որը նպաստում է հաշմանդամի նյութական և սոցիալական անկախությանը, հասարակական կյանքին համակողմանի մասնակցությանը և իրավահավասարությանը:

Բժշկական վերականգնումը տարբեր հիվանդությունների, վնասվածքների, ֆիզիկական և մտավոր և այլ խանգարումների բուժման միջոցառումների համակարգն է հաշմանդամության հանգեցրած խեղումների և հիվանդությունների զարգացումն ու ծանրացումը կանխելու նպատակով: Բժշկական վերականգնումը ներառում է վերականգնողական բուժումը, վերակառուցողական վիրաբուժությունը, պրոթեզաօրթոպեդիկ օգնությունը, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովումը, որոնք իրականացվում են հիվանդանոցային, ամբուլատոր կամ առողջարանային բուժման միջոցով: Բժշկական վերականգնումն

իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համակարգի մարմինների, գերատեսչական, ապահովագրական, բարեգործական և այլ բուժական հիմնարկների կողմից:

Մասնագիտական վերականգնումը հաշմանդամների կորցրած կամ նվազած մասնագիտական ունակությունների վերականգնումն է, մասնագիտության ընտրությունն ու նախկին կամ նոր մասնագիտությամբ աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով հաշմանդամների համար համապատասխան պայմանների ստեղծումը: Մասնագիտական վերականգնումը ներառում է մասնագիտական կողմնորոշումը, մասնագիտական կրթությունը, մասնագիտական հարմարվողականությունը և աշխատանքի տեղավորման գործընթացը: Մասնագիտական վերականգնումը իրականացվում է հաշմանդամի վերականգնողական անհատական ծրագրին համապատասխան:

Սոցիալական վերականգնումը սոցիալական, սոցիալ-հոգեբանական, մանկավարժական, իրավական և տնտեսական միջոցառումների համակարգ է, որն ուղղված է հաշմանդամի համար հասարակական կյանքի բոլոր բնագավառներում մյուս քաղաքացիներին հավասար հնարավորություններ ստեղծելուն: Սոցիալական վերականգնումը ներառում է սոցիալ-միջավայրային կողմնորոշումը և սոցիալ-կենցաղային հարմարեցումը:

Հաշմանդամների վերականգնման բազային ծրագիրը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող, հաշմանդամներին անվճար տրամադրվող նվազագույն վերականգնողական միջոցառումների, մատուցվող ծառայությունների, հատկացվող տեխնիկական և օժանդակ միջոցների երաշխավորված ցանկ է: Հաշմանդամների վերականգնողական բազային ծրագիրը և դրա իրականացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հաշմանդամների բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնումն իրականացվում է բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի հաստատած, հաշմանդամների վերականգնողական բազային ծրագրին համապատասխան մշակած վերականգնողական անհատական ծրագրով: Վերականգնողական անհատական ծրագրում սահմանվում են վերականգնողական միջոցառումների ծավալները, տեսակները և ժամկետները, սոցիալական օգնության տեսակները, աշխատանքային անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև գործունեության սահմանափակվածությամբ պայմանավորված հատուկ տեխնիկական միջոցների և ծառայությունների տեսակները:

Հաշմանդամ քաղաքացու համար վերականգնողական անհատական ծրագիրն ունի երաշխավորական բնույթ: Հաշմանդամն իրավունք

ունի հրաժարվելու վերականգնողական անհատական ծրագրով նախատեսված վերականգնողական միջոցառման տեսակից, ձևից և ծավալից, ինչպես նաև ամբողջ ծրագրի իրականացումից:

Վերականգնողական անհատական ծրագիրը համապատասխան մարմինների կողմից ենթակա է պարտադիր կատարման: Վերականգնողական անհատական ծրագիրն իրագործվում է սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների միջոցով: Վերականգնողական անհատական ծրագրի իրագործումը համակարգում է լիազորված մարմինը:

Հաշմանդամներին երաշխավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին որակյալ անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն պետական բժշկական հիմնարկներում: 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխաները, ըստ դեղատոմսերի, ապահովվում են անվճար դեղորայքով, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 50 տոկոս զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից: Հաշմանդամներն իրավունք ունեն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում և դեղատներում առաջնահերթ կարգով ապահովվելու սպասարկմամբ:

5. Հաշմանդամների կրթությունն ու մասնագիտական ուսուցումը

Պետությունը հաշմանդամների համար երաշխավորում է կրթության և մասնագիտական ուսուցման իրավունք, ինչպես նաև պատրաստում է դրա համար անհրաժեշտ մանկավարժական կադրեր:

Կրթության պետական համակարգի մարմինները սոցիալական ապահովության և առողջապահության մարմինների հետ համատեղ հաշմանդամի վերականգնման անհատական ծրագրին համապատասխան ապահովում են հաշմանդամ երեխաների նախադպրոցական դաստիարակությունը, հաշմանդամների միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Նախադպրոցական տարիքի հաշմանդամ երեխաների դաստիարակության և անհրաժեշտ վերականգնողական օգնության համար առավել բարենպաստ հնարավորություններ ստեղծելու նպատակով ընդհանուր տիպի մանկական նախադպրոցական հիմնարկներում նրանց համար ստեղծվում են հատուկ պայմաններ: Այն հաշմանդամ երեխաների համար, որոնց առողջական վիճակը թույլ չի տալիս նրանց դաստիարակու-

թյունն իրականացնել ընդհանուր տիպի նախադպրոցական հիմնարկներում, ստեղծվում են հատուկ նախադպրոցական հիմնարկներ: Ընդհանուր կամ հատուկ նախադպրոցական հիմնարկներում հաշմանդամ երեխաների դաստիարակության դեպքում, նրանց ծնողների համաձայնությամբ, այն կարող է իրականացվել տնային պայմաններում: Նման դեպքերում ծնողներից մեկին կամ նրան փոխարինող անձին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում են նյութական ապահովություն և արտոնություններ:

Համապատասխան կրթօջախները և նախադպրոցական հիմնարկները հաշմանդամ երեխաների ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց օգնություն են ցույց տալիս տնային պայմաններում նրանց դաստիարակությունն իրականացնելու գործում: Օգնության ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներում:

Հաշմանդամների միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթությունն իրականացվում է ընդհանուր տիպի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ուսումնական հաստատություններում: Ընդունելության քննությունների ընթացքում հաշմանդամների և մյուս դիմորդների համար հավասար պայմաններ ստեղծելու նպատակով իրականացվում են համապատասխան միջոցառումներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած հաշմանդամները այլ հավասար պայմանների դեպքում օգտվում են պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվելու առաջնահերթ իրավունքից: Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում: Պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե 18 տարին լրանալուց հետո չեն ճանաչվել հաշմանդամ:

Պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող անձինք

ուսումնառության ընթացքում հաշմանդամ երեխայի կամ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակ ստանալու դեպքում տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության անվճար համակարգ: Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում հաշմանդամ ուսանողն ուսումնական հաստատության վարչակազմ պետք է ներկայացնի իր հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթ: Պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Նրանց թվից ցերեկային ուսուցման հաշմանդամներին, հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից:

Ուսումնական պարապմունքներ կազմակերպվում են նաև բուժկան-խարգելիչ կամ վերականգնողական հիմնարկներում բուժման կուրս անցնող հաշմանդամ երեխաների համար: Ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներում: Հաշմանդամների մասնագիտական ուսուցումը, վերաորակավորումը և որակավորման բարձրացումն իրականացվում են վերականգման անհատական ծրագրերին համապատասխան՝ մասնագիտացված կամ ընդհանուր տիպի ուսումնական հաստատություններում, ձեռնարկություններում (այդ թվում՝ ուսումնաարտադրական) և կազմակերպություններում: Ուսումնական պարապմունքների ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներում:

Մասնագիտական նախապատրաստման, վերաորակավորման և որակավորման բարձրացման ընթացքում հաշմանդամների նյութական ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվող կարգով: Պետությունն ապահովում է հաշմանդամների տեղեկություններ ստանալու ազատությունը: Պետության կողմից շարժուձևերի լեզուն ընդունվում է որպես անձնական շփման, ուսման և թարգմանչական ծառայությունների տրամադրման միջոց: Տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար երաշխավորվում է Բրայլի համակարգով կատարվող ուսուցման ապահովումը, լսողական միջոցների և խոշոր տառատեսակների մատչելիությունը, ներառյալ՝ ուշ տարիքում տեսողությունը կորցրած անձանց Բրայլի համակարգով լրացուցիչ ուսուցումը:

Մտավոր թերություններ ունեցող անձանց համար կազմակերպվում է լեզվի մատչելի ըմբռնման ուսուցման համակարգ: Խոսակցական խանգարումներով անձանց տրամադրվում են հաղորդակցման տեխնիկական միջոցներ: Հաշմանդամների հասարակական կազմակերպությունները սեփական միջոցների հաշվին և կանոնադրական խնդիրների շրջանակներում կարող են տրամադրել նաև անձնական շփման և հաղորդակցման այլ միջոցներ: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնած հեռուստառադիոընկերություններն օրենքով սահմանված եթերաժամանակով ապահովում են մանկական և լրատվական հեռուստահաղորդումների սուրդոթարգմանությամբ հեռարձակումը:

6. Հաշմանդամների աշխատանքային իրավունքների երաշխիքը

Հաշմանդամների ստեղծագործական և արտադրական ընդունակությունների իրականացման նպատակով և վերականգնման անհատական ծրագրերին համապատասխան հաշմանդամներն ապահովվում են աշխատանքի սովորական պայմաններ ունեցող ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում, հաշմանդամների աշխատանքը կիրառող մասնագիտացված (այդ թվում՝ ուսումնաարտադրական) ձեռնարկություններում, արտադրամասերում և տեղամասերում աշխատելու, ինչպես նաև ձեռնարկատիրական և օրենքով չարգելված այլ գործունեությամբ զբաղվելու իրավունքով:

Անթույլատրելի են հաշմանդամության պատճառով հաշմանդամի հետ աշխատանքային պայմանագրի կնքման կամ պաշտոնի բարձրացման մերժումը, ադմինիստրացիայի նախաձեռնությամբ աշխատանքից հեռացումը կամ այլ աշխատանքի փոխադրումը, բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկաաշխատանքային փորձաքննության մարմինների եզրակացությամբ նրա առողջական վիճակը խոչընդոտում է մասնագիտական պարտականությունների կատարմանը կամ սպառում է այլ անձանց առողջությանը և աշխատանքի անվտանգությանը: Ադմինիստրացիային չի թույլատրվում աշխատանքից հեռացնել համապատասխան հիմնարկներում բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնում ստացող անձանց:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշմանդամի աշխատանքային զբաղվածության երաշխիքներն ապահովվում են՝

ա) հաշմանդամների աշխատուժն օգտագործող կազմակերպությունների, հիմնարկների, ինչպես նաև հաշմանդամների հասարակական կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ ֆինանսատնտեսական քաղաքականության իրականացմամբ.

բ) կազմակերպություններում հաշմանդամներին աշխատանքի ընդունելու համար քվոտաների և հաշմանդամների համար՝ օրենսդրությամբ սահմանված միջոցառումների իրականացմամբ.

գ) հաշմանդամներին առավել համապատասխանող մասնագիտություններով աշխատանքային տեղերի վերապահմամբ.

դ) հաշմանդամների համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման խրախուսմամբ.

ե) հաշմանդամին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուին հաշմանդամին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցմամբ:

Հաշմանդամների զբաղվածության ապահովման պետական երաշխիքների իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են «Բնակչության զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Բոլոր կարգի գործատուների մոտ զբաղված հաշմանդամների համար վերականգնման անհատական ծրագրին համապատասխան ստեղծվում են աշխատանքի անհրաժեշտ պայմաններ: Կոլեկտիվ կամ անհատական աշխատանքային պայմանագրով սահմանվող պայմանները, այդ թվում՝ աշխատանքի վարձատրությունը, աշխատանքային և հանգստի ժամանակի ռեժիմը, տարեկան և լրացուցիչ արձակուրդների տևողությունը չեն կարող վատթարացնել հաշմանդամի վիճակը կամ սահմանափակել նրա իրավունքներն այլ աշխատողների համեմատությամբ:

Հաշմանդամի ներգրավումն արտաժամյա, ոչ աշխատանքային օրերի կամ գիշերային աշխատանքներում թույլատրվում է միայն նրանց համաձայնությամբ և պայմանով, եթե նման աշխատանքները բժշկական եզրակացությամբ նրանց արգելված չեն: 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների համար սահմանվում է աշխատաժամերի կրճատված տևողություն՝ շաբաթական 36 ժամից ոչ ավելի:

Հաշմանդամների պահանջով և վերականգման անհատական ծրագրերին համապատասխան գործատուն պարտավոր է նրանց համար սահմանել ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ: Նման դեպքերում հաշմանդամների աշխատանքի վարձատրությունը կատարվում է՝ ելնելով փաստացի աշխատած աշխատաժամանակից կամ թողարկված արտադրանքի քանակից:

Աշխատանքի ընդունելիս հաշմանդամների համար փորձաշրջան չի սահմանվում: Աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման ժամանակ աշխատանքի հավասար արտադրողականության և նույն որակավորման դեպքում հաշմանդամներն օգտվում են աշխատանքում մնալու առավելությունից: Պետական իշխանության և կառավարման տեղական մարմինները հաշմանդամների ձեռնարկատիրական գործունեության (այդ թվում՝ տնային պայմաններում) կազմակերպման համար ստեղծում են անհրաժեշտ պայմաններ՝ այդ նպատակներով ոչ բնակելի տարածությունների արտահերթ տրամադրման, ինչպես նաև հումքի ձեռք բերման և արտադրանքի իրացման գործում օժանդակություն ցույց տալու միջոցով: Աշխատանքային գործունեությամբ զբաղվող հաշմանդամները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվում են եկամուտների հարկման և այլ արտոնություններից:

7. Հաշմանդամների համար սոցիալական ենթակառուցվածքի մատչելիության ապահովման պայմանների ստեղծումը

Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը: Չի թույլատրվում բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառուցվածքների, ներառյալ՝ օդանավակայանների և երկաթուղային կայանների շինարարությունն ու վերակառուցումը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների, այդ թվում՝ անհատական, կապի և տեղեկատվության միջոցների մշակումն ու արտադրությունը, եթե դրանք հաշմանդամների մատչելիության և օգտագործման համար հարմարեցված չեն: Տրանսպորտի, կապի, տեղեկատվության միջոցները և սոցիալական ենթակառուցվածքի մյուս օբյեկտները պետք է հարմարեցվեն հաշմանդամների պահանջմունքների բավարարմանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, պայմաններով և

ժամկետներում: Այն դեպքում, եթե նշված օբյեկտները հնարավոր չէ հարմարեցնել հաշմանդամների օգտագործմանը, համապատասխան իրավասու պետական մարմինները հաշմանդամների պահանջմունքների բավարարման նպատակով պետք է մշակեն և իրականացնեն անհրաժեշտ միջոցառումներ հաշմանդամների կամ իրենց կազմում հաշմանդամ ունեցող ընտանիքների կողմից զբաղեցրած բնակելի շինությունները, հաշմանդամի վերականգնման անհատական ծրագրին համապատասխան, պետք է սարքավորվեն հատուկ միջոցներով և հարմարանքներով: Նշված բնակելի շինությունների սարքավորումն իրականացվում է պետական իշխանության տեղական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների, այդ թվում՝ հաշմանդամների աշխատանքը կիրառող մասնագիտացված ուսումնաարտադրական ձեռնարկությունների կողմից, որոնց տնօրինության տակ է գտնվում բնակելի ֆոնդը:

Անհատական բնակելի տների սարքավորումն իրականացվում է պետական իշխանության տեղական մարմինների կողմից, հաշմանդամների հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Նշված միջոցառումների ֆինանսավորումն իրականացվում է բնակելի ֆոնդի ընթացիկ և կապիտալ վերանորոգման համար հատկացվող միջոցների հաշվին: Այդ նպատակների համար կարող են օգտագործվել նաև հասարակական բարեգործական կազմակերպությունների միջոցները: Հաշմանդամների կարիքների բավարարման նպատակով տրանսպորտային միջոցների պատրաստման և վերասարքավորման ծրագրի իրականացման հիմնական սկզբունքներն ու լրացուցիչ պահանջները մշակվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Ծրագրում պետք է նախատեսվեն.

ա) երկաթուղային, ավտոբուսային հանգուցային կայանների և օդանավակայանների վերասարքավորման և հաշմանդամներին մատչելի դարձնելու ժամկետները,

բ) հաշմանդամներին փոխադրող (այդ թվում՝ հաշմանդամային սայլակներով) տրանսպորտային միջոցների հատուկ հարմարանքներ,

գ) երթևեկության նախապես սահմանված գրաֆիկներով հատուկ երթուղիներ,

դ) տրանսպորտային միջոցների կանգառներ՝ հաշմանդամների պահանջով:

Պետական իշխանության և կառավարման տեղական մարմինները պետք է ապահովեն հաշմանդամների համար մշակութային հիմնարկների և մարզական կառույցների մատչելիությունը և դրանցից օգտվելու

համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և հատուկ մարզական գույքի տրամադրումը:

Հաշմանդամների վերոհիշյալ ծառայություններից օգտվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվող արտոնյալ պայմաններով: Հայաստանի Հանրապետության կապի նախարարությունն ապահովում է հաշմանդամների սպասարկման համար անհրաժեշտ պայմաններ՝ հատուկ հեռուստահաղորդակցման միջոցների, իսկ լսողության խանգարումներ ունեցող բաժանորդների համար՝ հատուկ հեռախոսային սարքերի և կոլեկտիվ օգտագործման խոսակցական կետերի ներդրմամբ: Իրենց կազմում 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ունեցող ընտանիքները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով օգտվում են հեռախոսների, իսկ հաշմանդամները՝ հատուկ կառուցվածքի հեռախոսների արտահերթ և անվճար տեղադրման իրավունքից:

8. Հաշմանդամներին ցույց տրվող սոցիալական օգնությունը

Պետությունը երաշխավորում է հաշմանդամների սոցիալական օգնությունը, որը կարող է իրականացվել դրամական վճարումների (կենսաթոշակներ, նպաստներ, միանվագ վճարումներ) ձևով, տեխնիկական և այլ միջոցների ապահովմամբ (ներառյալ՝ ավտոմեքենաներ, թիկնասայլակներ, պրոթեզաօրթոպեդիկ սարքեր, հատուկ տառատեսակներով տպագիր արտադրանք, ձայնի ուժեղացուցիչ սարքավորումներ և ազդանշանային համակարգեր), ինչպես նաև հաշմանդամների կենցաղային սպասարկման և բժշկական, մասնագիտական սոցիալական վերականգնման ծառայությունների տրամադրմամբ:

Հաշմանդամների կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Յուրաքանչյուր տարի պետական բյուջեով նախատեսվում են միջոցներ հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, «Խոսող գրքերի» ձայնագրության, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած անձանց Բրայլի համակարգով լրացուցիչ ուսուցման համար: Տեխնիկական կամ այլ միջոցները հաշմանդամներին տրամադրվում են վերականգնման անհատական ծրագրին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Վերականգնման անհատական ծրագրին համապատասխան տրանսպորտային միջոց ստացած հաշմանդամին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով վճարվում է փոխհատուցում այդ միջոցի տեխնիկական արտահերթ սպասարկման և նորոգման համար, արտահերթ տրամադրվում է վառելանյութ: Տեխնիկական կամ այլ միջոցները հաշմանդամներին տրամադրվում են վերականգնման անհատական ծրագրին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Վերականգնման անհատական ծրագրին համապատասխան տրանսպորտային միջոց ստացած հաշմանդամին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով վճարվում է փոխհատուցում այդ միջոցի տեխնիկական արտահերթ սպասարկման և նորոգման համար, արտահերթ տրամադրվում է վառելանյութ: Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշմանդամներն ունեն հատուկ պրոթեզաօրթոպեդիկ կոշիկների և բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացառությամբ թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունք՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: Բնակտարածությունների բաշխման ընթացքում պետական իշխանության տեղական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, այդ թվում՝ հաշմանդամների աշխատանքը կիրառող մասնագիտացված ուսումնաարտադրական ձեռնարկությունները հաշվի են առնում հաշմանդամների պահանջները կապված նրանց աշխատանքի կամ հարազատների բնակության վայրին, վերականգնողական հիմնարկին կամ կենցաղային սպասարկման օբյեկտներին մոտ լինելու հանգամանքի հետ:

Հաշմանդամների սոցիալական սպասարկման ծառայությունները իրականացվում են բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում կամ տնային պայմաններում: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում բնակվող հաշմանդամներն օգտվում են օրենքներով հաշմանդամների համար նախատեսված իրավունքներից և արտոնություններից: Տնային պայմաններում հաշմանդամին տրամադրվում են կենցաղային և առաջնային բժշկական օգնություն, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն: Հաշմանդամների՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկման և խնամքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9. Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկումը բարելավելու կարգը

Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկումը բարելավելու ծրագրի հիմնական նպատակներն են՝

ա) միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկման բարելավումն ու ընդլայնումը.

բ) տնային պայմաններում սոցիալական սպասարկման հարցերով զբաղվող առանձին կազմակերպությունների աշխատանքների համակարգումը (տեղեկանքը կցվում է).

գ) տնային պայմաններում սոցիալական սպասարկման կարիք ունեցող բոլոր միայնակ տարեցների և հաշմանդամների համար սպասարկման անհրաժեշտ մակարդակի ապահովումը.

դ) տնային պայմաններում կենցաղային, իրավաբանական, բժշկական և սոցիալ-հոգեբանական օգնության կազմակերպումը՝ ապահովելով սոցիալական սպասարկման մատչելիությունը:

Տնային պայմաններում սոցիալական սպասարկումն իրականացվում է ինքնասպասարկման և տեղաշարժման ունակության սահմանափակման հետևանքով իրենց հիմնական կենսական պահանջները բավարարելու հնարավորությունից մասամբ կամ լրիվ զրկված հետևյալ անձանց համար՝

- ✓ 75-ից բարձր տարիք ունեցող, միայնակ բնակվող քաղաքացիներ.
- ✓ միայնակ բնակվող 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներ.
- ✓ 75-ից բարձր տարիք ունեցող քաղաքացիներից կամ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներից բաղկացած ընտանիքներ, որոնց կազմում չկան չափահաս, աշխատունակ անդամներ:

Տնային պայմաններում սոցիալական սպասարկումն իրականացվում է քաղաքացիների տված դիմումի հիման վրա՝ բժշկաաշխատանքային փորձաքննական հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում: Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկումն իրականացվում է անվճար: Նշված պայմանների բացակայության դեպքում միայնակ տարեցների և հաշմանդամների համար նրանց ցանկությամբ կազմակերպվում է վճարովի սոցիալական սպասարկում: Տնային պայմաններում սոցիալական սպասարկման

վճարովի ծառայությունների տեսակները և սակագները տարեկան մեկ անգամ սահմանում է Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ:

Միայնակ տարեցների և հաշմանդամների համար տնային պայմաններում մատուցվում են սոցիալական սպասարկման ծառայությունների հետևյալ տեսակները՝

1. Կենցաղային սպասարկում

ա) սպասարկվողի միջոցներով անհրաժեշտ ապրանքների գնումների կատարում, բնակարանի, կոմունալ ծառայությունների դիմաց վարձավճարների մուծումներ, ինչպես նաև բարեգործական ճաշարաններից, առանձին կազմակերպություններից մարդասիրական օգնության կարգով տրված սննդամթերքի և այլ ապրանքների տեղափոխում.

բ) տնային իրերի և կենցաղային առարկաների վերանորոգման, հագուստի քիմիական մաքրման և սպիտակեղենի լվացման աշխատանքների կազմակերպում.

գ) բնակարանի մաքրման և խոհանոցային աշխատանքների կատարում.

դ) ջեռուցման ապահովման և բնակարանի փոքրածավալ վերանորոգման հարցերում աջակցության ցուցաբերում.

ե) տուն-ինտերնատում տեղավորվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման գործում օժանդակում.

զ) ծիսակատարությունների կազմակերպում:

2. Իրավաբանական խորհրդատվություն

ա) բնակարանների սեփականաշնորհման, փոխանակման և կտակի կամ նվիրատվության ու այլ բնույթի փաստաթղթերի ձևակերպման գործում իրավաբանական օգնության կազմակերպում.

բ) գործող օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման համար աջակցության ցուցաբերում:

3. Բժշկական օգնություն

ա) անհրաժեշտության դեպքում առաջին բուժօգնության կազմակերպում.

բ) բուժկանխարգելիչ հիմնարկներում տեղավորման գործում աջակցության ցուցաբերում.

գ) առաջին անհրաժեշտության դեղամիջոցներով և հիգիենիկ պարագաներով ապահովման կազմակերպում.

դ) առողջարանների, հանգստյան տների ուղեգրերի ձեռքբերման գործում օգնության կազմակերպում.

4. Սոցիալ-հոգեբանական օգնություն

ա) հոգեբանական օգնության կազմակերպում (տնային այցելություն, զրույց, հատուկ հեռախոսակապ, հոգեբանի մասնագիտական և, առանձին դեպքերում, հոգևորականների խորհրդատվություններ).

բ) գրքերով, թերթերով, ամսագրերով ապահովման, համերգներ, ցուցահանդեսներ այցելության հարցերում աջակցության ցուցաբերում:

Ծրագիրն իրականացվում է հետևյալ 3 փուլով՝

1. 1998 թվականից սկսած ծրագիրն իրականացվում է Երևանում, Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության կենսաթոշակառուների սոցիալական սպասարկման կենտրոնի տնային պայմաններում սոցիալական սպասարկման բաժանմունքի միջոցով՝ սպասարկելով շուրջ 2000 կենսաթոշակառուի:

Աշխատանքները կազմակերպվում են՝ համագործակցելով սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների և թաղապետարանների հետ: Խիստ սահմանափակ ինքնասպասարկման հնարավորություն ունեցող կամ ինքնասպասարկման հնարավորությունից իսպառ զուրկ անձանց տնային պայմաններում սոցիալական սպասարկման աշխատանքներում ներգրավվում են Հայկական կարմիր խաչի ընկերությունը և միայնակ տարեցների ու հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկման աշխատանքներով զբաղվող ոչ պետական կազմակերպությունները («Առաքելություն Հայաստան» բարեգործական միություն և այլն):

Սահմանափակ ինքնասպասարկման հնարավորություն ունեցող անձանց տնային պայմաններում սոցիալական սպասարկման աշխատանքներում ներգրավվում են կամավորները՝ հիմնականում Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսանողները (հետագայում՝ նաև այլ բուհերի ուսանողները), որոնք տնային պայմաններում միայնակ տարեցներին և հաշմանդամներին սպասարկում են ուսանողական տասնամսյա պրակտիկայի ընթացքում: Յուրաքանչյուր ուսանող սպասարկում է 2-3 անձի:

Ուսանողների կողմից իրականացվող նշված սոցիալական սպասարկման աշխատանքները ղեկավարում և համակարգում են տնային պայմաններում սոցիալական սպասարկման բաժանմունքի հաստիքային աշխատողները: Աշխատանքների նշված ձևով կազմակերպումը հնարավորություն է տալիս ընդլայնելու սպասարկումը՝ առանց լրացուցիչ ֆինանսական միջոցների:

2. 1999 թվականից սկսած ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Գյումրի, Վանաձոր, Սպիտակ, Աբովյան, Հրազդան, Չարենցավան, Արարատ, Կապան, Ստեփանավան, Դիլիջան քաղաքներում՝ դրանց սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում համապատասխան ստորաբաժանումներ ստեղծելու միջոցով:

3. 2000 թվականից սկսած ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մնացած քաղաքներում և գյուղական բնակավայրերում:

1998-2000 թվականներին տնային պայմաններում սոցիալական սպասարկման աշխատանքները Երևանում կազմակերպվում են Երևանի կենսաթոշակառուների սոցիալական սպասարկման կենտրոնի տնային պայմաններում սոցիալական սպասարկման բաժանմունքների միջոցով՝ սերտորեն համագործակցելով սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների հետ: Նախատեսվում է 2000 թվականին միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկման աշխատանքներն աստիճանաբար հանձնել սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններին:

2000 թվականից սկսած տնային պայմաններում սոցիալական սպասարկման աշխատանքներն ամբողջովին դրվում են մարզերի (Երևան քաղաքի) ենթակայության սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների վրա: Ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվում է տնային պայմաններում սոցիալական սպասարկման կարիք ունեցող միայնակ տարեցների և հաշմանդամների տվյալների բանկ՝ ըստ ներկայացվող հաշվառման: Ծրագրի իրականացման գործում համագործակցություն է կազմակերպվում Հայաստանի Հանրապետությունում գործող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ:

Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկումն իրականացնող աշխատողների համար կազմակերպվում է համապատասխան ուսուցում Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի հիմքի վրա: Սոցիալական սպասարկողների մասնագիտական վերապատրաստման դասընթացներ անցկացվում են պարբերաբար՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հաստատած ծրագրով և կարգով:

ԳԼՈՒԽ IV
Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական իրավունքները

1. «Զինծառայող» հասկացությունը

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական և կազմակերպական դրույթները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, օրենսդրական և ենթաօրենսդրական այլ ակտերով:

Զինծառայող են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական և շարքային անձնակազմի ծառայողները:

Զինծառայողներին հավասարեցված անձինք են՝

ա) վարժական հավաքների կանչված զինապարտները,

բ) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները, այդ թվում՝ երկրապահ կամավորականները,

գ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողները,

դ) պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնող կամ քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտերին մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ է տրվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Վերոնշյալ օրենքի այն դրույթները, որոնք վերաբերում են զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, տարածվում են նաև՝

ա) ծառայությունից սահմանված կարգով արձակված և, անկախ ժամանակաշրջանից, մահացած այն զինծառայողների ընտանիքների վրա, որոնց մահվան պատճառը ծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղումը կամ առաջացած հիվանդությունը.

բ) ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքների վրա:

2. Զինծառայողների աշխատանքային երաշխիքները

Զինծառայողները, բացառությամբ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվողների, չեն կարող ծառայությունից արձակվել մինչև երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերելը, բացի այն դեպքերից, երբ ծառայությունը դադարեցվում է նրանց անձնական ցանկությամբ, առողջական վիճակի, հաստիքների կամ զինված ուժերի թվակազմը կրճատելու, պայմանագրի ժամկետը ավարտվելու կամ պայմանագրի պայմանները չկատարելու կապակցությամբ, զինվորական կանոնադրությունների պահանջների պարբերական խախտումների պատճառով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող բոլոր գործատուները պարտավոր են մինչև զորակոչվելն իրենց մոտ աշխատած ժամկետային զինծառայողներին, զինված ուժերից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ երկամսյա ժամկետում, ընդունել աշխատանքի՝ նախկինից ոչ ցածր պաշտոնով: Աշխատողների թվակազմի կամ հաստիքների կրճատման ժամանակ այլ հավասար պայմանների դեպքում, զինված ուժերի շարքերից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, զինծառայողները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, օգտվում են աշխատանքում թողնվելու նախապատվության իրավունքից:

Զինծառայողները պետական բյուջեի, իսկ պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցող ստորաբաժանումների զինծառայողները՝ մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող միջոցների հաշվին ստանում են դրամական բավարարում, ինչպես նաև

պարենային և հանդերձանքի ապահովություն կամ դրա փոխարեն՝ դրամական փոխհատուցում՝ իրենց ցանկությամբ: Զինծառայողների դրամական բավարարում, պարենային և հանդերձանքի ապահովություն ստանալու կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Պետական մարմիններ, հիմնարկներ, ձեռնարկություններ և ուսումնական հաստատություններ աշխատանքի գործուղված զինծառայողների համար պահպանվում են նյութական ապահովության, երաշխիքների և արտոնությունների բոլոր ձևերը: Առողջության, տարիքի, ժամկետը լրանալու, հաստիքների կամ զինված ուժերի թվակազմի կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու, ինչպես նաև երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու դեպքում զինծառայողներին տրվում է դրամական օգնություն՝

- ✓ մինչև 10 տարի ծառայած զինծառայողներին՝ ամսական դրամական բավարարման հնգապատիկի չափով,
- ✓ 10-ից 15 տարի ծառայած զինծառայողներին՝ ամսական դրամական բավարարման տասնապատիկի չափով,
- ✓ 15-ից 20 տարի ծառայած զինծառայողներին՝ ամսական դրամական բավարարման տասնհինգապատիկի չափով,
- ✓ 20-ից ավելի տարի ծառայած զինծառայողներին՝ ամսական դրամական բավարարման քսանապատիկի չափով,

իսկ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով, իսկ նշված կազմից երկկողմանի ծնողազուրկ (որբ) զինծառայողներին՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի համար սահմանված չափի քսանապատիկի չափով:

Դրամական օգնություն չի տրվում դիտավորյալ հանցագործության համար դատապարտված կամ կարգապահական խախտում թույլ տալու համար ծառայությունից արձակված (ազատված) զինծառայողներին: Դատապարտված անձանց նկատմամբ հետագայում արդարացման դատավճիռ կայացվելու դեպքում դրամական օգնությունը ենթակա է վճարման, ընդ որում, դրամական օգնության չափը հաշվարկելիս հիմք է ընդունվում զինծառայողին աշխատանքից ազատելու պահը: Առողջության, տարիքի, հաստիքների կամ զինված ուժերի թվակազմի կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակված (ազատված), երկարամյա ծառայության կենսաթոշակի անցած, դրամական օգնություն ստացած և հետագայում զինվորական ծառայությունում

վերականգնված զինծառայողներին, սահմանված կարգով նորից արձակվելու (ազատվելու) դեպքում, դրամական օգնությունը վճարվում է արձակվելու (ազատվելու) կամ կենսաթոշակի անցնելու պահին դրամական բավարարման նկատմամբ սահմանված և նախկինում վճարված դրամական բավարարման բազմապատիկների տարբերության չափով:

Ծառայության ժամկետը լրանալու պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակված (ազատված), դրամական օգնությունը ստացած և կրկին ծառայության անցած զինծառայողներին՝ ժամկետը լրանալու կապակցությամբ դրամական օգնությունը վճարելիս կիրառվում են նույն ժամկետները և չափերը: Հերթական անգամ վճարվող և նախկինում վճարված դրամական օգնությունների բազմապատիկների հանրագումարը չի կարող ծառայության ընդհանուր ստաժի տվյալ խմբի համար սահմանված դրամական բավարարման բազմապատիկից ավելի լինել: Դրամական օգնության վճարման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Զինծառայողներին (բացառությամբ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի) տարվա ընթացքում մեկ անգամ վճարվում է նաև՝

ա) ծառայության նոր վայր տեղափոխվելու դեպքում դրամական օգնություն պաշտոնային դրույքաչափի և զինվորական կոչման դրույքաչափի 50 տոկոսի չափով, եթե նախկին և նոր ծառայության վայրերի հեռավորությունը 50-100 կմ է, պաշտոնային դրույքաչափի և զինվորական կոչման դրույքաչափի 100 տոկոսի չափով, եթե այդ հեռավորությունը 100 կմ և ավելի է, իսկ զինծառայողի ընտանիքի՝ նրան ուղեկցող յուրաքանչյուր անդամին դրամական օգնությունը վճարվում է վերը նշված դրույքաչափերի 25 տոկոսի չափով.

բ) միանվագ դրամական օգնություն՝ պաշտոնային դրույքաչափի և զինվորական կոչման դրույքաչափի կրկնակին չգերազանցող չափով՝ համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ:

Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողներին, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին տարվա ընթացքում կարող է վճարվել միանվագ դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով:

Ծառայության նոր վայր տեղափոխվելու և միանվագ դրամական օգնությունների չափերը հաշվարկելու համար պաշտոնային ու զինվորական կոչման դրույքաչափերը որոշվում են Հայաստանի

Հանրապետության կառավարության սահմանած պաշտոնային ու զինվորական կոչման դրույքաչափերի ու դրանցից պահված եկամտային հարկի տարբերության չափով:

3. Զինծառայողների աշխատելու և հանգստի ժամանակը

Զինծառայողների աշխատելու և հանգստի ժամանակի տևողությունն ու բաշխումը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության զինվորական կանոնագրքերով և համապատասխան այլ օրենսդրական ակտերով: Զինավարժությունները, մարտական հրաձգությունները և մարտական հերթապահություններն անցկացվում են շաբաթվա ցանկացած օր՝ առանց աշխատաժամանակի ընդհանուր տևողության սահմանափակման:

Սպաներին, ենթասպաներին, ինչպես նաև զինծառայող կանանց, ովքեր ծառայողական անհրաժեշտության բերումով զինվորական ծառայության պարտականությունները կատարում են տոնական և ոչ աշխատանքային օրերին, տրամադրվում են հանգստյան այլ օրեր: Նշված օրերին զինվորական պարտականությունները կատարելու դեպքում ժամկետային զինվորական ծառայության զինծառայողների հանգստի ժամանակը սահմանում է համապատասխան հրամանատարը (պետը): Զինծառայողների վերակարգերը և հերթապահություններն անցկացվում են զինված ուժերի կանոնագրքերի, կանոնադրությունների և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի համաձայն:

Ժամկետային զինծառայողներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, տրվում է հերթական տարեկան արձակուրդ: Արձակուրդի տևողությունը կազմում է՝

- ✓ մինչև 15 տարի ծառայած զինծառայողների համար՝ 30 օր,
- ✓ 15-ից 25 տարի ծառայած զինծառայողների համար՝ 40 օր,
- ✓ 25 և ավելի տարի ծառայած զինծառայողների համար՝ 45 օր,
- ✓ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության սպայական կազմի համար՝ յուրաքանչյուր լրիվ ծառայած ամսվա համար երկու և կես օր հաշվարկով:

Ծառայության հատուկ պայմաններ ունեցող կամ վնասակար աշխատանքներում զբաղված ժամկետային զինծառայողներին տրվում է լրացուցիչ տարեկան արձակուրդ՝ 10 օր տևողությամբ: Նման արձակուրդի իրավունք տվող ծառայության տեսակների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ընտանեկան

հանգամանքների բերումով, ուսման կապակցությամբ և այլ հարգելի պատճառներով, հրամանատարի (պետի) որոշմամբ, ժամկետային զինծառայողին կարող է տրվել լրացուցիչ տարեկան արձակուրդ՝ մինչև 10 օր տևողությամբ:

Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներին, զինվորական ծառայության ընթացքում, որպես խրախուսանք կարող է տրվել արձակուրդ, զինվորներին՝ 15 օր, սերժանտներին և ավագներին՝ 20 օր տևողությամբ: Հրամանատարի (պետի) որոշմամբ ժամկետային պարտադիր ծառայության շարքային կազմի զինծառայողներին կարող է տրվել մինչև 5 օր տևողությամբ լրացուցիչ արձակուրդ՝ ելնելով զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշներից, իսկ ամուսնացածներին՝ ևս 5 օր՝ ամիսը մեկ անգամ:

Զինծառայողի կնոջը (ամուսնուն), իր ցանկությամբ, տարեկան արձակուրդ կարող է տրվել ամուսնու (կնոջ) արձակուրդի հետ միաժամանակ: Զինծառայողը և նրա ընտանիքի անդամները արձակուրդը Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հանգստյան տներում անցկացնելու դեպքում օգտվում են ուղեգրի գնի փոխհատուցման իրավունքից: Ուղեգրի գնի փոխհատուցման կարգը և չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Զինծառայողների բժշկական սպասարկումը և բնակարանային ապահովումը

Զինծառայողները և նրանց ընտանիքների անդամներն ապահովվում են անվճար որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական բժշկական հիմնարկներում: Ծառայության անցկացման վայրում նման բժշկական հիմնարկների բացակայության, ինչպես նաև անհետաձգելի դեպքերում զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին անհրաժեշտ բժշկական օգնություն ցույց է տրվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի բժշկական հիմնարկներում՝ համապատասխան մարմինների միջոցների հաշվին՝ բուժման ծախսերի հետագա փոխհատուցմամբ, որի կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Բժշկական ցուցումների առկայության դեպքում զինծառայողներին տրվում է անվճար առողջարանային բուժման իրավունք: Առողջարանային բուժման ուղեգրի արժեքի, ինչպես նաև բուժման վայր մեկնելու և

վերադառնալու հետ կապված ծախսերը փոխհատուցվում են համապատասխան մարմինների՝ այդ նպատակով հատկացրած միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

Երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողները, օրենքով սահմանված դեպքերում նաև զինծառայողներին հավասարեցված անձինք, ինչպես նաև ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները բժշկական օգնությամբ ապահովվում են օրենքով սահմանված կարգով:

Վերոնշյալի իմաստով՝ զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում՝

1) 18 տարին չլրացած երեխաները, անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող զավակները, ինչպես նաև 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակները, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը.

2) ծնողները, ամուսինը.

3) զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող՝ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված, կամ մինչև 23 տարեկան ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև նրա խնամքի տակ գտնվող 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Քույրը և եղբայրը համարվում են զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:

Զինծառայողները, առողջության, տարիքի կամ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված այն նախկին զինծառայողները, որոնք ծառայության ընթացքում հաշվառված են եղել որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողներ, ինչպես նաև հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողները և ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքները բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում ապահովվում են բնակարանով կամ տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար ստանում են անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ Հայաստանի

Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Վերը նշված անձանց ընտանիքի անդամ են համարվում.

1) ամուսինը և 18 տարին չլրացած երեխաները.

2) համատեղ բնակվող՝ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող զավակները, ինչպես նաև համատեղ բնակվող՝ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակները, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը.

3) համատեղ բնակվող ծնողները.

4) զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող և համատեղ բնակվող՝ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված, կամ մինչև 23 տարեկան ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև նրա խնամքի տակ գտնվող և համատեղ բնակվող՝ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Քույրը և եղբայրը համարվում են զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:

Մինչև բնակարանով ապահովվելը զինծառայողները (բացի ժամկետային պարտադիր զինծառայողներից) և նրանց ընտանիքների անդամներն ապահովվում են ծառայողական բնակելի տարածություններով: Վերջիններիս բացակայության դեպքում բնակելի տարածությունների վարձակալության համար նրանց վճարվում է դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Վերը նշվածի իմաստով՝զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում՝

1) ամուսինը և 18 տարին չլրացած երեխաները.

2) համատեղ բնակվող՝ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող զավակները, ինչպես նաև համատեղ բնակվող՝ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակները, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը:

Պետական սեփականություն հանդիսացող և համապատասխան բնագավառի պետական լիազոր մարմնի հաշվեկշռում գտնվող բնակարանները զինծառայողներին կամ նրանց ընտանիքների անդամներին սեփականության իրավունքով տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող զինծառայողները, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի

ընտանիքը (ամուսինը, ծնողները, ինչպես նաև ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անդամները) օգտվում են ջրահեռացման, աղբահանության և ռադիոյի բաժանորդային վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու իրավունքից:

5. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների ամենամսյա դրամական օգնության իրավունքը

Ամենամսյա դրամական օգնության իրավունք ունեն՝

1) զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող՝

ա. Հայրենական մեծ պատերազմում կամ այլ պետություններում մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողները,

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողները,

գ. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցները կամ այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցները,

դ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մասնակիցները,

ե. Հայաստանի Հանրապետության ազգային հերոսները,

զ. Մարտական խաչ շքանշանով պարգևատրված զինծառայողները,

է. Հայրենական մեծ պատերազմում, այլ պետություններում ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամները,

ը. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված շարքային զինծառայողների ընտանիքների անդամները.

2) զոհված զինծառայողների ընտանիքների այն անդամները, ովքեր ստանում են աշխատանքային կամ սոցիալական կենսաթոշակ (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կամ սոցիալական կենսաթոշակի) և ունեն նաև կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք.

3) Հայրենական մեծ պատերազմում, այլ պետություններում, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամները՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու հանգամանքից անկախ:

Ամենամսյա դրամական օգնության չափերը՝ ըստ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, դրամական օգնություն նշանակելու և վճարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Զինծառայողները Հայաստանի Հանրապետության տարածքում օգտվում են քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից, անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), անվճար երթևեկելու իրավունքից: Զինծառայողներին ծառայողական պարտականությունների կատարման նպատակով այլ բնակավայրեր գործուղելու ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

Զինծառայողներն արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդից վերադառնալիս ընտանիքի՝ նրանց ուղեկցող անդամները քաղաքային, մերձքաղաքային և միջքաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից, անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), օգտվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Զինծառայողներն իրավունք ունեն սովորել ռազմաուսումնական հաստատություններում, իսկ սպաներն ու ենթասպաները՝ նաև վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներում: Ռազմաուսումնական հաստատություններից հեռացված ունկնդիրների և կուրսանտների վերականգնումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սահմանած կարգով՝ հեռացվելու օրվանից ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում:

Պետությունը երաշխավորում է՝

ա) ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիների, զոհված (մահացած) զինծառայողների երեխաների ընդունելությունը պետական ուսումնական հաստատություններ՝ մրցույթից դուրս, պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

բ) պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիների զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, ընդու-

նելությունը պետական ուսումնական հաստատություններ, մրցույթից դուրս պետական պատվերի շրջանակներում, ուսումնական հաստատություններին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ըստ մասնագիտությունների հատկացված տեղերում:

Զինծառայողները ենթակա են ծառայողական պարտականություններ, մարտական հերթապահություն ու հատուկ առաջադրանք կատարելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհվելու (մահանալու) դեպքերից պարտադիր պետական ապահովագրության:

Նշված ապահովագրությունը տարածվում է նաև հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողների վրա՝ աշխատունակության կորստի չափին համամասնորեն, որը սահմանվում է տոկոսային հարաբերությամբ՝ զոհվելու (մահանալու) դեպքից ապահովագրվելու համապատասխան ընդհանուր գումարների նկատմամբ:

Ապահովագրության և ապահովագրական գումարների չափերը, վճարման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Զինծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Հաշմանդամության կենսաթոշակ ստացող զինծառայողների (ինչպես նաև զինծառայությունից սահմանված կարգով արձակված և հետագայում մահացած զինծառայողների, որոնց մահվան պատճառը զինվորական ծառայության ընթացքում ստացած հիվանդությունն է, վնասվածքը կամ խեղումը) մահվան դեպքում գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

Զինվորական ծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորությունը, գերեզմանների բարեկարգումը, տապանաքարերի պատրաստումն ու տեղադրումը կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 18-ի «Վարժական հավաքների և զինծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցման մասին» N 341 որոշմամբ սահմանված կարգով:

Զինծառայողը և նրա ընտանիքի անդամները արձակուրդը Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ենթակայությամբ գործող, ինչպես նաև կնքված պայմանագրերին համապատասխան այլ հանգստյան տներում անցկացնելու դեպքում օգտվում են հանգստյան տան ուղեգրի գնի փոխհատուցման իրավունքից:

Ուղեգրի գինը փոխհատուցվում է՝

ա) զինծառայողին՝ հանգստյան տան ուղեգիր ձեռք բերելու համար կատարված փաստացի ծախսերի չափով,

բ) զինծառայողի ընտանիքի անդամներին՝ հանգստյան տան ուղեգիր ձեռք բերելու համար կատարված փաստացի ծախսերի 50 տոկոսի չափով:

Ուղեգրի գնի փոխհատուցում ստանալու նպատակով զինծառայողը կամ նրա ընտանիքի անդամը պետական կառավարման լիազոր մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանում է ներկայացնում դիմում՝ կցելով ուղեգրի պատճենը և հանգստյան տան տնօրինության կողմից տրված տեղեկանքը՝ հանգստյան տանը գտնվելու ժամանակահատվածի մասին:

ԳԼՈՒԽ V
Դատավորի գործունեության սոցիալական երաշխիքները

Դատավորի աշխատավարձը բաղկացած է պաշտոնային դրույքաչափից և դրա նկատմամբ սահմանվող հավելավճարներից: Դատավորի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է օրենքով, ընդ որում՝

1) վարչական դատարանի դատավորների պաշտոնային դրույքաչափերը գերազանցում են ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը 14.47 տոկոսով.

2) վերաքննիչ դատարանների դատավորների պաշտոնային դրույքաչափերը գերազանցում են ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը 28.94 տոկոսով.

3) վճռաբեկ դատարանի դատավորների պաշտոնային դրույքաչափերը գերազանցում են ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը 48.23 տոկոսով.

4) դատարանի նախագահը ստանում է դրամական հավելավճար՝ պաշտոնային դրույքաչափի 25 տոկոսի չափով, վճռաբեկ դատարանի պալատի նախագահը՝ պաշտոնային դրույքաչափի 15 տոկոսի չափով.

5) յուրաքանչյուր դատավորի վճարվում է հավելավճար՝ դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար. առաջին 5 տարիների համար՝ յուրաքանչյուր տարի 2-ական տոկոսի (ընդամենը 10 տոկոս), իսկ 6-րդ և դրան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար՝ 5-ական տոկոսի չափով:

Դատավորի աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները չեն կարող պակասեցվել նրա պաշտոնավարման ընթացքում:

Որպես դատավոր առնվազն 10 տարի պաշտոնավարած անձին, որի լիազորությունները դադարեցվել են Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերով, ինչպես նաև 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերով, նշանակվում է կենսաթոշակ՝ վերջին 1 տարվա ընթացքում որպես դատավոր զբաղեցրած պաշտոնի համար ստացած միջին աշխատավարձի ընդհանուր գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով: Դատավորի պաշտոն զբաղեցրած անձին նշանակված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը:

Կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված՝ դատավորի պաշտոնային դրույքաչափը բարձրացվելու դեպքում՝ պաշտոնային դրույքաչափի բարձրացմանը համամասնորեն: Դատավորի պաշտոն զբաղեցրած անձի միջին աշխատավարձը և ստաժը հաշվարկելու, կենսաթոշակը նշանակելու (վերահաշվարկելու), վճարելու կարգը, ինչպես նաև կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Դատավորներն ունեն ամենամյա հերթական վճարովի արձակուրդի իրավունք՝ 30 աշխատանքային օր տևողությամբ: Դատավորին ամենամյա հերթական արձակուրդը պետք է տրամադրվի այնպես, որ չխոչընդոտվի դատարանի բնականոն գործունեության իրականացումը: Դատավորներին ամենամյա հերթական արձակուրդ տրամադրելու կարգը սահմանում է Դատարանների նախագահների խորհուրդը: Առանձին դեպքերում, անձնական կամ ընտանեկան հանգամանքներից ելնելով, դատարանի նախագահի կողմից դատավորին կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ տարեկան հանրագումարային մինչև 30 օր տևողությամբ: Գիտական ատենախոսություն պաշտպանելու նպատակով դատավորն ունի մինչև 30 աշխատանքային օր տևողությամբ չվճարվող արձակուրդի իրավունք: Արձակուրդի տրամադրման հետ կապված վեճերը կարող են լուծվել Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի կողմից:

Պարտադիր վերապատրաստման ծրագրերին մասնակցելուց բացի, դատավորն իրավունք ունի մասնակցելու այլ կրթական վերապատրաստման ծրագրերի, համաժողովների և իրավաբանների մասնագիտական այլ հավաքների: Աշխատանքային ժամերին այդպիսի միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ մինչև հինգ օր տևողությամբ բացակայելու թույլտվությունը տալիս է դատարանի նախագահը: Դրանից ավելի ժամկետով թույլտվություն ստանալու համար դատավորը դիմում է Դատարանների նախագահների խորհրդի ուսումնական հարցերով հանձնաժողովին: Այն դեպքում, երբ դատավորը ստացել է դատարանի նախագահի կամ Դատարանների նախագահների խորհրդի ուսումնական հարցերով հանձնաժողովի համաձայնությունը, այդպիսի միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ դատավորի բացակայությունը համարվում է հարգելի՝ աշխատավարձի պահպանմամբ:

Յուրաքանչյուր դատավորի վերաբերյալ կազմվում և վարվում է անձնական գործ: Դատավորի անձնական գործը վարում է Դատական դեպարտամենտը: Դատավորի անձնական գործը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) տեղեկություններ՝ դատավորի անվան, ազգանվան, ծննդյան տարեթվի, մշտական բնակության վայրի, կրթության և օտար լեզուների իմացության մասին.

2) դատավորի նշանակման մասին ակտի պատճենը.

3) տեղեկություններ՝ Դատական դպրոցում ուսանելու ընթացքում դատավորի առաջադիմության և դատարաններում փորձաշրջանի ընթացքի վերաբերյալ.

4) տեղեկություններ՝ դատավորի պաշտոնում աշխատելու ժամանակ դատավորի անցած վերապատրաստման դասընթացների և ժամաքանակի վերաբերյալ.

5) էթիկայի հանձնաժողովի ընդունած որոշումներ՝ դատավորի կողմից գործի քննությունը ձգձգելու դեպքերի վերաբերյալ.

6) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ կարգապահական գործը կարճելու վերաբերյալ Արդարադատության խորհրդի որոշումների պատճենները.

7) դատավորի կողմից աշխատանքային կարգապահության խախտման վերաբերյալ տեղեկություններ.

8) դատավորի և իր հետ փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը.

9) աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկություններ.

10) Դատարանների նախագահների խորհրդի կողմից սահմանված այլ տեղեկություններ:

Դատավորի անձնական գործում եղած տեղեկությունները հրապարակման ենթակա չեն: Դատավորից բացի, նրա անձնական գործին իրավունք ունեն ծանոթանալու Հանրապետության Նախագահը, վճռաբեկ դատարանի նախագահը, համապատասխան դատարանի նախագահը, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող անձը, Արդարադատության խորհրդի անդամները, Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի անդամները:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի յուրաքանչյուր դատավոր ունի մեկ օգնական և մեկ գործավար: Վճռաբեկ դատարանի նախագահը, պալատի դատավորները և պալատների նախագահներն

ունեն երկուական օգնական: Դատավորի օգնականը և գործավարը համարվում են դատավորին կցվող դատական ծառայողներ:

Դատական նիստին դատավորը մասնակցում է սահմանված ձևի պատմուճանով, որը նրան տրամադրվում է անվճար: Պատմուճանի նկարագրությունը հաստատում է Դատարանների նախագահների խորհուրդը:

Դատավորին հատկացվում է առանձին ծառայողական աշխատասենյակ: Դատավորի աշխատասենյակում պետք է լինի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը, իսկ աշխատասեղանի մոտ տեղադրվում է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը:

Դատավորն իր լիազորությունների իրականացման ողջ ժամանակահատվածում ազատվում է ժամկետային զինվորական ծառայության զորակոչից, զորահավաքներից և վարժական հավաքներից: Դատավորին իր գործունեության ողջ ժամանակահատվածի համար Հանրապետության Նախագահի կողմից տրվում է ծառայողական վկայական:

Դատավորներն ունեն հաշվեցուցակային զենք և պաշտպանության հատուկ միջոցներ պահելու և կրելու իրավունք: Դատավորներին հաշվեցուցակային զենք և պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրում է կառավարության լիազորած մարմինը: Դատավորը և նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության հատուկ պաշտպանության ներքո: Դատավորի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում դատավորի կամ դատարանի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դատավորի, նրա ընտանիքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Իր մշտական բնակության վայրից դուրս գործուղվելիս դատավորին, օրենսդրությամբ սահմանած չափերով և կարգով, վճարվում են գործուղման ծախսեր:

Դատավորն ունի անհապաղ ընդունելության իրավունք Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի (այսուհետ՝ արդարադատության նախարար) և վճռաբեկ դատարանի նախագահի մոտ:

Գլուխ VI
Դատախազի գործունեության սոցիալական երաշխիքները

Դատախազի աշխատավարձը բաղկացած է պաշտոնային դրույքաչափից, հավելավճարներից և օրենքով նախատեսված այլ վճարներից: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքի առանձին հոդվածով: Գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնային դրույքաչափը կազմում է գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 85.60%-ը: Գլխավոր դատախազության վարչության պետի, Երևան քաղաքի դատախազի, զինվորական դատախազի տեղակալի պաշտոնային դրույքաչափը կազմում է գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 80.79%-ը: Մարզի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազի և կայազորների զինվորական դատախազի պաշտոնային դրույքաչափը կազմում է գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 75.99%-ը: Գլխավոր դատախազության վարչության պետի տեղակալի, գլխավոր դատախազության բաժնի պետի, գլխավոր դատախազության ավագ դատախազի, Երևան քաղաքի դատախազի տեղակալի պաշտոնային դրույքաչափը կազմում է գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 71.19%-ը: Գլխավոր դատախազության վարչության, ինչպես նաև բաժնի ավագ դատախազի, մարզի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազի տեղակալի պաշտոնային դրույքաչափը կազմում է գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 66.39%-ը: Գլխավոր դատախազության դատախազի, գլխավոր դատախազության վարչության, ինչպես նաև բաժնի դատախազի, զինվորական կենտրոնական դատախազության բաժնի պետի, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազի պաշտոնային դրույքաչափը կազմում է գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 61.59%-ը: Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազի, զինվորական կենտրոնական դատախազության բաժնի ավագ դատախազի պաշտոնային դրույքաչափը կազմում է գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 56.79%-ը: Երևան քաղաքի դատախազության դատախազի, մարզի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազությունների ավագ դատախազների, զինվորական

կենտրոնական դատախազության դատախազի, զինվորական կենտրոնական դատախազության բաժնի դատախազի պաշտոնային դրույքաչափը կազմում է գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 51.99%-ը:

Մարզի, Երևան քաղաքի տարածքների, կայազորի զինվորական դատախազության դատախազի պաշտոնային դրույքաչափը կազմում է գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 47.18%-ը: Արդարադատության պետական խորհրդականի դասային աստիճանի համար սահմանվում է հավելավճարի առավելագույն չափ՝ գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 100%-ի չափով: Մյուս դասային աստիճանների նկատմամբ սահմանվում է հավելավճարի առավելագույն չափ՝ հիմքում դնելով գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի՝

1) արդարադատության առաջին դասի պետական խորհրդականի համար՝ 85%-ը.

2) արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի համար՝ 80%-ը.

3) արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի համար՝ 75%-ը.

4) արդարադատության առաջին դասի խորհրդականի համար՝ 65%-ը.

5) արդարադատության երկրորդ դասի խորհրդականի համար՝ 60%-ը.

6) արդարադատության երրորդ դասի խորհրդականի համար՝ 55%-ը.

7) առաջին դասի խորհրդականի համար՝ 50%-ը.

8) երկրորդ դասի խորհրդականի համար՝ 45%-ը.

9) երրորդ դասի խորհրդականի համար՝ 40%-ը:

Դասային աստիճան ունեցող դատախազները ստանում են հավելավճար՝ դատախազի, դատավորի և դատախազության քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար՝ իրենց շնորհված դասային աստիճանի նկատմամբ սահմանված հավելավճարի առավելագույն չափի 4-ական տոկոսի չափով: Բոլոր դեպքերում դասային աստիճանի համար տրվող հավելավճարը չի կարող գերազանցել պաշտոնային դրույքաչափը:

1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված՝ դատախազի պաշտոն զբաղեցնող անձի կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված՝ դատախազի պաշտոն զբաղեցնող անձի կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է զինծառայողների համար սահմանված

կարգով՝ հիմք ընդունելով դատախազի աշխատավարձի չափի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալը: Դատախազի պաշտոն զբաղեցրած անձին նշանակված (վերահաշվարկված) կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել նրա աշխատավարձի չափի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալը:

Պետությունը դատախազների համար երաշխավորում է՝

1) ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ.

2) ամենամյա վճարովի արձակուրդ.

3) վերապատրաստում՝ այդ ընթացքում պահպանելով նրա պաշտոնը և դրա համար նախատեսված վարձատրությունը.

4) ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամության դեպքում նրան, իսկ զոհվելու դեպքում նրա ընտանիքի անդամներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան վճարով ապահովում.

5) մշտական բնակության վայրից դուրս գործուղվելիս օրենսդրությամբ սահմանած չափերով և կարգով գործուղման ծախսերի փոխհատուցում:

Դատախազներն ունեն ամենամյա հերթական վճարովի արձակուրդի իրավունք՝ 30 աշխատանքային օր տևողությամբ: Դատախազին ամենամյա հերթական արձակուրդը պետք է տրամադրվի այնպես, որ չխոչընդոտվի դատախազության բնականոն գործունեության իրականացումը: Դատախազներին հերթական արձակուրդ տրամադրելու կարգը սահմանում է գլխավոր դատախազը: Գիտական ատենախոսություն պաշտպանելու նպատակով դատախազն ունի մինչև 30 աշխատանքային օր տևողությամբ լրացուցիչ չվճարվող արձակուրդի իրավունք:

Բոլոր դատախազները, բացառությամբ գլխավոր դատախազի և նրա տեղակալների, պարտավոր են անցնել տարեկան վերապատրաստում գլխավոր դատախազի սահմանած կարգով: Պարտադիր վերապատրաստման ծրագրերին մասնակցելուց բացի, դատախազն իրավունք ունի մասնակցելու այլ կրթական վերապատրաստման ծրագրերի, համաժողովների և իրավաբանների մասնագիտական այլ հավաքների: Աշխատանքային ժամերին այդպիսի միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ մինչև երկու օր տևողությամբ բացակայելու թույլտվությունը տալիս է գլխավոր դատախազի համապատասխան տեղակալը: Դրանից ավելի ժամկետով թույլտվություն կարող է տալ գլխավոր դատախազը: Այն դեպքում, եթե դատախազն ստացել է թույլտվություն, ապա այդպիսի միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ

դատախազի բացակայությունը համարվում է հարգելի՝ աշխատավարձի պահպանմամբ:

Դատախազն ունի ծառայողական հաշվեցուցակային զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ պահելու և կրելու իրավունք: Դատախազներին ծառայողական հաշվեցուցակային զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրում է կառավարության լիազորած մարմինը: Ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով: Դատախազը և նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության հատուկ պաշտպանության ներքո: Դատախազի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում դատախազի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դատախազի, նրա ընտանիքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

Հավելված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԲԵՐՏ ՄՈՎՍԵՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ
57-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 23 հոկտեմբերի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող՝ քաղ. Ա. Մովսեսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25-րդ, 38-րդ և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ալբերտ Մովսեսյանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ա. Մովսեսյանի՝ 19.04.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի՝ Ա. Մովսեսյանի և պատասխանողի՝ ՀՀ Ազգային ժողովի բացատրությունները, հետազոտելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

ՊԱՐԶԵՑ.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002 թվականի նոյեմբերի 19-ին և ուժի մեջ մտել 2003թ. ապրիլի 10-ից:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածը սահմանում է. «Չստացված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ժամանակահատվածի համար, սակայն կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող երեք տարուց ոչ ավելի:

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքով չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են առանց ժամկետի սահմանափակման:

Նշված դեպքերում չստացված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ»:

2. Քաղաքացի Ա. Մովսեսյանը 1972-1985 թթ. աշխատել է Երևանի թիվ 73 դպրոցում՝ որպես կերպարվեստի ուսուցիչ, միաժամանակ համատեղության կարգով նույն մասնագիտությամբ աշխատել է նաև Երևանի թիվ 49 դպրոցում: Նա 2006թ. օգոստոսի 4-ին դիմել է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի (ՍԱՊՀ) Էրեբունու տարածքային կենտրոն՝ աշխատանքի հատուկ պայմաններում աշխատելու և երկարամյա ծառայության համար տրվող մասնակի կենսաթոշակ նշանակելու, ինչպես նաև նշանակմանը նախորդող երեք տարիների համար չվճարված կենսաթոշակի գումարը միանվագ վճարելու խնդրանքով: ՀՀ ՍԱՊՀ Էրեբունու տարածքային կենտրոնը մերժել է Ա. Մովսեսյանին, և վերջինս դիմել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան՝ խնդրելով նշված կենտրոնին պարտավորեցնել իրեն մասնակի կենսաթոշակ նշանակել, ինչպես նաև նշանակմանը նախորդող երեք տարիների համար չվճարված կենսաթոշակի գումարը միանվագ վճարել: Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. դեկտեմբերի 4-ի վճռով հայցը բավարարվել է: ՀՀ ՍԱՊՀ Էրեբունու տարածքային կենտրոնի վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 23-ի վճռով Ա. Մովսեսյանի հայցը բավարարվել է մասնակիորեն: Ա. Մովսեսյանը դիմել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ, որն իր 29.03.2007թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Ա. Մովսեսյանը 19.04.2007թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ գտնելով, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներին, և այն անհրաժեշտ է անվավեր ճանաչել:

Դիմողը մասնավորապես մատնանշում է, որ վիճարկվող իրավական ակտի 57 հոդվածն առաջացնում է իրավական անորոշություն և իրավակիրառական պրակտիկայում մեկնաբանվում է տարբեր կերպ:

Դիմողի կարծիքով, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածով սահմանված դրույթը ոչ հստակ է ձևակերպված և հնարավորություն չի տալիս միանշանակ հետևություն անել այն մասին, որ այն վերաբերում է թե կենսաթոշակ նշանակելու համար դիմում տալուց հետո չստացված կենսաթոշակի գումարը վճարելուն (ինչպես մեկնաբանել է վերաքննիչ դատարանը), թե Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված սոցիալական ապահովության իրավունք ձեռք բերելու համար անհրաժեշտ պայմանները վրա հասնելու և կենսաթոշակ նշանակելու համար դիմում ներկայացնելու միջև ընկած ժամանակահատվածում չստացված կենսաթոշակի գումարը վճարելուն (ինչպես մեկնաբանել է Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը):

Դիմողի կարծիքով, իր, ինչպես նաև Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի և Լեզվի պետական տեսչության մեկնաբանությամբ ու համոզմամբ, նշված օրենքի 57 հոդվածը չի վերաբերում արդեն իսկ նշանակված կենսաթոշակին, նման պահանջ չի դնում:

Ելնելով վերոհիշյալից՝ դիմողը գտնում է, որ նշված օրենքի 57 հոդվածի իրավական անորոշության հետևանքով խախտվում է իր կենսաթոշակի իրավունքը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմողի փաստարկները հիմնավոր չեն, և

դիմումը ենթակա է մերժման հետևյալ նկատառումներով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Նույն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Իրավական ակտի կառուցվածքը պետք է լինի կուռ՝ տրամաբանորեն միասնական, հաջորդական ու համակարգված»: Մինչդեռ, ըստ պատասխանողի՝ դիմողը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածը վերլուծում է՝ չառաջնորդվելով նույն օրենքի միասնական տրամաբանությամբ: Օրենքի այլ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ խոսքն այստեղ իրականում վերաբերում է նշանակված, բայց չստացված կենսաթոշակներին: Վիճարկվող օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր է համարվում

կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով դիմումն ընդունելու օրը, իսկ 51-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից: Որևէ բացառություն վերոհիշյալ հոդվածներում սահմանված չէ: Բացի դրանից, օրենքի 57-րդ հոդվածում օգտագործվում են «չստացված կենսաթոշակ» և «կենսաթոշակ վճարելու համար դիմելու» բառակապակցությունները:

Ըստ պատասխանողի, եթե այդ բառակապակցությունները մեկնաբանվում են տառացի, ապա «չստացված» բառը չի ներառում «չնշանակված» իմաստը, իսկ «կենսաթոշակ վճարելու համար դիմելը» իմաստային առումով տարբերվում է «կենսաթոշակ նշանակելու համար դիմելուց»: Այսպիսով, կենսաթոշակ կարող է ստացվել միայն դրա նշանակվելուց հետո, ինչպես և կենսաթոշակ վճարելու մասին դիմում կարելի է գրել միայն արդեն իսկ նշանակված, սակայն զանազան պատճառներով չստացված կենսաթոշակի համար:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ դիմողի բերած հիմնավորումներն ու եզրահանգումը բավարար հիմք չեն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածը ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներին հակասող ճանաչելու համար:

5. Քննությամբ պարզվեց, որ ըստ էության դիմողի կողմից վիճարկվում է ոչ թե «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածն ամբողջությամբ, այլ հոդվածի 1-ին մասի դրույթը:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հռչակելով իրեն որպես սոցիալական պետություն, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսում և երաշխավորում է յուրաքանչյուր անձի սոցիալական ապահովության իրավունքը, որն իր բովանդակության մեջ ընդգրկում է նաև կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ օրենքով սահմանված ձևերով ու ծավալով: Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով»:

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայով (12-րդ հոդված) և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով (9-րդ հոդված) Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է պարտավորություններ՝ երաշխավորելու մարդկանց սոցիալական ապահովության, ներառյալ՝ սոցիալական ապահովագրության իրավունքը:

7. ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված պահանջները «Պետական կենսաթոշակների մասին»

ՀՀ օրենքում իրացվել են հետևյալ կարգով: Օրենքի 11-րդ հոդվածով սահմանվում են կենսաթոշակի հետևյալ տեսակները՝ ապահովագրական և սոցիալական: Դրանցից առաջինը նշանակվում է անձի աշխատանքային գործունեության և դրա ընթացքում արված պարտադիր սոցիալական ապահովության վճարների հիման վրա, իսկ երկրորդը՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը նախատեսում են. «Կենսաթոշակը քաղաքացու գրավոր դիմումի հիման վրա նշանակում է կենսաթոշակային սոցիալական ապահովագրություն իրականացնող լիազոր մարմնի ստորաբաժանումը... ըստ Հայաստանի Հանրապետությունում նրա հաշվառման վայրի, իսկ հաշվառման վայր չունեցող անձին կենսաթոշակ նշանակվում է՝ ըստ նրա փաստացի բնակության վայրի:

Կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր է համարվում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով դիմումն ընդունելու օրը»:

Այսինքն՝ ընդհանրապես կենսաթոշակի հետ կապված՝ անձի և իրավասու մարմնի միջև իրավահարաբերություններ առաջանալու համար որպես իրավաբանական փաստ օրենսդիրը դիտում է ՀՀ կառավարության կողմից 29.05.2003թ. թիվ 793 որոշմամբ սահմանված կարգով դիմում ներկայացնելը և այդ դիմումի հիման վրա կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ ընդունված անհատական իրավակիրառական ակտը:

Օրենքի 51-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակը նշանակվում է՝

1) դիմելու օրվանից,

2) բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե կենսաթոշակի նշանակման դիմումը տրվել է այդ օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում,

3) կերակրողի մահվան օրվանից, եթե կենսաթոշակի նշանակման դիմումը տրվել է այդ օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում:

Նշված հոդվածի և 57-րդ հոդվածի վիճարկվող դրույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ անձին կենսաթոշակ նշանակվում է դիմելու օրվանից՝ բացառությամբ 51-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերի: Սակայն այս դեպքերում ևս օրենսդիրը սահմանում է որոշակի ժամկետ (եռամսյա և վեցամսյա ժամկետ): Իսկ մնացած դեպքերում, անկախ նրանից, թե կենսաթոշակի իրավունքը ծագելուց հետո որքան ժամանակ է անցել, կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից, և 57-րդ հոդվածի վիճարկվող դրույթում «Չստացված կենսաթոշակի գումարները» արտահայտությունը վերաբերում է կենսաթոշակ նշանակելուց հետո որոշակի

հանգամանքների բերումով չստացված կենսաթոշակի համար դիմում ներկայացնելուն և կենսաթոշակը վճարելուն:

8. ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ նախադասության համաձայն. «Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով»: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կենսաթոշակ կարող է ստացվել միայն դրա նշանակվելուց հետո, ինչպես և կենսաթոշակ վճարելու մասին դիմում կարելի է գրել միայն արդեն իսկ նշանակված, սակայն զանազան պատճառներով չստացված կենսաթոշակի համար: Ընդ որում, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածը չի սահմանափակում անձի՝ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված իրավունքի լրիվ ծավալով իրացումը, հետևաբար, դիմողի փաստարկները հիմք չեն հանդիսանում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածը ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներին հակասող ճանաչելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ, 64-րդ և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝

ՈՐՈՇԵՑ

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

23 հոկտեմբերի 2007 թվականի
ՍԴՈ-716

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԲԵՐՏ ՄՈՎՍԵՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ 57-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱ-ՐԱՆԻ 23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2007Թ. ՍԴՈ-716 ՈՐՈՇՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀՀ սահմանադրական դատարանի 23 հոկտեմբերի 2007թ. ՍԴՈ-716 որոշման կապակցությամբ ունեմ հետևյալ նկատառումները.

Գործի քննության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը չանդրադարձավ այն փաստին, որ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահ՝ Վ. Խաչիկյանի գրության համաձայն՝ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակները և պետական սոցիալական ապահովագրության այլ ծրագրերը վճարվում են «ՎՏԲ-Հայաստան բանկ», «Հայփոստ» ՓԲ ընկերությունների միջոցով վերջիններիս հետ կնքած ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա և Հիմնադրամի Վճարումների Ծառայության կողմից:

ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության միջև 2001 թվականի նոյեմբերի 28-ին կնքվել է պայմանագիր, որի համաձայն. ««Պատվիրատուն» «Կատարողին» դրամական միջոցներ է հատկացնում «Կատարողին» սպասարկող բանկերում նրա անունով բացված հաշվարկային հաշիվների փոխանցելու միջոցով՝ ՀՀ տարածքում ՀՀ քաղաքացիներին տրվող կենսաթոշակները, երեխայի ծննդյան միանվագ նպաստները...»«:

ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության միջև 2001 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 31.10.2005 թվականի համաձայնագրի «զ» ենթակետի համաձայն. «Կենսաթոշակառուներին կենսաթոշակի յուրաքանչյուր ամսվա վճարումը կատարել ֆինանսավորված գումարը «Կատարողի» մասնաճյուղերի ընթացիկ հաշիվներին ամրագրվելուց հետո 12 օրացուցային օրվա ընթացքում»:

Այնուհետև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության միջև 2001 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 11.12.2006 թվականի համաձայնագրի 3 կետի «բ» ենթակետի համաձայն. ««զ» ենթակետում «1» թիվը փոխարինել «15» թվով»:

Այնինչ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է. «Յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է հաջորդ ամսվա ընթացքում՝ ըստ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակառուի փաստացի բնակության վայրի»:

Իսկ «Պետական կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է. «Չստացված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ժամանակահատվածի համար, սակայն կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող երեք տարուց ոչ ավելի»:

Այս օրենքի հիման վրա ընդունվել է ՀՀ կառավարության 29 մայիսի 2003 թվականի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 793-Ն որոշումը, որում նույնպես կենսաթոշակ ստանալու համար ժամկետային սահմանափակում չկա:

Այսինքն՝ ոչ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի, ոչ էլ ՀՀ կառավարության թիվ 793 որոշումը կենսաթոշակառուի կենսաթոշակը ստանալու համար որևէ ժամկետային սահմանափակում չեն նախատեսում: Դեռ ավելին՝ օրենքը սահմանում է կենսաթոշակառուի իրավունքը՝ տվյալ ամսվա իր կենսաթոշակը ստանալ հաջորդ ամսվա ողջ ընթացքում: Ուստի ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության միջև 2001 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրով նախատեսված 12 կամ 15-օրյա ժամկետը սահմանափակում է կենսաթոշակառուի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքը:

ՀՀ սահմանադրական դատարանը չի անդրադարձել նաև վիճարկվող՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով սահմանված 3 տարվա ժամկետին:

ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով»:

Իսկ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում է. «Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»:

Այս հարցի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը տվել է իր իրավական դիրքորոշումը իր ՍԴՈ-649 որոշմամբ, որը սահմանում է.

«Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը սոցիալական

ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է նաև ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի»:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ կենսաթոշակի իրավունքը, եթե այն հիմնված է մուծումների վրա, որոշակի հանգամանքներում կարող է դիտվել որպես սեփականության իրավունք ((Azinas v. Cyprus (Judgment, 20 June 2002)):

Դատարանն իր Gaygusuz v. Austria (16 September 1996, Reports of Judgments and Decisions 1996-IV, և 04.02.0804.02.0839-41) գործով կայացրած որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Սոցիալական վճարներ ստանալու իրավունքը կապված է ներդրված վճարների հետ, եթե նման ներդրումներ կատարվել են, ապա չի կարող մերժվել այդ անձի նկատմամբ թոշակի նշանակումը»:

Այսպիսով գտնում եմ, որ թե՛ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում, թե՛ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության միջև կնքված պայմանագրում սահմանված ժամկետները սահմանափակում են կենսաթոշակառուի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սոցիալական ապահովության և սեփականության իրավունքները և ՀՀ սահմանադրական դատարանը այս հարցի վերաբերյալ պետք է արտահայտեր իր իրավական դիրքորոշումը:

29 հոկտեմբերի 2007 թվականի

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 73-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 15 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ա. Հարությունյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի և 101-րդ հոդվածի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ և 68-րդ հոդվածների համաձայն՝

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 02.10.2007թ. մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի և պատասխանող կողմի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

ՊԱՐԶԵՑ.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002թ. նոյեմբերի 19-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. մարտի 31-ին և ուժի մեջ է մտել 2003թ. ապրիլի 10-ից:

Օրենքի 73-րդ հոդվածը, որը շարադրված է «Անցումային դրույթներ» 14-րդ գլխում, սահմանում է. «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է կենսաթոշակի գործում առկա փաստաթղթերով հաշվարկված ստաժին համապատասխան՝ հաշվի առնելով սույն օրենքի 17-19-րդ հոդվածներին համապատասխան սահմանված հիմնական կենսաթոշակի չափը, ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը և կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

Լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով և համարվում է նոր նշանակում:

Եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով»:

2. Դիմող կողմը վիճարկում է օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասին՝ այն հիմնավորմամբ, որ այդ դրույթը, վատթարացնելով քաղաքացիների իրավական վիճակը, կիրառվում է հետադարձ ուժով: Մինչդեռ, անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերին, ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան, չի կարող հետադարձ ուժ տրվել:

Դիմողը փաստում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի ապահովագրական ստաժ, բացառությամբ նույն օրենքի 48 հոդվածով սահմանված կարգի: Նշված 48-րդ հոդվածը, սակայն, առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանքը չի դիտում որպես ստաժի հաշվարկման առանձնահատկություն: Մինչդեռ, նախկինում գործող «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատելու ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվարկվում էր մեկուկես անգամ:

Դիմողը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նույն օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի

դրույթների հետ փոխադարձ կապի մեջ, մինչև օրենքի ուժի մեջ մտնելն առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած և կենսաթոշակի նշանակումից հետո աշխատանքային գործունեությունը շարունակած անձանց կենսաթոշակային իրավունքները գնահատելիս կամ բացառում է նշված հիմքով աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկումը, կամ թույլ չի տալիս ապահովագրական ստաժում հաշվարկել կենսաթոշակի նշանակումից հետո իրականացված աշխատանքային գործունեության այն ժամանակահատվածները, որոնց ընթացքում կատարվել են սոցիալական ապահովագրության վճարները: Դրանով օրենքը վատթարացնում է քաղաքացիների վիճակը և վերացնում նախկինում գործող օրենսդրությամբ ձեռք բերված նրանց իրավունքները, ուստի պատկանում է այն նորմերի թվին, որոնց չի կարող հետադարձ ուժ տրվել:

3. Ըստ պատասխանող կողմի՝ դիմողի փաստարկները հիմնավոր են, վիճարկվող նորմով հետադարձ ուժ է տրվել քաղաքացիների իրավական վիճակը վատթարացնող դրույթի, վերացվել է նախկինում գործող ՀՀ օրենսդրությամբ առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատելու համար քաղաքացիներին տրվող արտոնությունը՝ կապված այդպիսի պայմաններում աշխատելու ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվարկելու առանձնահատկությունների հետ:

Պատասխանող կողմն ակնհայտ համարելով վիճարկվող նորմի հակասությունը ՀՀ Սահմանադրությանը՝ գտնում է նաև, որ օրենքի վիճարկվող դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու դեպքում առանձնապես վնասակար և առանձնապես ծանր պայմաններում աշխատած անձանց համար ապահովագրական ստաժի հաշվարկման խնդիրը չի լուծվում: Այս առումով, թերևս, անհրաժեշտություն կառաջանա խնդիրը լրացուցիչ կարգավորել օրենսդրական մակարդակում:

4. ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի մերժման սկզբունքը: Վերջինս հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով:

5. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածը սահմանում է մինչև այդ օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի վերահաշվարկման կարգը: Օրենսդիրն այդ կարգը սահմանելիս տարբերակել է կենսաթոշակը վերահաշվարկելու հետևյալ երկու իրավիճակները.

- երբ կենսաթոշակի վերահաշվարկը կատարվում է արդեն իսկ գործում առկա փաստաթղթերի հիման վրա,

- երբ ներկայացվում են ստաժը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր:

Առաջին դեպքում, նախկինում նշանակված կենսաթոշակը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված նոր կարգով վերահաշվարկելիս հիմք է ընդունվում նախկինում գործող «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 06.12.1995թ., ուժը կորցրել է 10.04.2003թ.) հիման վրա հաշվարկված աշխատանքային ստաժը: Այդ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն, որը սահմանում էր աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկման կարգը, առանձնապես վնասակար և առանձնապես ծանր պայմաններում աշխատելու ժամանակահատվածում աշխատանքային ստաժը հաշվարկվում էր մեկ և կես անգամ: Հաշվի առնելով, որ, ըստ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի, նախկինում նշանակված կենսաթոշակը նշված օրենքով սահմանված կարգով վերահաշվարկելիս հիմք է ընդունվում արդեն իսկ հաշվարկված ստաժը, ապա վերահաշվարկելիս պահպանվում է աշխատանքային ստաժի այն արտոնյալ հաշվարկման կարգը, որը գործել է «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի հիման վրա:

Մինչդեռ, երկրորդ դեպքում, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելիս նախկինում նշանակված կենսաթոշակն այդ օրենքով սահմանված նոր կարգով վերահաշվարկելիս այդ օրենքի հիման վրա է հաշվարկվում և՛ ստաժի այն հատվածը, որն արդեն հիմնավորված է գործում առկա փաստաթղթերով, և՛ լրացուցիչ փաստաթղթերով ներկայացված ստաժը:

Իսկ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի ապահովագրական ստաժ, բացառությամբ այդ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված կարգի:

Վերջինս էլ, իր հերթին, առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանքը չի դիտում որպես ստաժի հաշվարկման առանձնահատկություն: Ուստի կենսաթոշակը նշված դրույթների հիման

վրա վերահաշվարկելիս չի պահպանվում առանձնապես վնասակար և առանձնապես ծանր պայմաններում աշխատանքի ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկման կարգը:

Օրենսդիրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման կարգավորման արդյունքում վերահաշվարկ կատարելիս մեծ մասամբ հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ վերահաշվարկված գումարն ավելի նվազ լինի, քան նախկինում նշանակվածը, օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսել է, որ եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

Սակայն այս դրույթը լիովին չի լուծում քաղաքացու համար վերահաշվարկի արդյունքում ստեղծվող բացասական հետևանքները վերացնելու խնդիրը: Նման կարգավորման արդյունքում, թեև ապահովվում է նախկինում հաշվարկված կենսաթոշակի չափը, այնուամենայնիվ, կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանք կատարած անձի՝ լրացուցիչ փաստաթղթերով հիմնավորվող ստաժն ընդհանրապես անտեսվի և լրացուցիչ փաստաթղթերի ներկայացումն իմաստ չունենա, քանի որ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման դեպքում նոր կարգով վերահաշվարկելիս կենսաթոշակի նախկինում հաշվարկված չափը կարող է նվազել:

6. Մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելն առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած և կենսաթոշակի նշանակում ստացած անձինք ակնկալիք են ունեցել, որ իրենց կենսաթոշակը ենթակա է հաշվարկման արտոնյալ կարգով: Սակայն նույն օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով այդ արտոնյալ կարգը վերացվել է՝ անտեսելով նաև նշված պայմաններում աշխատած անձանց ակնկալիքն առ այն, որ իրենց կենսաթոշակը հաշվարկվելու է արտոնյալ կարգով: Անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, ի թիվս այլ սկզբունքների, որպես պետական կենսաթոշակային ապահովության և պետական կենսաթոշակային ապահովագրության կազմակերպման և իրականացման սկզբունք ամրագրում է նաև սոցիալական համերաշխության և սոցիալական արդարության ապահովումը: Սոցիալական արդարության սկզբունքը պահանջում է, որ որոշակի առավելություններ ու արտոնություններ տրամադրվեն վնասակար և ծանր պայմաններում աշխատող անձանց:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի 73-րդ հոդվածով նախատեսված կարգավորման արդյունքում կարող է առաջանալ նաև օրենքի առջև հավասարության սկզբունքի ապահովման հետ կապված խնդիր: Սահմանելով վերահաշվարկման կարգը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու և չներկայացնելու պարագայում, օրենքի վիճարկվող նորմը տարբերակված մոտեցում է ցուցաբերում նույն ժամանակահատվածում նույն պայմաններում ձեռք բերված աշխատանքային ստաժի հաշվարկման կարգի նկատմամբ: Օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման արդյունքում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ միևնույն ժամանակահատվածում միևնույն պայմաններում աշխատած անձանց համար սահմանվեն կենսաթոշակի տարբեր չափեր:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է, եթե առկա չէ օբյեկտիվ և պատճառաբանված արդարացում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տարբերակված մոտեցման հիմքում ընկած այնպիսի ձևական հանգամանքը, ինչպիսին, ի հիմնավորումն աշխատանքային ստաժի, լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու հանգամանքն է, չի կարող դիտվել որպես օբյեկտիվ, իրավաչափ և ողջամիտ արդարացում:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը: Մինչդեռ, օրենքի վիճարկվող նորմն առնչվել է բազմաթիվ մարդկանց իրավունքներին: Միաժամանակ, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի ներկայացրած տեղեկանքի համաձայն՝»Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո արտոնյալ պայմաններով կենսաթոշակների վերահաշվարկման արդյունքում ապահովագրական ստաժը պակասել է 14.826 տարով (ամսական 3.4 մլն դրամով):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ, 64-րդ և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

ՈՐՈՇԵՑ.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող և անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա սույն որոշումը տարածել նաև դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

15 հունվարի 2008 թվականի
ՍԴՈ-723

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ (19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ, ՀՕ-519-Ն) 47-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 29 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ա. Հարությունյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

հրավիրված՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Վ. Խաչիկյանի,

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի և 101 հոդվածի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ և 68-րդ հոդվածների համաձայն՝

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (19 նոյեմբերի 2002 թվականի, ՀՕ-519-Ն) 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 02.10.2007թ. մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող կողմի և պատասխանող կողմի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, սահմանադրական դատարանում ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչների վերլուծությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

ՊԱՐԶԵՑ.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002 թվականի նոյեմբերի 19-ին և ուժի մեջ մտել 2003 թվականի ապրիլի 10-ից:

Օրենքի 47-րդ հոդվածը՝հաշվի առնելով 2007թ. նոյեմբերի 19-ի ՀՕ-247-Ն օրենքով կատարված փոփոխությունը, սահմանում է. «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը և անհատական հաշվառման բազայի ձևավորումն ապահովագրված անձի ունեցած աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է, իսկ 1992 թվականի հունվարից սկսած՝ նաև սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը: Աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով:

Պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում:

Դատական կարգով կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն տասը տարվա ստաժից ոչ ավելի»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»:

Դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652 (կետ 6), 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665 (կետ 5), 2007թ. հունվարի 16-ի ՍԴՈ-673 (կետեր 8-9), 2007թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշումներում:

2. Դիմող կողմը գտնում է, որ իր կողմից վիճարկվող դրույթը, որի համաձայն. «Պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում:

Դատական կարգով կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն տասը տարվա ստաժից ոչ ավելի», հակասում է ՀՀ Սահմանադրությանը՝ հետևյալ պատճառով:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Սոցիալական իրավունքների շարքում առանձնակիորեն կարևորվում է քաղաքացիների կենսաթոշակային իրավունքը, որն իր կարգավորումն է ստանում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքով սահմանվում են կենսաթոշակի նշանակման համար կիրառվող գործակիցները, որտեղ կարևոր նշանակություն է տրվում ապահովագրական ստաժին: Հետևաբար, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանվող՝ ստաժի հաստատմանը վերաբերող ժամկետի սահմանափակումը և պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում դրա հաստատման արգելքը խախտում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից յուրաքանչյուրի օգտվելու սահմանադրական իրավունքը:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմողի հարցադրումները հիմնավոր են և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Սահմանադրության առանձին դրույթների անհամապատասխանության խնդրի առկայությունն ակնհայտ է հետևյալ պատճառաբանությամբ: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները..., ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»: Նույն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»: Իսկ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության

արդյունավետ միջոցների իրավունք»: Փաստորեն, օրենքով սահմանափակվել է քաղաքացիների՝ կենսաթոշակային իրավունքների պաշտպանության նպատակով դատական պաշտպանության դիմելու իրավունքը:

4. Օրենքը՝ որպես պետական կենսաթոշակային ապահովության և պետական կենսաթոշակային ապահովագրության կազմակերպման և իրականացման սկզբունք, ի թիվս այլոց, ամրագրում է պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության պարտադիրության սկզբունքը և անհատական (անձնավորված) ապահովագրական հաշիվներում արտացոլվող՝ կենսաթոշակային ապահովագրության համար կատարված վճարումների մասին տեղեկատվության հիման վրա կենսաթոշակների նշանակման և վճարման ապահովման սկզբունքը: Այս սկզբունքներին համապատասխան՝ օրենքը, կենսաթոշակի չափը պայմանավորելով կատարված ապահովագրական վճարումներով և ապահովագրական ստաժի տևողությամբ (հոդված 40), ապահովագրական կենսաթոշակի (տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մասնակի) իրավունք է վերապահում միայն այն անձանց, ովքեր կատարել են պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության վճարումներ: Մասնավորապես, ապահովագրական տարիքային կենսաթոշակի իրավունքը վերապահվում է 63 տարին լրացած անձանց՝ 25 տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում:

Ըստ օրենքի տրամաբանության՝ կատարված ապահովագրական վճարումներով և ապահովագրական ստաժի տևողությամբ է պայմանավորվում կենսաթոշակի չափը: Այս եզրահանգումն ուղղակիորեն բխում է օրենքի 40 հոդվածից և անուղղակիորեն՝ օրենքով ամրագրված առանձին սկզբունքներից և դրույթներից (մասնավորապես՝ օրենքի 2, 9 հոդվածներ):

Այն դեպքում, երբ անձը զրկված է փաստացի ապահովագրական ստաժը հաստատելու հնարավորությունից, այս տրամաբանությունը խախտվում է, քանզի հնարավոր է, որ անձը փաստացիորեն կատարել է ապահովագրական վճարումներ, սակայն համապատասխան փաստաթղթեր չունենալու պատճառով զրկվում է այդ վճարումների կատարմամբ պայմանավորված չափով կենսաթոշակ ստանալու հնարավորությունից:

5. Օրենքի հիման վրա ձևավորվում է կենսաթոշակային ապահովագրության ենթակա անձանց անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների միասնական բազա:

Կենսաթոշակային սոցիալական ապահովագրության բազայի տվյալներն օգտագործվում են կենսաթոշակ նշանակելու, հաշվարկելու (վերահաշվարկելու), վճարելու համար: Օրենքի ուժի մեջ մտնելուց և նշված անհատական հաշվառման բազայի ձևավորումից հետո ապահովագրված անձի ձեռք

բերած ապահովագրական ստաժը հաշվարկվում է անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների հիման վրա: Իսկ մինչ այդ ապահովագրված անձի ունեցած աշխատանքային ստաժը հաշվառվում է ապահովագրական ստաժում համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ այդ փաստաթղթերն են՝ աշխատանքային գրքույկը, իսկ 1992թ. հունվարից սկսած՝ նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշումը սահմանում է այն փաստաթղթերի ցանկը, որոնք հաստատում են ապահովագրական ստաժը՝ աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում:

Ինչպես օրենքի վիճարկվող, այնպես էլ մյուս դրույթների վերլուծությունը վկայում է, որ ապահովագրական ստաժի հաստատման խնդիր կարող է առաջանալ միայն մինչև վիճարկվող օրենքի դրույթի հիման վրա կենսաթոշակային ապահովագրության ենթակա անձանց անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների միասնական բազայի ստեղծումը ձեռք բերված ապահովագրական ստաժի կապակցությամբ:

6. Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու նախապայման է հանդիսանում 25 տարվա ապահովագրական ստաժի (պահանջվող ստաժ) առկայությունը: Օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակի չափը հաշվարկվում է կենսաթոշակի հիմնական և ապահովագրական մասերի գումարից:

Կենսաթոշակի ապահովագրական մասը հաշվարկվում է մինչև անձնավորված հաշվառման ներդրումը ձեռք բերված ապահովագրական ստաժի և անձնավորված հաշվառման ներդրումից հետո անհատական ապահովագրական հաշիվներում արտացոլվող՝ կենսաթոշակային ապահովագրության համար կատարված վճարումների մասին տեղեկատվության հիման վրա: Օրենքի 16-րդ հոդվածում տրվում է կենսաթոշակը հաշվարկելու բանաձևը:

Նշված բանաձևի վերլուծությունը վկայում է, որ կենսաթոշակի չափը որոշելիս էական նշանակություն ունի ոչ միայն պահանջվող ապահովագրական ստաժը, այլև փաստացի ապահովագրական ստաժը:

7. Գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը կապված է որոշակի հանգամանքների հետ, որոնց օրենքը տալիս է իրավական նշանակություն (իրավաբանական փաստեր): Ապահովագրական ստաժը հանդիսանում է այն իրավաբանական փաստը, որի հիման վրա ծագում է ապահովագրական կենսաթոշակի

իրավունքը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 34-րդ գլուխը նվիրված է իրավաբանական փաստերի հաստատման վերաբերյալ գործերի քննության կարգին: Նշված օրենսգրքի 189-րդ հոդվածը սահմանում է այն իրավաբանական փաստերի ոչ սպառիչ ցանկը, որոնք ենթակա են դատարանի կողմից հաստատման: Այդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ դատարանը, օրենքով նախատեսված դեպքերում, քննում է իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստեր: Ըստ քննության առարկա հանդիսացող նորմերի՝ օրենսդիրն աշխատանքային ստաժը հաստատելու իրավասությունը վերապահել է դատարանին, սակայն, միաժամանակ, վիճարկվող դրույթով այդ իրավասության իրականացումը ենթարկել է ձևական հիմքով սահմանափակումների՝ անձին զրկելով իր իրավունքի ծագման համար անհրաժեշտ իրավաբանական փաստը հաստատելու նպատակով դատարան դիմելու և դատարանին՝ իրեն օրենքով վերապահված իրավասությունն արդյունավետորեն և լիարժեքորեն իրականացնելու հնարավորությունից:

8. Օրենսդրությամբ թույլատրված է իրավաբանական փաստերը հաստատել ոչ միայն դատական կարգով, այլ նաև վարչական, նոտարական կարգով և այլ մարմինների կողմից:

Վիճարկվող օրենքի 48-րդ հոդվածը ևս նախատեսում է ապահովագրական ստաժի հաստատման վարչական կարգ: Այդ հոդվածի 5-րդ կետը, մասնավորապես, սահմանում է, որ պատերազմների, ռազմական գործողությունների, տարերային աղետների, վթարների, արհավիրքների և այլ արտակարգ իրավիճակների հետևանքով ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման անհնարինության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստեղծում է ապահովագրական ստաժ սահմանող հանձնաժողովներ, որոնց կազմի մեջ մտնում են գործադիր իշխանությունների, գործատուների, արհմիությունների կամ աշխատողների կողմից լիազորված այլ ներկայացուցիչներ: Նման հանձնաժողով ստեղծվել է ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 21-ի թիվ 820-Ն՝ «1988 թվականի երկրաշարժի հետևանքով Սպիտակի նախկին վարչական շրջանի տարածքի քաղաքացիների ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման անհնարինության պատճառով ապահովագրական ստաժ սահմանող հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» որոշմամբ:

Օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ կետի գործողության շրջանակը, սակայն, որոշակիորեն սահմանափակ է՝ այս դրույթն առնչվում է միայն այն դեպքերին, երբ փաստաթղթերը չեն պահպանվել այդ հոդվածում նշված արտակարգ (ֆորսմաժորային) հանգամանքների պատճառով:

Սակայն, նույնիսկ ապահովագրական ստաժի վերոհիշյալ վարչական կարգով հաստատման հնարավորության առկայությունը չպետք է անձանց զրկի իրավաբանական փաստերի հաստատման խնդրով դատարան դիմելու իրավունքից, քանզի ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը երաշխավորում է քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության չսահմանափակվող հնարավորություն:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ, ի տարբերություն ապահովագրական ստաժի դատական կարգով հաստատման, ապահովագրական ստաժի՝ վարչական կարգով հաստատման դեպքում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ապահովագրական ստաժի որևէ ժամկետային սահմանափակում, ինչը ոչ միայն չի ապահովում միևնույն հասարակական հարաբերության կարգավորման միասնականությունը, այլև անձի շահերի տեսանկյունից անիմաստ է դարձնում արտակարգ իրավիճակների հետևանքով ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերի կորստի դեպքում դատական պաշտպանության իրավունքից օգտվելը:

9. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենքի այլ հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթներն առնչվում են ոչ միայն Սահմանադրության 18-րդ հոդվածին, այլ նաև Սահմանադրության այլ հոդվածների պահանջներին: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով»:

Այս հոդվածի բովանդակությունից բխում է, որ ՀՀ Ազգային ժողովին է պատկանում կենսաթոշակների ծավալները և ձևերը, դրանց նշանակման պայմանները և կարգը սահմանելու լիազորությունը: Կենսաթոշակի նշանակման պայմանները բավարարելու դեպքում անձը ձեռք է բերում կենսաթոշակի իրավունք, իսկ պետության վրա դրվում է այդ իրավունքի իրականացումն ապահովելու պարտականություն: Անձին զրկելով իր ունեցած փաստացի ապահովագրական ստաժը հաստատելու հնարավորությունից, օրենսդիրն ուղղակիորեն սահմանափակում է անձի սոցիալական ապահովության իրավունքի մաս կազմող կենսաթոշակի իրավունքը: Այդ սահմանափակումը, մասնավորապես, կարող է դրսևորվել նրանով, որ հնարավորություն չունենալով ապացուցել պահանջվող ստաժը (25 տարի) գերազանցող ապահովագրական ստաժի առկայությունը՝ անձը զրկվում է ավելի շատ կենսաթոշակ ստանալու հնարավորությունից, քանզի ապահովագրական

ստաժի՝ պահանջվող ստաժը գերազանցող տարիներն էական նշանակություն ունեն կենսաթոշակի չափը որոշելիս:

10. ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս հոդվածի պահանջներին համապատասխան պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմերը հնարավորություն չեն տալիս այն անձանց, որոնց ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթղթերը բացակայում են, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթուղթ ունեցող անձինք: Վիճարկվող դրույթի կիրառմամբ ձևական հիմքով (ստաժը հիմնավորող փաստաթղթերի բացակայություն) անհավասար դրություն է ստեղծվում փաստացիորեն միևնույն ապահովագրական ստաժն ունեցող անձանց միջև:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

ՈՐՈՇԵՑ.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ և 37-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա սույն որոշումը տարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

29 հունվարի 2008 թվականի ՍԴՈ-731

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ, Վ. ԱԲԵԼՅԱՆԻ, Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ, Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ, Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի մայիսի 18-ին դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 18.12.2006 թվականի վճռի դեմ՝ ըստ Նունիկ Պետրոսյանի դիմումի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին քաղաքացիական գործով,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ դիմումատուն պահանջել է հաստատել 1952-1963 թվականների ընթացքում Ադրբեջանի Հանրապետության Չարդախլու գյուղում՝ որպես բանվոր աշխատած լինելու վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը՝ կենսաթոշակի վերահաշվարկ կատարելու նպատակով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 20.07.2006 թվականի վճռով դիմումը մերժվել է:

Դիմումի վերաքննության փուլում դիմողը պահանջը փոփոխել է և պահանջել հաստատել 1952-1962 թվականների ընթացքում Ադրբեջանի Հանրապետության Չարդախլու գյուղում՝ որպես բանվոր, աշխատած լինելու վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը՝ կենսաթոշակի վերահաշվարկ կատարելու նպատակով:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 18.12.2006 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը բողոքի սույն հիմքը պատճառաբանել է հետևյալ փաստարկով:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ տարիքային կենսաթոշակի իրավունք ունի 63 տարին լրացած անձը՝ 25 տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում: Նույն օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում: Դատական կարգով կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն 10 տարվա ստաժից ոչ ավելի:

Այսինքն՝ դատական կարգով հաստատման ենթակա է պահանջվող 25 տարվա ապահովագրական ստաժի պակասող մասը: Իսկ դիմումատուի ստաժը կազմում է 33 տարի, 8 ամիս, 16 օր: Փաստորեն պահանջվող 25 տարվա ապահովագրական ստաժն արդեն առկա է, հետևաբար դիմումատուի 1952-1963 թվականների ստաժը դատական կարգով հաստատման ենթակա չէ:

Բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 18.12.2006 թվականի վճիռը, փոփոխել այն՝ Նունիկ Պետրոսյանի դիմումը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) վճռաբեկ բողոքին կից ներկայացված Կենտրոն սոցիալական ապահովագրության տարածքային կենտրոնի 11.03.2003 թվականի հաշվարկ-կարգադրության համաձայն՝ 15.09.1964 թվականից մինչև 01.10.2001 թվականն ընկած ժամանակահատվածի համար Նունիկ Պետրոսյանի ընդհանուր ապահովագրական ստաժը կազմում է 33 տարի, 8 ամիս, 16 օր:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

Բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Պետական կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակներն ըստ տեսակների լինում են ապահովագրական և սոցիալական: Նշված օրենքի իմաստով ապահովագրական կենսաթոշակի համար պահանջվող (անհրաժեշտ) ապահովագրական ստաժը կազմում է 25 տարի:

«Պետական կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ աշխատանքային ստաժը հաստատող՝ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով: Պահանջվող ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում:

Դատական կարգով կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն տասը տարվա ստաժից ոչ ավելի:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 15.09.1964 թվականից մինչև 01.10.2001 թվականն ընկած ժամանակահատվածի համար Նունիկ Պետրոսյանի ընդհանուր ապահովագրական ստաժը կազմում է 33 տարի, 8 ամիս, 16 օր: Այսինքն՝ ըստ դիմումատուի կենսաթոշակային գործում առկա տվյալների, վերջինիս ապահովագրական ստաժը գերազանցում է ապահովագրական կենսաթոշակի իրավունք ունենալու համար պահանջվող 25 տարվա ապահովագրական ստաժը: Հետևաբար «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի ուժով Նունիկ Պետրոսյանի 1952 թվականից մինչև 1963 թվականն ընկած ժամանակահատվածի ապահովագրական ստաժը վերականգնելու պահանջի մասին դատարան ներկայացված դիմումը հատուկ վարույթի կարգով դատարանում քննության ենթակա չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Նույն օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանը կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջությամբ կամ դրա մի մասը, եթե գործի

վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերն ի հայտ են եկել ստորադաս դատարանում գործի քննության ժամանակ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն բողոքի հիմքը հիմնավոր է, և դրա առկայությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելու, այն է՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 18.12.2006 թվականի վճիռը բեկանելու և քաղաքացիական գործի վարույթը կարճելու բավարար հիմք է հանդիսանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 18.12.2006 թվականի վճիռը և քաղաքացիական գործի վարույթը կարճել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
Վ. ԱԲԵԼՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Է. ՀԱՅՐԻՅԱՆ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ա. Մկրտումյանի
մասնակցությամբ դատավորներ՝	Ս. Անտոնյանի
	Ս. Գյուրջյանի
	Է. Հայրիյանի
	Ս. Սարգսյանի

2007 թվականի նոյեմբերի 9-ին դռնբաց դատական նիստում, քննելով Սիլվա Խաչատուրովայի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 14.03.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Սիլվա Խաչատուրովայի հայցի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ), ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է անվավեր ճանաչել Բանկի և Հիմնադրամի միջև 28.11.2001 թվականին կնքված Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1 կետի «զ» ենթակետը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 20.12.2006 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.03.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն վճռաբեկ բողոքը ներկայացրել է Սիլվա Խաչատուրովան:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Հիմնադրամը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ, 438-րդ հոդվածները, 328-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 5-րդ մասը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել վճռի այն պնդումը, թե «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը, համաձայն որի՝ կենսաթոշակը վճարվում է հաջորդ ամսվա ընթացքում, որևէ կապ չունի պայմանագրով սահմանված 12-օրյա ժամկետի հետ և այդ 12-օրյա ժամկետը նույնպես վերաբերում է հաջորդ ամսվան: Բացի այդ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին), իսկ իրավական ակտերով սահմանված ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով:

Հետևաբար, կենսաթոշակների վճարման 12-օրյա կամ 15-օրյա ժամկետ սահմանելը չի բխում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի պահանջից:

Այսինքն՝ հիմնադրամին իրավունք վերապահված չէ ընտրություն կատարել, թե հաջորդ ամսվա ո՞ր օրերին պետք է կենսաթոշակառուն ստանա իր կենսաթոշակը:

Հիմնադրամի և Բանկի միջև 28.11.2001 թվականին կնքված պայմանագրի պահանջը՝ 30 օրացուցային օրվա ժամկետի սահմանափակման վերաբերյալ, խախտում է կենսաթոշակառուների սոցիալական իրավունքը և կենսաթոշակի գումարներն ազատ տնօրինելու սահմանադրական իրավունքը (ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդված):

2) Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ մասը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել 446-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սեփական հայեցողությամբ պայմանագրի պայմանները որոշելու իրավունքը սահմանափակ-

ված է այն դեպքերով, երբ պայմանագրի համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանվում է օրենքով:

Վերաքննիչ դատարանը գնահատման չի արժանացրել նաև Պայմանագրի կնքման նպատակը, ինչի իրականացման պայմաններում կպարզվեր, որ Պայմանագիրը կնքվել է հօգուտ երրորդ անձի, տվյալ դեպքում՝ հօգուտ կենսաթոշակառուների:

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմը, համաձայն որի՝ երրորդ անձի կողմից պայմանագրով իր իրավունքից օգտվելու ցանկությունը պարտապանին հայտնելու պահից կողմերն առանց երրորդ անձի համաձայնության չեն կարող լուծել կամ փոփոխել իրենց կնքած պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով:

Կողմերը պայմանագիրը փոփոխել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի խախտմամբ:

3) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 926-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ կենսաթոշակառու Սիլվա Խաչատուրովան Հիմնադրամի շահառու լինելուց զատ, միաժամանակ Բանկի ավանդատու է, և իր բանկային հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու իրավունքները չի թույլատրվում սահմանափակել, բացի օրենքով նախատեսված դեպքերում հաշվում եղած դրամական միջոցների վրա արգելանք դնելուց կամ հաշվով գործառնությունները դադարեցնելուց՝ ինչպես ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 926-րդ հոդվածով:

4) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը վճռի պատճառաբանական մասում չի հիմնավորել, թե վիճարկվող պայմանագրի 2.1 կետի «զ» ենթակետը՝ կենսաթոշակառուի կողմից կենսաթոշակը Բանկի միջոցով ստանալու իրավունքի ժամկետի սահմանափակման դրույթը որքանո՞վ է համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 14.03.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.

Բողոքի բազմաթիվ ենթադրություններն այն մասին, որ Պայմանագիրը կնքվել է ՀՀ օրենսդրության, մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջների խախտմամբ և պարունակում է հայցվորի՝ կենսաթոշակը ստանալու իրավունքի ժամկետը սահմանափակող դրույթ՝ անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:

Կենսաթոշակները և սոցիալական ծրագրերի գծով իրականացվող այլ վճարումները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, այդ թվում՝ Բանկի հետ կնքված Պայմանագրի հիման վրա: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը սահմանում է տվյալ ամսվա կենսաթոշակը հաջորդ ամսվա ընթացքում վճարելու իմպերատիվ դրույթը, որն ի կատար ածելու համար պատասխանողների միջև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխան կնքվել է Պայմանագիրը:

Պայմանագրում վճարման 15-օրյա ժամկետ սահմանելիս, Հիմնադրամը, որպես վարչական մարմին, առաջնորդվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով իրեն վերապահված հայեցողական լիազորություններով և ընտրել հնարավոր իրավաչափ լուծումներից մեկը, այն է՝ վճարման համար սահմանել է որոշակի ժամկետ, հետևյալ նկատառումներից ելնելով՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 36.2-րդ հոդվածը սահմանում է պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի մուտքերի աղբյուրները, որոնց թվին են դասվում պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները: «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները պարտադիր սոցիալական ապահովագրության պետական ծրագրերի ֆինանսավորման նպատակով ապահովադիրների կողմից պարտադիր կարգով վճարվող միջոցներն են:

Իսկ նույն օրենքի 6-րդ հոդվածը սոցիալական վճարներ կատարող տարբեր ապահովադիրների համար սահմանում է դրանք հաշվարկելու և պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե փոխանցելու տարբեր ժամկետներ, ինչը բացառում է բոլոր ապահովադիրների կողմից սոցիալական վճարները միաժամանակյա փոխանցելու հանգամանքը, ինչն էլ հանգեցնում է կենսաթոշակները և սոցիալական ծրագրերի գծով իրականացվող այլ վճարումները սահմանված ժամանակացույցին համապատասխան կատարելուն:

Ինչ վերաբերում է հայցվորի կողմից մատնանշված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 926-րդ հոդվածին, ապա հարկ է նշել, որ այդ հոդվածի

պահանջը վերաբերում է բանկային հաշվում առկա դրամական միջոցների մնացորդներին, այլ ոչ թե մուտքագրման ենթակա և դեռևս չմուտքագրված գումարներին: Իսկ Պայմանագրի պահանջներին համապատասխան, առանց ավանդատուի հանձնարարականի բանկը իրավունք չունի ավանդագրել կենսաթոշակառուի կենսաթոշակի գումարը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Սիլվա Խաչատուրովան 15.10.1996 թվականից հանդիսանում է ծերության կենսաթոշակառու:

2) 28.11.2001 թվականի Բանկի և Հիմնադրամի միջև կնքվել է Պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ Բանկը պարտավորվել է Հիմնադրամի առաջադրանքով և վերջինիս կողմից հատկացված միջոցների հաշվին ՀՀ տարածքում իրականացնել կենսաթոշակառուներին կենսաթոշակների վճարում:

3) Բանկի և Հիմնադրամի միջև կնքվել է Համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր), որի 1.1.2 կետի համաձայն՝ Պայմանագրի 2.1 կետի «զ» ենթակետը վերաշարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ կենսաթոշակառուներին կենսաթոշակի յուրաքանչյուր ամսվա վճարումը կատարել ֆինանսավորված գումարը «կատարողի» (Բանկի) մասնաճյուղերի ընթացիկ հաշիվներին ամրագրվելուց հետո 12 օրացուցային օրվա ընթացքում:

Վերոհիշյալ Համաձայնագրի 1.1.2-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ Պայմանագրի 2.1-րդ կետի «ը» ենթակետից հետո ավելացվել է «ժ» ենթակետ հետևյալ խմբագրությամբ.

«Վճարումը սույն Պայմանագրով սահմանված ժամկետներում ավարտելուց հետո, ավելացած գումարները վերադարձնել «Պատվիրատուին» (Հիմնադրամին) 3 բանկային օրվա ընթացքում»:

4) Բանկի և Հիմնադրամի միջև 11.12.2006 թվականին կնքվել է Համաձայնագիր, որի 3-րդ կետով նախատեսվել է Պայմանագրի 2-րդ մասի «զ» ենթակետում «12» թիվը փոխարինել «15-ով»:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է հաջորդ ամսվա ընթացքում՝ ըստ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակառուի փաստացի բնակության վայրի:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված տարիքային ապահովագրական կենսաթոշակի իրավունք չունեցող անձին 65 տարին լրանալու դեպքում նշանակվում է ծերության սոցիալական կենսաթոշակ:

Այսինքն, տարիքային ապահովագրական կենսաթոշակի իրավունքի բացակայությունը և անձի՝ 65 տարին լրացած լինելն այն իրավաբանական փաստերն են, որոնց առկայության պայմաններում անձի մոտ ծագում է ծերության կենսաթոշակի իրավունք, այսինքն՝ իրեն հասանելիք կենսաթոշակի գումարի նկատմամբ սեփականության իրավունք:

Նման դիրքորոշում է արտահայտվել նաև ՀՀ սահմանադրական դատարանի 04.10.2006 թվականի թիվ 649 որոշմամբ, որի VII կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կենսաթոշակը, ինչպես նաև աշխատավարձը քաղաքացու վաստակած միջոցներն են և նրա սեփականությունը:

Կենսաթոշակի վճարումը սեփականատիրոջը սեփականությունը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ կենսաթոշակառուի սեփականությունն է: Հետևաբար, անհրաժեշտություն է ծագում դիտարկել Պայմանագրի վիճարկվող դրույթները նաև Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածների պահանջներից ելնելով, որոնցից առաջինը հռչակում է սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, իսկ երկրորդը հռչակում է անձին սեփականությունից զրկելու անթույլատրելիությունը:

Այս հարցի վերաբերյալ նույնպիսի դիրքորոշում ունի նաև Եվրոպական դատարանը: Այսպես, Եվրոպական դատարանն անդրադառնալով վերոհիշյալ խնդրին արտահայտել է հետևյալ տեսակետը. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասում նախատեսված «սեփականություն» հասկացությունն ունի ինքնուրույն նշանակություն, որը չի հանգեցվում ֆիզիկական իրերի նկատմամբ սեփականության իրավունքին և որը կախված չէ ներպետական իրավունքի ձևական որակումներով: Գույքային մի շարք իրավունքներ և շահեր նույնպես կարող են դիտարկվել որպես «սեփականության իրավունք» (տե՛ս Բեյելերն ընդդեմ Իտալիայի գործով Դատարանի 05.01.2000 թվականի վճռի 100-րդ կետը):

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը նշել է, որ գործող օրենսդրությամբ սահմանված չափով նպաստ ստանալու իրավունքը, Կոնվենցիայի 1-ին արձանագրության առաջին հոդվածի իմաստով հանդիսանում է գույքային իրավունք (տե՛ս Գայգուսուզն ընդդեմ Ավստրիայի գործով Դատարանի 31.08.1996 թվականի վճռի 41-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասը պետք է մեկնաբանել վերոշարադրյալի լույսի ներքո, այսինքն, ոչ թե որպես կենսաթոշակառուի՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը կոնկրետ որոշակի ժամկետում ստանալու իրավունք, այլ որպես իրավասու պետական մարմնի՝ ոչ ուշ քան մինչև տվյալ ժամկետի ավարտը կենսաթոշակի գումարը թոշակառուին վճարելու պարտականություն:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիլվա Խաչատուրովան արդեն իսկ սեփականություն իրավունք ունի իրեն հասանելիք կենսաթոշակի նկատմամբ, ուստի տվյալ ձևակերպումը չի կարող մեկնաբանվել որպես Սիլվա Խաչատուրովայի պարտականությունը հենց տվյալ ամսին ստանալ հասանելիք գումարը և սահմանափակել վերջինիս՝ տվյալ ժամկետն անցնելուց հետո՝ իր սեփականությունն ստանալու իրավունքը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկը հիմնավոր է համարում:

2) բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 446-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հօգուտ երրորդ անձի կնքված է համարում այն պայմանագիրը, որում կողմերը սահմանել են, որ պարտապանը պարտավոր է պարտավորությունը կատարել ոչ թե հօգուտ պարտատիրոջ, այլ պայմանագրում նշված կամ չնշված երրորդ անձի, որն իրավունք ունի պարտապանից պահանջել իր օգտին կատարելու պարտավորությունը:

Տվյալ դեպքում Պայմանագրի առարկան ծառայություններն են, որոնք Ընկերությունը պարտավորվել է մատուցել Հիմնադրամին, ինչն արտահայտվել է Պայմանագրի 1.1 կետում, որի համաձայն՝ «Հայխնայբանկ» ՓԲԸ-ն պարտավորվել է Հիմնադրամի առաջադրանքով և վերջինիս կողմից հատկացված միջոցների հաշվին ՀՀ տարածքում իրականացնել կենսաթոշակների վճարումը կենսաթոշակառուներին:

Վերոհիշյալ նկատառումներով Պայմանագիրը չի կարող հանդիսանալ հօգուտ երրորդ անձի կնքված, քանի որ դրանով նախատեսված չէ դրույթ

այն մասին, որ Պայմանագրի առարկան կազմող ծառայությունները կատարվելու են ոչ թե Հիմնադրամի օգտին, այլ որևէ այլ անձի:

3) բողոքը երրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 926-րդ հոդվածը վերաբերում է բանկային հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու՝ հաճախորդի իրավունքների սահմանափակման անթույլատրելիությանը և որևէ կապ չունի սույն վեճի հետ:

4) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, քանի որ բողոքում չի նշվել, թե Վերաքննիչ դատարանը որ ապացույցը չի հետազոտել գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը սույն բողոքի առաջին հիմքը հիմնավոր համարելով, դրա առկայությունը բավարար է դիտում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 14.03.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ա. Մկրտումյան
Դատավորներ՝ Ս. Անտոնյան
Ս. Գյուրջյան
Է. Հայրիյան
Ս. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վարչական գործ թիվ
ՎԴ/4590/05/10
2013 թ.

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/4590/05/10
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան
Դատավորներ՝ Հ. Բեդևյան
Ա. Սարգսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի
քաղաքացիական և վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Տ. Պետրոսյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Ա. Բարսեղյանի
Մ. Դրմեյանի
Գ. Հակոբյանի
Է. Հայրիյանի
Ե. Սողոմոնյանի

2013 թվականի հոկտեմբերի 4-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.03.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արայիկ Բաբայանի ընդդեմ «ՀՀ դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ), երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելը մերժելուն ուղղված գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և պատասխանողին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արայիկ Բաբայանը պահանջել է երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելը մերժելուն ուղղված Հիմնարկի գործողությունը ճանաչել ոչ իրավաչափ և որպես պահանջի հետևանքի վերացման ածանցյալ պահանջ՝ Հիմնարկին պարտավորեցնել նշանակել երկարամյա ծառայության կենսաթոշակ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 25.10.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.03.2013 թվականի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.10.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արայիկ Բաբայանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Կառավարության 12.05.2005 թվականի «ՀՀ Կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 778 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 701-Ն որոշումը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը, 73-րդ հոդվածի 2-րդ մասը, «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը, կիրառել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարել այն փաստարկները, որ ՀՀ Կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 778 որոշման 1-ին կետի «գ» ենթակետը և այդ ենթակետով հաստատված «Զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում հաշվարկվող, այդ թվում՝ արտոնյալ պայմաններով, ծառայողական կամ այլ բնույթի գործունեության

տեսակների ցանկի, հաշվառման կարգի ու պայմանների» 2-րդ կետի 1-ին պարբերության «գ» ենթակետը և նույն կետի 2-րդ պարբերության «դ» ենթակետը սույն իրավահարաբերության համար կիրառելի չեն, քանի որ ՀՀ Կառավարության 12.05.2005 թվականի «ՀՀ Կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թվականի թիվ 778 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 701-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով ՀՀ Կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 778 որոշման 1-ին կետի «գ» ենթակետով կատարված փոփոխության արդյունքում նշված կետից հանվել է «այդ թվում՝ արտոնյալ պայմաններով» բառակապակցությունը, որից հետևում է, որ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» կետի հիմքով զինծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքը ծագում է օրացուցային հաշվարկով հաշվառված ծառայությունից սահմանված կարգով արձակվելու պահին 20 և ավելի տարվա զինվորական ծառայության ստաժի առկայության պայմաններում, մինչդեռ Արայիկ Բաբայանի դատախազությունում ծառայության ստաժն աշխատանքից ազատվելու դրությամբ օրացուցային հաշվարկով կազմում է 11 տարի 10 ամիս և 17 օր, հետևաբար վերջինս չի կարող օգտվել 01.07.1998 թվականի՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածին համապատասխան երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքից:

Այսպիսով, ՀՀ Կառավարության 12.05.2005 թվականի թիվ 701-Ն որոշումն ուժի մեջ է մտել 30.06.2005 թվականին, հետևաբար մինչև նշված որոշումն ուժի մեջ մտնելն Արայիկ Բաբայանի ծառայության ստաժն արտոնյալ պայմաններով հաշվարկելու պահանջն անհիմն է, քանի որ հայցվորը ՀՀ գլխավոր դատախազի հրամանով աշխատանքից ազատվել է 01.12.2007 թվականին, այսինքն՝ վիճելի իրավահարաբերությունը ծագել է 01.12.2007 թվականին, իսկ ծագած իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում է տվյալ պահին գործող օրենսդրությունը:

Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասով, գտել է, որ ՀՀ Կառավարության 12.05.2005 թվականի թիվ 701-Ն որոշմամբ հաստատված կարգը չի կարող հետադարձ ուժ ունենալ, քանի որ այն ունի վատթարացնող բնույթ, և Հիմնարկի՝ Արայիկ Բաբայանին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելը մերժելուն ուղղված գործողությունները դիտել է ոչ իրավաչափ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը

համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՍԴՈ-723 գործով ՀՀ Սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման նոր համակարգ, սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա, այսինքն՝ տվյալ գործով ՀՀ Սահմանադրական դատարանն անդրադարձել է նախկինում գործող օրենսդրության հիման վրա կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձանց իրավունքներն օրենսդրության փոփոխությունների արդյունքում վերացնող կամ սահմանափակող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքին, մինչդեռ սույն գործով վիճարկվում է Արայիկ Բաբայանի երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու, այլ ոչ թե նախկին օրենսդրության հիման վրա ձեռք բերված իրավունքներն օրենսդրության փոփոխությունների արդյունքում վերացնելու կամ սահմանափակելու հարցերը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Արայիկ Բաբայանին երկարամյա կենսաթոշակ չի կարող նշանակվել նաև այն պատճառով, որ ՀՀ գլխավոր դատախազի 27.11.2007 թվականի թիվ 697 հրամանով Արայիկ Բաբայանն աշխատանքից ազատվելուց հետո տեղափոխվել և շարունակում է իր ծառայությունը՝ աշխատում է ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայությունում, իսկ տվյալ իրավահարաբերությունները ծագելու պահին գործող «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի և գործող «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ է նշանակվում և վճարվում միայն ծառայությունից սահմանված կարգով արձակվելու դեպքում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.03.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Վճռաբեկ բողոքի ներկայացված հիմքերը և հիմնավորումներն անհիմն են, դրանցում նշված են ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող իրավական վերլուծություններ, փաստերի ակնհայտ խեղաթյուրումներ, ինչպես նաև կամայական մեկնաբանություններ:

Մինչև 30.06.2005 թվականի ՀՀ Կառավարության 12.05.2005 թվականի թիվ 701-Ն որոշման ուժի մեջ մտնելը «ՀՀ Կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 778 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշմամբ իր զինվորական ծառայության ստաժը պետք է հաշվարկվի արտոնյալ կարգով, իսկ դրանից հետո մինչև 27.11.2007 թվականը՝ օրենքով սահմանված կարգով ՀՀ զինվորական դատախազության քննիչի պաշտոնից, այսինքն՝ զինվորական ծառայությունից ազատվելը, օրացուցային օրերի հաշվարկով, որոնց ընդհանուր գումարը ստացվում է 20 տարի, 8 ամիս, 24 օր, որը բավարար զինվորական ծառայության ստաժ է հանդիսացել իր կողմից տվյալ ժամանակ օրենքով սահմանված կարգով ՀՀ դատախազությունից երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու համար: Բողոքաբերը, փաստացի ընդունելով, որ 30.06.2005 թվականի դրությամբ իր զինվորական ծառայության ընդհանուր ստաժն արտոնյալ հաշվարկով կազմել է 18 տարի և ավելի, սխալ պատճառաբանությամբ դրան չի գումարել իր կողմից նույն համակարգում ծառայության 30.06.2005 թվականից մինչև 27.11.2007 թվականն ընկած ժամանակահատվածը: Այսինքն՝ բողոքաբերը 30.06.2005 թվականից հետո օրինական ուժի մեջ մտած, իր վիճակը վատթարացնող ՀՀ Կառավարության թիվ 701-Ն որոշմանը տվել է հետադարձ ուժ: Ընդ որում, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը և այլ իրավական ակտեր թույլատրում են երկարամյա զինվորական ծառայության կենսաթոշակ նշանակելուց հետո դրա վճարումը կասեցնել, ինչն էլ կազմել է դատախազությանն ուղղված իր պահանջի բովանդակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը 29.10.2010 թվականի թիվ ՎԴ/4892/05/09 վարչական գործով կայացրել է որոշում, որն ունի նույնանման փաստական հանգամանքներ: Բողոքաբերը դիտավորյալ ո՛չ վերաքննիչ, ո՛չ էլ վճռաբեկ բողոքներում չի անդրադարձել վճռաբեկ դատարանի նշված որոշմանն այն պարզ պատճառով, որ այն նույնանման փաստական հանգամանքներ ունի սույն գործի հետ և հիմնավորում է իր օրինական պահանջները:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ գլխավոր դատախազի 13.10.1999 թվականի թիվ 510 հրամանով Արայիկ Բաբայանը նշանակվել է Սևանի կայազորի զինվորական դատախազության քննիչի պաշտոնում, 27.11.2007 թվականին ազատվել է այդ

պաշտոնից և 01.12.2007 թվականին ծառայության նշանակվել ՀՀ ՊՆ քննչական վարչության ՀԿԳ քննչական բաժնում՝ որպես ՀԿԳ քննիչ **(հատոր 1-ին, գ.թ. 13-14, 16-18):**

2) Ի պատասխան Արայիկ Բաբայանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին ուղղված դիմումի՝ «Հիմնարկի ղեկավարն իր 09.12.2008 թվականի թիվ 28/257-08 գրությամբ պատասխանել է, որ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակվում և վճարվում է ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո, և քանի որ Արայիկ Բաբայանը շարունակում է ծառայությունը ՀՀ պաշտպանության նախարարությունում, ապա առայժմ նրան կենսաթոշակ նշանակել հնարավոր չէ **(հատոր 1-ին, գ.թ. 7):**

3) 28.07.2010 թվականին Արայիկ Բաբայանը ՀՀ դատախազությունից երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու դիմումով դիմել է «Հիմնարկի ղեկավարին՝ հայտնելով, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերով հիմնավորվում է, որ Սևանի կայազորի զինվորական դատախազության քննիչի պաշտոնից 27.11.2007 թվականին ՀՀ ՊՆ քննչական վարչության ՀԿԳ քննչական բաժին տեղափոխվելու ժամանակ ինքն արդեն իսկ ունեցել է ՀՀ դատախազությունից երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու իրավունք, սակայն այդ իրավունքից չի օգտվել, և համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի՝ կարող է այդ իրավունքից օգտվել դիմում տալու օրվանից:

Միաժամանակ հայցվորը խնդրել է համապատասխան հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել իր երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու հարցը և կենսաթոշակ նշանակելու դեպքում կենսաթոշակի վճարումը կասեցնել, քանի որ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը և այլ օրենսդրական նորմերը թույլ են տալիս կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակի վճարումը կասեցնել և շարունակել զինվորական ծառայությունը **(հատոր 1-ին, գ.թ. 8-11):**

4) Արայիկ Բաբայանի 28.07.2010 թվականի դիմումին ի պատասխան՝ «Հիմնարկի ղեկավարը 05.11.2010 թվականին թիվ 28/8-1045-10 գրությամբ հայտնել է, որ «Ի պատասխան ՀՀ դատախազության համակարգից երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու Ձեր 28.07.2010 թվականի դիմումի՝ հայտնվում է, որ այն քննարկվել է ՀՀ դատախազության կենսաթոշակների նշանակման հանձնաժողովի 07.10.2010 թվականի նիստում, և տրվել է բացասական եզրակացություն՝ նկատի ունենալով, որ Ձեր զինվո-

րական ծառայության ստաժը (օրացուցային օրերով) կազմում է 11 տարի, 10 ամիս 17 օր և չի բավարարում «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի ոչ մի մասի պահանջներին՝ Ձեզ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար» **(հատոր 1-ին, գ.թ. 12):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի հետևյալ իրավական հարցի պարզաբանումը. արդյո՞ք զինծառայողին կարող է նշանակվել երկարամյա ծառայության կենսաթոշակ, եթե նա սահմանված կարգով չի արձակվել ծառայությունից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.

3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերը նշված նորմերից հետևում է, որ Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

01.07.1998 թվականի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ դատախազների և քննիչների թոշակավորումն իրականացվում է ներքին գործերի մարմիններում ծառայության անցնող ղեկավար կազմի անձանց համար կիրառվող պայմաններով, նորմերով և կարգով (ուժի մեջ է եղել մինչև 01.01.2008 թվականը):

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական և կազմակերպական դրույթները:

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի համաձայն՝ զինծառայող են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների (այսուհետ՝ համապատասխան մարմիններ) համակարգի հրամանատարական և շարքային անձնակազմի ծառայողները:

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 53.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի քննիչը (այսուհետ՝ քննիչ) պաշտպանության բնագավառի զինվորական ծառայող է:

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակվում և վճարվում է ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո (7-րդ հոդվածն ուժը կորցրել է 22.12.2010 թվականին ՀՕ-248-Ն):

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ զինվորական ծառայության անցնելու դեպքում նույն օրենքով նշանակված կենսաթոշակների վճարումը դադարեցվում է ծառայության անցնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից (7-րդ հոդվածն ուժը կորցրել է 22.12.2010 թվականին ՀՕ-248-Ն):

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատախազության քննիչների թոշակավորումը, այդ թվում՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելն իրականացվել է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով զինվորական ծառայողների համար սահմանված կարգով: Ընդ որում, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով վիճելի իրավահարաբերության ժամանակ սահմանված կարգով զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակվել և վճարվել է **զինվորական ծառայությունից** սահմանված կարգով արձակվելուց հետո: Ընդ որում, նշանակված կենսաթոշակների վճարման դադարեցումը պայմանավորվել է զինվորական ծառայության անցնելու հանգամանքով: Նույն օրենքով է կարգավորվում նաև ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության քննիչների՝ որպես զինվորական ծառայողների թոշակավորման կարգը:

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ արտոնյալ պայմաններով Արայիկ Բաբայանի ծառայության ստաժի օրացուցային հաշվարկը պետք է կատարվի մինչև 30.06.2005 թվականի՝ ՀՀ կառավարության թիվ 701-Ն որոշումն ուժի մեջ մտնելը սահմանված կարգով: Դատարանը հաստատված է համարել, որ 27.11.2007 թվականի դրությամբ՝ ծառայությունից ազատվելու պահին, Արայիկ Բաբայանի ծառայությունը կազմել է 20 տարի, 8 ամիս, 24 օր, որը բավարար զինվորական ծառայության ստաժ է օրենքով սահմանված կարգով երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Արայիկ Բաբայանը, ունենալով երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող առնվազն 20 տարվա զինվորական ծառայության ընդհանուր ժամկետ (ստաժ), իր երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքը վիճարկում է 27.11.2007 թվականի դրությամբ, սահմանված կարգով ՀՀ դատախազության համակարգից ազատվելու պահին, այսինքն՝ «Հիմնարկը պետք է Արայիկ Բաբայանի կողմից ՀՀ դատախազությունից երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու դիմում ներկայացնելու օրվանից նշանակեր կենսաթոշակը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազի 13.10.1999 թվականի թիվ 510 հրամանով Արայիկ Բաբայանը նշանակվել է Սևանի կայազորի զինվորական դատախազության քննիչի պաշտոնում, դատախազության համակարգում փոփոխությունների կատարման պատճառով 27.11.2007 թվականին ազատվել է այդ պաշտոնից և 01.12.2007 թվականին

ծառայության է նշանակվել ՀՀ ՊՆ քննչական վարչության ՀԿԳ քննչական բաժնում որպես ՀԿԳ քննիչ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ վիճելի իրավահարաբերության ժամանակ գործող «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ զինծառայողին երկարամյա ծառայության կենսաթոշակ կարող է նշանակվել և վճարվել **միայն զինծառայությունից սահմանված կարգով արձակվելու դեպքում:**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արայիկ Բաբայանին երկարամյա ծառայության կենսաթոշակ չէր կարող նշանակվել այն պատճառով, որ վերջինս ՀՀ գլխավոր դատախազի 27.11.2007 թվականի թիվ 697 հրամանով աշխատանքից ազատվելուց հետո նշանակվել է ՀՀ ՊՆ քննչական վարչության ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ քննիչի պաշտոնում, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով անցել է զինվորական ծառայության: Մինչդեռ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված երկարամյա ծառայության կենսաթոշակ կարող էր նշանակվել միայն զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ նշված օրենքը նշանակված կենսաթոշակի վճարման դադարեցումը պայմանավորել է զինվորական ծառայության անցնելու փաստով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Արայիկ Բաբայանի այն պատճառաբանությունը, թե «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը թույլատրում է կենսաթոշակ նշանակելուց հետո դրա վճարումը կասեցնել: Նշված հոդվածը, որով կարգավորվել են կենսաթոշակների նշանակման պայմանները, նման հնարավորություն չի սահմանել: Ընդհակառակը՝ դրա 1-ին կետը կատեգորիկ կերպով սահմանել է, որ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակվում և վճարվում է ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո, իսկ հոդվածի 2-րդ կետը կարգավորել է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ստացած և զինվորական ծառայությունը շարունակող զինծառայողների ամսական դրամական բավարարմանը հավելումների նշանակման հարցը, ինչը ոչ մի առնչություն չունի կենսաթոշակ նշանակելու և կասեցնելու հարցի հետ:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն այլևս չի անդրադառնում Արայիկ Բաբայանի զինվորական ծառայության ստաժը երկարամյա զինվո-

րական ծառայության կենսաթոշակ նշանակելու համար բավարարելու հարցին, քանի որ այն կարող է էական նշանակություն ունենալ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.03.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2. Արայիկ Բաբայանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան
Դատավորներ՝ Տ. Պետրոսյան
Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Մ. Դրմեյան
Գ. Հակոբյան
Է. Հայրիյան
Ե. Սողոմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ա. Մկրտումյանի
մասնակցությամբ դատավորներ՝ Ս. Անտոնյանի
Ս. Գյուրջյանի
Է. Հայրիյանի
Ս. Սարգսյանի

2007 թվականի նոյեմբերի 9-ին դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.04.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Սարգիս Բաղրամյանի դիմումի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Սարգիս Բաղրամյանը պահանջել է հաստատել 1942 թվականի հունվար ամսից մինչև 1948 թվականի հունիս ամիսը Փամբակի կոլտնտեսությունում աշխատելու վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը՝ կենսաթոշակի վերահաշվարկ կատարելու նպատակով:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 12.12.2006 թվականի վճռով դիմումը մերժվել է:

Վերաքննիչ դատարանի 19.04.2007 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հիմնադրամը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր

Բողոք բերած անձը բողոքի սույն հիմքը պատճառաբանել է հետևյալ փաստարկով:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ տարիքային կենսաթոշակի իրավունք ունի 63 տարին լրացած անձը՝ 25 տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում: Պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում: Դատական կարգով կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն 10 տարվա ստաժից ոչ ավելի:

Այսինքն՝ դատական կարգով հաստատման ենթակա է պահանջվող 25 տարվա ապահովագրական ստաժի պակասող մասը, իսկ դիմումատուի ստաժը կազմում է 48 տարի, 11 ամիս, 24 օր: Այսինքն՝ պահանջվող 25 տարվա ապահովագրական ստաժն արդեն առկա է, հետևաբար, դիմումատուի 1942-1948 թվականների ստաժի առկայությունը դատական կարգով հաստատման ենթակա հանգամանք չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 19.04.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 12.12.2006 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝

Հիմնադրամի Կենտրոն-2 տարածքային կենտրոնի 25.04.2007 թվականի հաշվարկ-կարգադրության համաձայն՝ 15.11.1954 թվականից մինչև 02.11.1998 թվականն ընկած ժամանակահատվածի համար Սարգիս Բաղրամյանի ընդհանուր ապահովագրական ստաժը կազմում է 48 տարի, 11 ամիս, 24 օր (ներկայացվել է վճռաբեկ բողոքին կից):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում արդեն անդրադարձել է նշված իրավական հարցի գնահատականին (տես օրինակ՝ Նունիկ

Պետրոսյանի դիմումով՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին, 2007 թվականի մայիսի 18, քաղ. գործ թիվ 3-676/ՎԴ):

Սակայն կարևորելով սույն բողոքի հիմքում ընկած իրավական հարցադրումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցին:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակներն ըստ տեսակների լինում են ապահովագրական և սոցիալական:

Նշված օրենքի իմաստով ապահովագրական կենսաթոշակի համար պահանջվող (անհրաժեշտ) ապահովագրական ստաժը կազմում է 25 տարի:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ աշխատանքային ստաժը հաստատող՝ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով: Պահանջվող ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում:

Դատական կարգով կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն տասը տարվա ստաժից ոչ ավելի:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 15.11.1954 թվականից մինչև 02.11.1998 թվականն ընկած ժամանակահատվածի համար Սարգիս Բաղրամյանի ընդհանուր ապահովագրական ստաժը կազմում է 48 տարի, 11 ամիս, 24 օր: Այսինքն՝ Սարգիս Բաղրամյանի ապահովագրական ստաժը գերազանցում է ապահովագրական կենսաթոշակի իրավունք ունենալու համար պահանջվող 25 տարվա ապահովագրական ստաժը:

Հետևաբար, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի ուժով Սարգիս Բաղրամյանի 15.11.1954 թվականից մինչև 02.11.1998 թվականն ընկած ժամանակահատվածի ապահովագրական ստաժը վերականգնելու պահանջի մասին դատարան ներկայացված դիմումը հատուկ վարույթի կարգով դատարանում քննության ենթակա չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Նույն օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանը կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց

քննության է թողնում հայցն ամբողջությամբ կամ դրա մի մասը, եթե գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերն ի հայտ են եկել ստորադաս դատարանում գործի քննության ժամանակ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն բողոքի հիմքը հիմնավոր է և դրա առկայությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելու, այն է՝ Վերաքննիչ դատարանի 19.04.2007 թվականի վճիռը բեկանելու և քաղաքացիական գործի վարույթը կարճելու բավարար հիմք է հանդիսանում:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ դիմումատուն զրկված չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հատուկ հայցային վարույթի կանոններով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 19.04.2007 վճիռը և քաղաքացիական գործի վարույթը կարճել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝	Ա. Մկրտումյան
Դատավորներ՝	Ս. Անտոնյան
	Ս. Գյուրջյան
	Է. Հայրիյան
	Ս. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Ս. ԳՅՈՒՐՋՅԱՆԻ
	Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

2007 թվականի դեկտեմբերի 12-ին դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 31.07.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ դիմումի Հովհաննես Լալայանի ընդդեմ ՀՀ գլխավոր դատախազության (այսուհետ՝ Դատախազություն)՝ պաշտոնատար անձի գործողությունները վիճարկելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ դիմումատուն խնդրել է պարտավորեցնել Դատախազությանը երկարամյա ծառայության կենսաթոշակի գնալու կապակցությամբ վճարել միանվագ նպաստ՝ 24 ամսվա աշխատավարձի չափով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 21.12.2006 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.07.2007 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել նախկին «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածը, «Կենսաթոշակային ապահովման բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների իրավունքների երաշխիքների մասին» համաձայնագրի 1-ին հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի 20.02.2006 թվականի թիվ 06-728 վճիռը սույն քաղաքացիական գործով նախադեպի փաստ հանդիսանալ չի կարող: Նշված վճռով հաստատված հանգամանք է այն, որ Հովհաննես Լալայանը ծառայությունից սահմանված կարգով արձակվելու պահին ունեցել է 30 տարուց ավելի ընդհանուր աշխատանքային ստաժ և օգտվում է երկարամյա ծառայության համար կենսաթոշակ ստանալու իրավունքից: Դատախազությունում Հովհաննես Լալայանի ծառայության ստաժը կազմում է 4 տարի 9 օր, հետևաբար վերջինս 24 ամսվա աշխատավարձի չափով միանվագ նպաստ ստանալու իրավունքից չի օգտվում, իսկ դիմողի ներքին գործերի մարմիններում և զինված ուժերում ծառայության ժամկետը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի իմաստով չի կարող միանվագ նպաստ ստանալու համար հիմք հանդիսանալ:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.07.2007 թվականի վճիռը և դիմումը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.

Դատախազության աշխատողների նյութական և սոցիալական ապահովության վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորվում են «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի 40-րդ հոդվածով, որում հստակ շարադրված է դատախազների թոշակավորումն իրականացնելու և միանվագ նպաստը վճարելու հիմքերը, պայմանները և կարգը, ինչպես նաև միանվագ նպաստ չվճարելու հիմքերը: Օրենքում ամրագրված է, որ դատախազներին միանվագ նպաստ չի վճարվում նրանց աշխատանքից հեռացնելու դեպքում: Այլ հիմքեր նշված չեն: Երկարամյա ծառայության կենսաթոշակի գնալու կապակցությամբ Հովհաննես Լալայանին միանվագ նպաստ վճարելու հիմքերն ու պայմանները լիովին համապատասխանում են օրենսդրության պահանջներին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հովհաննես Լալայանը ծառայությունից սահմանված կարգով արձակվելու պահին հանդիսացել է դատախազության աշխատակից:
2) Ծառայությունից սահմանված կարգով արձակվելու պահին Հովհաննես Լալայանն ունեցել է զինվորական ծառայության 30 տարուց ավելի ընդհանուր աշխատանքային ստաժ և, «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի համաձայն, օգտվում է երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքից:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ դատախազների և քննիչների թոշակավորումն իրականացվում է ներքին գործերի մարմիններում ծառայության անցնող ղեկավար կազմի անձանց համար կիրառվող պայմաններով, նորմերով և կարգով: Դատախազների և քննիչների աշխատանքային ստաժի կամ հաշմանդամության, ինչպես նաև առողջության կամ հաստիքային փոփոխությունների կապակցությամբ կենսաթոշակի ուղարկելու դեպքում վճարվում է միանվագ նպաստ հետևյալ կարգով՝

10 տարուց պակաս աշխատանքային ստաժի դեպքում՝ 12 ամսվա աշխատավարձի չափով,

10-20 տարի աշխատանքային ստաժի դեպքում՝ 18 ամսվա աշխատավարձի չափով,

20 տարուց ավելի աշխատանքային ստաժի դեպքում՝ 24 ամսվա աշխատանքային չափով:

Դատախազներին և քննիչներին աշխատանքից հեռացնելու դեպքում միանվագ նպաստ չի վճարվում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային ստաժն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում քաղաքացին եղել է նույն օրենսգրքով կարգավորվող աշխատանքային հարաբերությունների մեջ, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք նորմատիվ ակտերին կամ կոլեկտիվ պայմանագրերին համապատասխան, կարող են հաշվարկվել աշխատանքային ստաժում, որով աշխատանքային օրենսդրությունը, այլ նորմատիվ ակտերը կամ կոլեկտիվ պայմանագրերը պայմանավորում են որոշակի աշխատանքային իրավունքներ կամ աշխատանքային երաշխիքներ ու արտոնություններ: Աշխատանքային ստաժը կարող է լինել՝

1. ընդհանուր աշխատանքային ստաժ, որում հաշվարկվում է քաղաքացու՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու ամբողջ

ժամանակահատվածը, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք թույլատրվում է հաշվարկել աշխատանքային ստաժում,

2. հատուկ աշխատանքային ստաժ, որում հաշվարկվում են այն ժամանակահատվածները, որոնց ընթացքում կատարվել է որոշակի մասնագիտությամբ աշխատանք կամ զբաղեցվել է որոշակի պաշտոն կամ կատարվել է աշխատանք աշխատանքի առանձնահատուկ պայմաններում, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք թույլատրվում է հաշվարկել տվյալ տիպի աշխատանքային ստաժում,
3. որոշակի կազմակերպությունում կամ միևնույն գործատուի մոտ աշխատանքային ստաժ, որում հաշվարկվում է տվյալ աշխատատեղում աշխատաժամանակը, ինչպես նաև այն ժամանակահատվածները, որոնք թույլատրվում է հաշվարկել տվյալ տիպի աշխատանքային ստաժում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերոնշյալ հոդվածով սահմանված է աշխատանքային ստաժի տեսակները, որոնց թվին են դասվում հատուկ աշխատանքային ստաժը և որոշակի կազմակերպությունում կամ միևնույն գործատուի մոտ աշխատանքային ստաժը: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածում օգտագործվում է աշխատանքային ստաժ հասկացությունը, սակայն բացակայում է նշումն այն մասին, թե միանվագ նպաստի վճարման դեպքում աշխատանքային որ ստաժն է հաշվի առնվում:

«Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի 40-րդ հոդվածը մեկնաբանելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ՀՀ Սահմանադրության և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի կարգավորումը:

Մասնավորապես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի 40-րդ հոդվածը մեկնաբանել՝ հաշվի առնելով օրենքի մյուս նորմերի պահանջները, դրա ընդունման նպատակը և կարգավորման առարկան:

«Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի 22-րդ հոդվածում գլխավոր դատախազի տեղակալ, Երևան քաղաքի դատախազ, մարզի դատախազ կամ համայնքի դատախազ լինելու համար պահանջվում է իրավաբանի առնվազն հինգ տարվա մասնագիտական ստաժ: «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ դատախազության աշխատողներին իրենց զբաղեցրած պաշտոնի և աշխատանքային ստաժի համաձայն են շնորհվում դասային աստիճաններ:

«Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի 40-րդ հոդվածի 13-րդ կետում օգտագործվում է թե՛ իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ և թե՛ դատախազությունում ծառայության ժամկետ հասկացությունները:

Վերոնշյալից հետևում է, որ «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքն օգտագործում է երեք հասկացություններ՝ իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ, դատախազությունում ծառայության ժամկետ և աշխատանքային ստաժ: Դրանք ունեն տարբեր իմաստ և բովանդակություն:

Այսինքն՝ այն բոլոր դեպքերում, երբ օրենսդիրը ցանկացել է նշել կոնկրետ աշխատանքային ստաժի տեսակը և դատախազության համակարգում ծառայության աշխատանքային ստաժը տարանջատել իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժից, ապա այդ դեպքերում օրենքում օգտագործվել է աշխատանքային ստաժի համապատասխան տեսակը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի 40-րդ հոդվածում կոնկրետացված չէ, թե միանվագ նպաստի վճարման դեպքում աշխատանքային որ ստաժն է հաշվի առնում և ելնելով այն հանգամանքից, որ օրենքի դրույթը պարունակում է երկիմաստություն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն չի կարող մեկնաբանվել նեղ իմաստով՝ սահմանափակելով դրա կիրառության շրջանակները:

Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ բոլոր այն դեպքերում, երբ չկա համապատասխան հարաբերությունը համապարփակ կերպով կարգավորող իրավական ակտ, օրենքի ընդհանուր ձևակերպումը պետք է մեկնաբանվի հօգուտ քաղաքացու: Սույն գործի տվյալներից ակնհայտ է, որ Հովհաննես Լալայանի աշխատանքային ստաժը կազմում է 30 տարուց ավելի:

Հետևաբար, «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի 40-րդ հոդվածի ուժով, Հովհաննես Լալայանն օգտվում է 24 ամսվա չափով միանվագ նպաստ ստանալու իրավունքից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 31.07.2007 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝	Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝	Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
	Ս. ԳՅՈՒՐՋՅԱՆ
	Է. ՀԱՅՐԻՅԱՆ

ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները,

ա) *վկայակոչելով* Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ հռչակված սկզբունքները, որոնք մարդկային ընտանիքի բոլոր անդամներին բնորոշ արժանապատվությունն ու արժեքները և նրանց հավասար ու անօտարելի իրավունքներն ընդունում են որպես աշխարհում ազատության, արդարության և խաղաղության հիմք,

բ) *գիտակցելով,* որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և Մարդու իրավունքների մասին միջազգային դաշնագրերում Միավորված ազգերի կազմակերպությունը հռչակել և հաստատել է, որ յուրաքանչյուր ոք օժտված է դրանցում ամրագրված իրավունքներով և ազատություններով՝ առանց որևէ տարբերակման,

գ) *վերահաստատելով* մարդու բոլոր իրավունքների ու հիմնարար ազատությունների համընդհանրությունը, անօտարելիությունը, փոխկախվածությունը և փոխկապվածությունը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց՝ առանց խտրականության դրանցից ամբողջությամբ օգտվելը երաշխավորելու անհրաժեշտությունը,

դ) *վկայակոչելով* «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, «Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիան, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիան, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան և «Բոլոր ներգաղթած աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիան,

ե) *գիտակցելով*, որ հաշմանդամությունը էվոլյուցիոն երևույթ է, և որ այն արդյունք է այնպիսի փոխազդեցության, որը տեղի է ունենում առողջական խնդիրներ ունեցող մարդկանց և վերաբերմունքի ու շրջապատի սահմանափակումների միջև, որոնք խոչընդոտում են նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը հասարակական կյանքում,

զ) *գիտակցելով* հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող գործողությունների համաշխարհային ծրագրում և հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ստեղծման մասին ընդունված կանոններում ընդգրկված սկզբունքների ու քաղաքականության մասին ուղեցույցների անհրաժեշտությունը՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների հետագա ապահովմանը նպաստելուն ուղղված ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում իրականացվող քաղաքականությունների, նախագծերի, ծրագրերի ու գործողությունների զարգացման, կազմակերպման և գնահատման վրա դրանց հնարավոր ազդեցության հետ,

է) *շեշտելով* հաշմանդամության խնդիրները դիտարկելու անհրաժեշտությունը որպես կայուն զարգացում ապահովող համապատասխան ռազմավարությունների բաղկացուցիչ մաս,

ը) *գիտակցելով* նաև, որ հաշմանդամության պատճառով խտրականությունը ցանկացած անձի դեմ բռնություն է՝ ուղղված անհատի արժանապատվությանն ու արժեքներին,

թ) *գիտակցելով* նաև հաշմանդամություն ունեցող անձանց բազմազանությունը,

ժ) *գիտակցելով* բոլոր հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հատուկ խնամք պահանջող անձանց իրավունքներին նպաստելու ու դրանք պաշտպանելու անհրաժեշտությունը,

ժա) *մտահոգված լինելով*, որ, չնայած ձեռնարկված այսպիսի տարբեր միջոցառումներին ու գործողություններին, հաշմանդամություն ունեցող անձինք ամբողջ աշխարհում դեռևս շարունակում են հանդիպել արգելքների հասարակության մեջ որպես լիիրավ անդամներ մասնակցություն ունենալու և իրենց իրավունքների ոտնահարման առումով,

ժբ) *գիտակցելով* յուրաքանչյուր երկրում, մասնավորապես զարգացող երկրներում հաշմանդամություն ունեցող անձանց կենսապայմանների բարելավման նպատակով միջազգային համագործակցության անհրաժեշտությունը,

ժգ) *գիտակցելով* հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ընդհանուր բարեկեցությանն ու իրենց համայնքների բազմազանությանն ուղղված՝ կատարվող և հնարավոր հետագա նշանակալի ներդրումները, և որ հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքներից ու հիմնարար ազատություններից լիարժեքորեն օգտվելուն, ինչպես նաև մասնակցությանն աջակցելը կարող է ամրապնդել նրանց՝ հասարակության լիարժեք անդամ լինելու զգացումը և հանգեցնել հասարակության մեջ մարդկային, սոցիալական ու տնտեսական զարգացման նշանակալից առաջընթացին և աղքատության հաղթահարմանը,

ժդ) *գիտակցելով* հաշմանդամություն ունեցող անձանց համար իրենց ինքնուրույնության ու անկախության, ինչպես նաև ազատ ընտրության իրավունքի կարևորությունը,

ժե) *նկատի առնելով*, որ հաշմանդամություն ունեցող անձինք պետք է հնարավորություն ունենան ակտիվորեն ներգրավվելու քաղաքականության ու ծրագրերի, այդ թվում՝ ուղղակիորեն իրենց վերաբերող վերոնշյալ ծրագրերի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացներում,

ժզ) *մտահոգված լինելով* այն բարդ պայմաններով, որոնցում գտնվում են այն հաշմանդամություն ունեցող անձինք, որոնք ենթարկվում են խտրականության տարբեր կամ ծանր ձևերի՝ կապված ռասայի, գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագման, սեփականության, ծննդյան, տարիքի կամ այլ կարգավիճակի հետ,

ժէ) *գիտակցելով*, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները տանը, թե դրսում ավելի հաճախ են ենթարկվում բռնության, վիրավորանքի կամ անարգանքի, արհամարհական, անփույթ կամ վատ վերաբերմունքի ու շահագործման,

ժը) *գիտակցելով*, որ հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է այլ երեխաների հետ հավասար հիմունքներով կարողանան լիարժեքորեն օգտվել մարդու իրավունքներից ու հիմնարար ազատություններից, և վկայակոչելով «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից այդ նպատակով հանձն առնված պարտավորությունները,

ժթ) *շեշտելով* հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքներից ու հիմնարար ազատություններից լիարժեքորեն օգտվելուն նպաստող բոլոր ծրագրերում գենդերային մոտեցում որդեգրելու անհրաժեշտությունը,

ի) *շեշտելով* այն փաստը, որ հաշմանդամություն ունեցող անձանց մեծ մասն ապրում է աղքատ պայմաններում, և, այս իմաստով, գիտակցելով աղքատության բացասական ազդեցությանը դիմակայելու խիստ անհրաժեշտությունը,

իա) *հաշվի առնելով*, որ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ ամրագրված նպատակների ու սկզբունքների նկատմամբ խորը հարգանքի և մարդու իրավունքների մասին կիրառվելիք փաստաթղթերի կատարման վրա հիմնված խաղաղության և անվտանգության պայմանները պարտադիր են հաշմանդամություն ունեցող անձանց լիակատար պաշտպանության համար. մասնավորապես զինված հակամարտությունների և օտարերկրյա զավթման ընթացքում,

իբ) *գիտակցելով* ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և մշակութային միջավայրի, ինչպես նաև առողջապահության ու կրթության, տեղեկատվության ու հաղորդակցության մատչելիության անհրաժեշտությունը, որով հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն կտրվի լիարժեքորեն օգտվելու մարդու իրավունքներից ու հիմնարար ազատություններից,

իգ) *գիտակցելով*, որ այլ անհատների ու իր համայնքի նկատմամբ պարտավորություններ ունեցող անհատը պատասխանատվություն է կրում Մարդու իրավունքների միջազգային հայտարարագրով ճանաչված իրավունքների ամրապնդմանը նպաստելու և այն պահպանելու համար,

իդ) *համոզված լինելով*, որ ընտանիքը հասարակության բնական ու հիմնարար խմբային միավորն է և հասարակության ու պետության կողմից պաշտպանված լինելու իրավունք ունի, և որ հաշմանդամություն ունեցող անձինք ու նրանց ընտանիքների անդամները պետք է ստանան անհրաժեշտ պաշտպանություն ու աջակցություն, որոնք ընտանիքներին հնարավորություն կտան նպաստելու հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրավունքներից լիակատար ու հավասար օգտվելուն,

իե) *համոզված լինելով*, որ միջազգային համապարփակ ու միասնական կոնվենցիան, որի նպատակը կլինի օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու արժանապատվությունը և պաշտպանել դրանք, կարևոր ներդրում կունենա հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական խիստ անբարենպաստ վիճակին դիմակայելու և քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային ոլորտներում հավասար հնարավորություններով նրանց մասնակցությունն ապահովելու հարցում և՛ զարգացող, և՛ զարգացած երկրներում,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1
Նպատակը

Սույն Կոնվենցիայի նպատակն է աջակցել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեքորեն և հավասարապես օգտվել մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից, ինչպես նաև ապահովել հարգանքը նրանց արժանապատվության նկատմամբ: Հաշմանդամություն ունեցող անձինք են համարվում նրանք, որոնք երկար ժամանակ տառապում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր և նյարդային հիվանդություններով, որոնք տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել, որ նրանք լիակատար և արդյունավետ մասնակցեն հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով:

Հոդված 2
Սահմանումները

Սույն Կոնվենցիայի նպատակներով.

«Հաղորդակցում»-ը ներառում է լեզուները և տեքստերը, Բրայլի համակարգը, շոշափման միջոցով հաղորդակցումը, խոշոր տառատեսակները, տեղեկատվության մատչելի ու բազմազան միջոցները (մուլտիմեդիաները),

ինչպես նաև տպագիր նյութերի, լսողական միջոցների, դյուրըմբռնելի լեզվի, ընթերցողների, նաև հաղորդակցության ուժեղացուցիչ և այլընտրանքային մեթոդների, միջոցների ու ձևաչափերի, այդ թվում՝ տեղեկատվական և հաղորդակցական մատչելի տեխնոլոգիաների կիրառումը:

«Լեզու»-ն ներառում է խոսակցական և շարժուձևերի լեզուն, ինչպես նաև ոչ խոսակցական լեզվի այլ ձևերը:

«Խտրականություն հաշմանդամության պատճառով» նշանակում է՝ հաշմանդամության պատճառով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որոնց նպատակն է սահմանափակել կամ նվազագույնի հասցնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը, կիրառումը կամ դրանցից օգտվելը քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ ցանկացած այլ ոլորտում՝ մյուսների հետ հավասար հիմունքներով: Այն ընդգրկում է խտրականության բոլոր ձևերը, ներառյալ՝ անհրաժեշտ հնարավորությունների տրամադրման մերժումը:

«Անհրաժեշտ հնարավորություններ» նշանակում է՝ անհրաժեշտ հատուկ դեպքերում համապատասխան փոփոխությունների կամ շտկումների կատարում, որոնք չեն պահանջում անտեղի ջանքեր, ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից օգտվելն ու դրանց կիրառումը:

«Համընդհանուր ձևավորում» նշանակում է՝ ապրանքների, միջավայրերի, ծրագրերի ու ծառայությունների ձևավորում, որը դրանք առավելագույնս գործածելի է դարձնում բոլոր մարդկանց համար՝ առանց դրանց հարմարվելու կամ հատուկ ձևավորման անհրաժեշտության: «Համընդհանուր ձևավորում»-ն ընդգրկում է հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբերի համար նախատեսված օժանդակող պարագաները դրանց անհրաժեշտության դեպքում:

Հոդված 3
Ընդհանուր սկզբունքները

Սույն Կոնվենցիայի սկզբունքներն են.

ա. հարգանք արժանապատվության, անհատի ինքնուրույնության, ազատ ընտրության և անձի անկախության իրավունքի նկատմամբ.

բ. խտրականության բացառում.

գ. հանրային կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցություն և ներգրավվածություն.

դ. հարգանք հաշմանդամություն ունեցող անձանց յուրահատուկ լինելու նկատմամբ և նրանց՝ որպես մարդկային բազմազանության և մարդկության մաս ընդունելը,

ե. հնարավորությունների հավասարություն.

զ. մատչելիություն.

է. հավասարություն տղամարդկանց և կանանց միջև.
ը. հարգանք հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների նկատմամբ և հարգանքհաշմանդամ երեխաների՝ իրենց ինքնությունը պահպանելու իրավունքի նկատմամբ:

Հոդված 4
Ընդհանուր պարտավորությունները

1. Մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել և օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար իրականացմանը՝ առանց հաշմանդամության պատճառով որևէ խտրականության: Այս նպատակով մասնակից պետությունները պարտավորվում են.
ա. ձեռնարկել համապատասխան օրենսդրական, վարչական և այլ միջոցներ սույն Կոնվենցիայով սահմանված իրավունքների իրականացման համար.
բ. ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, ներառյալ՝ օրենսդրության ընդունումը, փոփոխելու կամ չեղյալ հայտարարելու համար գործող այն օրենքները, կանոնակարգերը, սովորույթները և գործելակերպերը, որոնցում առկա է խտրականություն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ.
գ. հաշվի առնել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և աջակցել դրանց իրականացմանը ռազմավարությունների և ծրագրերի միջոցով.
դ. ձեռնպահ մնալ սույն Կոնվենցիային հակասող ցանկացած գործողության կամ գործընթացի մասնակցելուց և ապահովել, որ պետական իշխանություններն ու հաստատությունները գործեն սույն Կոնվենցիայի համաձայն.
ե. ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ բացառելու համար հաշմանդամության պատճառով խտրականությունը որևէ անձի, կազմակերպության կամ մասնավոր ձեռնարկության կողմից.
զ. նախաձեռնել և նպաստել սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածում սահմանված՝ համընդհանուր ձևավորում ունեցող ապրանքների, ծառայությունների, սարքավորումների և հաստատությունների վերաբերյալ հետազոտություններին և զարգացումներին, որոնք կպահանջեն նվազագույն հարմարեցում և ծախսեր՝ բավարարելու համար հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքները, կխթանեն դրանց մատչելիությունն ու գործածումը, ինչպես նաև կնպաստեն համընդհանուր ձևավորման կիրառմանը չափորոշիչներ ու ուղեցույցներ մշակելիս.
է. նախաձեռնել նոր տեխնոլոգիաների վերաբերյալ հետազոտություններ և զարգացումներ և նպաստել դրանց, ինչպես նաև խթանել դրանց մատչելիությունն ու գործածումը, ներառյալ՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները, շարժունակություն ապահովող պարագաները, սարքերը և օժանդակող տեխնոլոգիաները, որոնք համապատաս-

խանում են հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին, նախընտրելով նվազագույն ծախսեր պահանջող տեխնոլոգիաներ.

ը. հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղեկատվություն տրամադրել շարժունակություն ապահովող պարագաների, սարքերի և օժանդակող տեխնոլոգիաների, այդ թվում՝ նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև օգնության այլ ձևերի, աջակցող ծառայությունների ու հարմարությունների մասին.

թ. խթանել մասնագետների ու հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող անձնակազմի ուսուցումը սույն Կոնվենցիայով սահմանված իրավունքների մասին՝ նպատակ ունենալով բարելավել տրամադրվող աջակցությունն ու ծառայությունները, որոնք երաշխավորված են այդ իրավունքներով:

2. Ինչ վերաբերում է տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին, յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է քայլեր ձեռնարկել իր առկա միջոցների առավելագույն չափով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև միջազգային համագործակցության շրջանակներում, նպատակ ունենալով աստիճանաբար հասնել այդ իրավունքների լիակատար իրականացմանը՝ չխախտելով սույն Կոնվենցիայով սահմանված պարտավորությունները, որոնք ենթակա են անհապաղ կատարման՝ միջազգային իրավունքի համաձայն:

3. Սույն Կոնվենցիայի կիրարկման համար օրենսդրություն և ռազմավարություններ մշակելիս ու իրականացնելիս, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող հիմնահարցերի վերաբերյալ այլ որոշումներ կայացնելիս մասնակից պետությունները պետք է խորհրդակցեն հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝հաշմանդամություն ունեցող երեխաների հետ նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների միջոցով, և ակտիվորեն ներգրավեն նրանց այդ գործընթացներում:

4. Սույն Կոնվենցիայի որևէ դրույթ չի ազդում այնպիսի դրույթների վրա, որոնք առավել նպաստավոր են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացման համար, և որոնք ընդգրկված են որևէ մասնակից պետության օրենսդրության մեջ կամ տվյալ պետության համար գործող միջազգային իրավունքի նորմերում: Չպետք է սահմանափակվի կամ խախտվի մարդու որևէ իրավունք կամ հիմնարար ազատություն, ընդունված կամ գործող սույն Կոնվենցիայի մասնակից պետություններում՝ օրենսդրության, կոնվենցիաների, կանոնակարգերի կամ սովորույթների համաձայն, այն պատճառաբանությամբ, որ սույն Կոնվենցիան չի ճանաչում այդ իրավունքներն ու ազատությունները կամ ճանաչում է ավելի պակաս չափով:

5. Սույն Կոնվենցիայի դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության:

Հոդված 5
Հավասարությունը և խտրականության բացառումը

1. Մասնակից պետությունները գիտակցում են, որ բոլոր անհատները հավասար են օրենքի առաջ և օրենքի համաձայն և իրավունք ունեն, առանց որևէ խտրականության, մյուսների հետ հավասար հիմունքներով պաշտպանված լինելու օրենքով և օգտվելու օրենքից:

2. Մասնակից պետությունները պետք է արգելեն հաշմանդամության պատճառով ցանկացած խտրականություն և ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց հավասար և արդյունավետ իրավական պաշտպանվածությունը ցանկացած հիմքով խտրականությունից:

3. Հավասարության հաստատմանն աջակցելու և խտրականությունը վերացնելու նպատակով մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր քայլերը՝ ապահովելու համար անհրաժեշտ հնարավորությունների տրամադրումը:

4. Հատուկ միջոցառումները, որոնք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող անձանց փաստացի հավասարություն հաստատելու գործընթացն արագացնելու և դրան հասնելու համար, չեն համարվում խտրականություն՝ սույն Կոնվենցիայի պայմանների համաձայն:

Հոդված 6
Հաշմանդամություն ունեցող կանայք

1. Մասնակից պետությունները գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները ենթարկվում են խտրականության բազմաթիվ ձևերի, և այս նպատակով միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար նրանց՝ մարդու բոլոր իրավունքներից և հիմնարար ազատություններից լիակատար և հավասար օգտվելը:

2. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի ապահովեն կանանց լիակատար զարգացումը, առաջխաղացումը և հնարավորությունների մեծացումը՝ նպատակ ունենալով երաշխավորել նրանց՝ սույն Կոնվենցիայում ամրագրված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումն ու դրանցից օգտվելը:

Հոդված 7
Հաշմանդամություն ունեցող երեխաները

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համարհաշմանդամություն ունեցող երեխաների՝ մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով օգտվելը:

2. Հաշմանդամություն ունեցող երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում երեխայի բարձրագույն շահերը համարվում են առաջնահերթ:

3. Մասնակից պետությունները հաշմանդամություն ունեցող երեխաներին ապահովում են իրենց վերաբերող հարցերի շուրջ կարծիքներն ազատ արտահայտելու իրավունքով, նրանց տեսակետներին տրվում է տարիքին ու հասունությանը համապատասխան կշիռ մյուս երեխաներին հավասար հիմունքներով, և այդ իրավունքն իրականացնելու համար տրամադրվում է հաշմանդամությանը անհրաժեշտ ու տարիքին համապատասխան աջակցություն:

Հոդված 8
Իրազեկվածության բարձրացումը

1. Մասնակից պետությունները պարտավորվում են անհապաղ, արդյունավետ և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել.

ա. բարձրացնելու համար հասարակության, այդ թվում՝ ընտանիքում, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը և հարգանք սերմանելու համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության նկատմամբ.

բ. պայքարելու համար հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող, նաև սեռային ու տարիքային առանձնահատկություններով պայմանավորված կարծրատիպերի, նախապաշարմունքների և վնասակար ավանդույթների դեմ կյանքի բոլոր բնագավառներում.

գ. բարձրացնելու համար իրազեկվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց ունակությունների ու ներդրումների վերաբերյալ:

2. Այս նպատակով իրականացվող միջոցառումները ներառում են.

ա. հասարակության իրազեկվածության բարձրացմանն ուղղված արդյունավետ քարոզարշավներ նախաձեռնելու և իրականացնելու գործընթացները, որոնց նպատակն է.

(i) խթանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ճանաչումը,

(ii) նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց դրական կերպով ընկալելու և նրանց մասին սոցիալական իրազեկվածության ավելի բարձր մակարդակ ապահովելու խնդիրներին,

(iii) բարձրացնել իրազեկվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց հմտությունների, առավելությունների և ունակությունների, ինչպես նաև աշխատավայրում և աշխատուժի շուկայում նրանց ներդրումների վերաբերյալ.

բ. հարգալից վերաբերմունքի սերմանումը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների նկատմամբ կրթական համակարգի բոլոր մակարդակներում, այդ թվում՝ երեխաների մեջ, դեռ վաղ հասակից.

գ. լրատվամիջոցներին աջակցումը, որպեսզի վերջիններս ներկայացնեն հաշմանդամություն ունեցող անձանց սույն Կոնվենցիայի նպատակներին համապատասխան.

դ. հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց իրավունքների մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված ուսուցողական ծրագրեր իրականացնելուն օժանդակելը:

Հոդված 9
Մատչելիությունը

1. Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ՝ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են հասարակությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում: Այս միջոցները, որոնք ներառում են խոչընդոտների և արգելքների բացահայտումը և վերացումը, կիրառվում են մասնավորապես.

ա) կառույցների, ճանապարհների, փոխադրամիջոցների, բացօթյա և փակ հաստատությունների, այդ թվում՝ դպրոցների, բնակելի տարածքների, բժշկական հաստատությունների և աշխատավայրերի նկատմամբ.

բ) տեղեկատվության, հաղորդակցության և այլ ծառայությունների նկատմամբ, ներառյալ՝ էլեկտրոնային ծառայությունները:

2. Մասնակից պետությունները համապատասխան միջոցներ են ձեռնարկում նաև.

ա. մշակելու, տարածելու և վերահսկելու համար հանրությանը հասանելի կամ տրամադրվող հարմարությունների և ծառայությունների մատչելիությունն ապահովող նվազագույն չափորոշիչների և ուղեցույցների իրականացումը.

բ. ապահովելու համար, որ հանրությանը հասանելի կամ տրամադրվող հարմարություններ կամ ծառայություններ մատուցող մասնավոր ձեռնարկությունները հաշվի առնեն հաշմանդամություն ունեցող անձանց համար դրանց մատչելիության բոլոր կողմերը.

գ. որ շահագրգիռ կողմերի համար կազմակերպեն ուսուցողական դասընթացներ հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացող մատչելիության հիմնահարցերի վերաբերյալ.

դ. հանրային նշանակության կառույցներում և հաստատություններում կիրառելու համար Բրայլի համակարգը և դյուրընթեռնելի ու հասկանալի նշաններ.

ե. տրամադրելու համար օգնության տարբեր ձևեր, այդ թվում՝ ուղեկցողներ, ընթերցողներ ու նշանների լեզվի մասնագետ թարգմանիչներ՝ կառույցների և հասարակական նշանակության այլ հաստատությունների մատչելիությունն ապահովելու համար.

զ. մշակելու համար օգնության ու աջակցության համապատասխան այլ ձևեր հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով.
է. որ հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովեն տեղեկատվական ու հաղորդակցական նոր տեխնոլոգիաների ու համակարգերի, այդ թվում՝ ինտերնետի մատչելիությունը.
ը. օժանդակելու համար տեղեկատվական ու հաղորդակցական մատչելի տեխնոլոգիաների ու համակարգերի նախագծմանը, մշակմանը, արտադրությանը և տարածմանը վաղ փուլում, որպեսզի նման տեխնոլոգիաները և համակարգերը հասանելի դառնան նվազագույն ծախսերով:

Հոդված 10
Կյանքի իրավունքը

Մասնակից պետությունները վերահաստատում են, որ յուրաքանչյուր մարդկային էակ ունի կյանքի իրավունք, և ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց՝ այս իրավունքից արդյունավետ կերպով օգտվելը մյուսների հետ հավասար հիմունքներով:

Հոդված 11
Վտանգավոր իրավիճակները և արտակարգ հումանիտար իրավիճակները

Մասնակից պետությունները, միջազգային իրավունքով սահմանված իրենց պարտավորություններին, ինչպես նաև միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքին համապատասխան, ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանությունը և ապահովությունը վտանգավոր իրավիճակներում, այդ թվում՝ զինված հակամարտությունների, արտակարգ հումանիտար իրավիճակների և բնական աղետների դեպքում:

Հոդված 12
Օրենքի առաջ հավասարությունը

1. Մասնակից պետությունները վերահաստատում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ամենուր ունեն իրավահավասար պաշտպանության իրավունք:

2. Մասնակից պետությունները գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով ունեն իրավունակություն կյանքի բոլոր ոլորտներում:

3. Մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնեն այն աջակցությունը, որը կարող է պահանջվել նրանց իրավունակությունը կիրառելիս:

4. Մասնակից պետություններն ապահովում են, որ իրավունակության կիրառմանն առնչվող միջոցներով սահմանվեն համապատասխան և արդյունավետ երաշխիքներ՝ կանխելու համար չարաշահումները՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն: Նման երաշխիքներն ապահովում են, որ իրավունակության կիրառմանն ուղղված միջոցներով հարգվեն անձի իրավունքները, կամքն ու նախասիրությունները, զերծ լինեն շահերի բախումից և չափից մեծ ազդեցությունից, համահունչ լինեն անհատի անձնական հանգամանքներին և մշակվեն դրանց համապատասխան, կիրառվեն հնարավորինս կարճ ժամկետներում և ենթարկվեն կանոնավոր վերահսկողության իրավասու, անկախ և անկողմնակալ մարմնի կամ դատական մարմնի կողմից: Այս երաշխիքները պետք է համահունչ լինեն այն ազդեցությանը, որ նման միջոցները գործում են անձի իրավունքների ու շահերի վրա:

5. Սույն հոդվածի դրույթների համաձայն՝ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ ու արդյունավետ միջոցներ, որպեսզի ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքը իրենց սեփականությունը տնօրինելու կամ ժառանգելու, սեփական ֆինանսական գործարքները վերահսկելու և բանկային վարկերից, հիպոտեկից և ֆինանսական վարկավորման այլ միջոցներից օգտվելու համար, ինչպես նաև երաշխավորում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք կամայականորեն չեն զրկվի իրենց սեփականությունից:

Հոդված 13
Արդարադատության մատչելիությունը

1. Մասնակից պետությունները հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովում են արդարադատության մատչելիությամբ՝ տրամադրելով նաև ընթացակարգային ու տարիքին համապատասխան այնպիսի հնարավորություններ, որոնք հնարավորություն կտան ապահովելու նրանց արդյունավետ մասնակցությունը, որպես ուղղակի կամ անուղղակի մասնակիցներ, ինչպես նաև՝ որպես վկաներ, դատական բոլոր ընթացակարգերին, նաև՝ քննչական և այլ նախնական փուլերում:

2. Որպեսզի աջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց համար արդարադատության մատչելիության ապահովմանը, մասնակից պետությունները պետք է կազմակերպեն համապատասխան ուսուցողական դասընթացներ արդարադատության վարչական համակարգի աշխատակիցների, ինչպես նաև ոստիկանության և կալանավայրերի անձնակազմերի համար:

Հոդված 14
Անձի ազատությունը և անվտանգությունը

1. Մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով.

ա. օգտվեն անձի ազատության և անվտանգության իրավունքից.

բ. չազատազրկվեն անօրինական կամ կամայական կերպով, և որ ցանկացած ազատազրկում լինի օրենքի համաձայն, ինչպես նաև՝ որ ազատազրկումը ոչ մի դեպքում չհիմնավորվի հաշմանդամությամբ:

2. Մասնակից պետություններն ապահովում են, որ եթե հաշմանդամություն ունեցող անձինք ազատազրկվեն դատական որևէ գործընթացի արդյունքում, ապա նրանք այլ անձանց հետ հավասար հիմունքներով ունենան մարդու իրավունքների միջազգային իրավունքին համապատասխան տրվող երաշխիքների իրավունք, և նրանց վերաբերվեն սույն Կոնվենցիայի նպատակներին ու սկզբունքներին համաձայն՝ տրամադրելով նաև անհրաժեշտ հնարավորություններ:

Հոդված 15
Խոշտանգումներից կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատումը

1. Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, ոչ ոք չպետք է առանց իր համաձայնության ենթարկվի բժշկական կամ գիտական փորձերի:

2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն արդյունավետ օրենսդրական, վարչական, դատական կամ այլ միջոցներ՝ կանխելու համար, որ համշանդամություն ունեցող անձինք, այլ անձանց հետ հավասար հիմունքներով, չենթարկվեն խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Հոդված 16
Շահագործումից, բռնությունից և դաժան վերաբերմունքից ազատումը

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական, վարչական, սոցիալական, կրթական և այլ համապատասխան միջոցներ՝ շահագործման, բռնության կամ դաժան վերաբերմունքի բոլոր ձևերից հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանելու համար ինչպես տանը, այնպես էլ դրսում՝ հաշվի առնելով նաև հարցի գենդերային կողմերը:

2. Մասնակից պետությունները պետք է նաև համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ կանխելու համար շահագործման, բռնության կամ դաժան վերաբերմունքի բոլոր ձևերը՝ հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց ընտանիքներին ու խնամողներին ապահովելով, մասնավորապես, գենդերային և տարիքային առանձնահատկություններով պայմանավորված աջակցությամբ և օժանդակությամբ, ինչպես նաև նրանց տրամադրելով տեղեկատվություն, ուսուցանելով՝ ինչպես խուսափել շահագործման, բռնության կամ դաժան վերաբերմունքի երևույթներից, սահմանել դրանք և

հայտնել նման դեպքերի մասին: Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ պաշտպանական ծառայությունները լինեն տարիքային, սեռային և հաշմանդամության տեսակին առանձնահատկությունները:

3. Շահագործման, բռնության կամ դաժան վերաբերմունքի ցանկացած երևույթ կանխելու նպատակով մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվող բոլոր միջոցառումներն ու ծրագրերը արդյունավետ կերպով վերահսկվեն անկախ մարմինների կողմից:

4. Մասնակից պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ աջակցություն ցուցաբերելու համար շահագործման, բռնության կամ դաժան վերաբերմունքի զոհ դարձած հաշմանդամություն ունեցող անձին ֆիզիկական, մտավոր ու հոգեկան բուժման, վերականգնման և սոցիալական ինտեգրման հարցերում, ինչպես նաև՝ պաշտպանության ծառայություններ տրամադրելու միջոցով: Նման վերականգնումն ու ինտեգրումը պետք է իրականացվեն տվյալ անձի առողջության, բարեկեցության, նրա նկատմամբ հարգանքի, արժանապատվության և ինքնուրույնության համար նպաստավոր միջավայրում, որտեղ նաև հաշվի կառնվեն գենդերային ու տարիքային առանձնահատկություններով պայմանավորված կարիքները:

5. Մասնակից պետություններն արդյունավետ կերպով կիրարկում են օրենսդրություն և իրականացնում ռազմավարություն, այդ թվում՝ կանանց ու երեխաներին վերաբերող օրենսդրություն և ռազմավարություն, որպեսզի ապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց դեմ կիրառված շահագործման, բռնության կամ դաժան վերաբերմունքի ցանկացած դեպքի բացահայտումը, հետաքննումը, անհրաժեշտության դեպքում՝ նաև դատապարտումը:

Հոդված 17
Անձի անձեռնմխելիությունը

Յուրաքանչյուր հաշմանդամություն ունեցող անձ մյուսների հետ հավասար հիմունքներով ունի հարգանքի իրավունք իր ֆիզիկական և մտավոր անձեռնմխելիության նկատմամբ:

Հոդված 18
Տեղաշարժվելու ազատությունը և քաղաքացիությունը

1. Մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսներին հավասար հիմունքներով ազատ տեղաշարժվելու, իրենց բնակության վայրի և քաղաքացիության ազատ ընտրության իրավունքները, ինչպես նաև ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք.

ա. իրավունք ունենան քաղաքացիություն ստանալ և փոխել, կամայականորեն կամ հաշմանդամության պատճառով չզրկվեն իրենց քաղաքացիությունից.

բ. հաշմանդամության պատճառով չզրկվեն իրենց քաղաքացիությունը կամ անձը հաստատող փաստաթղթեր ստանալու, տնօրինելու և օգտագործելու, ինչպես նաև համապատասխան գործընթացներից օգտվելու հնարավորությունից, ինչպես, օրինակ, ներգաղթի ընթացակարգերն են, որոնք կարող են անհրաժեշտ լինել ազատ տեղաշարժի իրավունքը իրականացնելիս.

գ. ազատ լինեն հեռանալու ցանկացած երկրից, ներառյալ՝ իրենց հայրենիքից.

դ. կամայականորեն կամ հաշմանդամության պատճառով չզրկվեն իրենց հայրենիք մուտք գործելու իրավունքից:

2. Հաշմանդամություն ունեցող երեխաները գրանցվում են ծնվելուց անմիջապես հետո, ի ծնե ունեն անուն ու քաղաքացիություն ստանալու իրավունք և, հնարավորության դեպքում, իրենց ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի տակ գտնվելու իրավունք:

Հոդված 19
Անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ համայնքում ապրելու հավասար իրավունքը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով ընտրության հնարավորությամբ, ձեռնարկում են արդյունավետ և համապատասխան միջոցներ՝ օժանդակելու համար հաշմանդամություն ունեցող անձանց՝ այս իրավունքից լիակատար օգտվելուն, նրանց լիարժեք ներգրավվածությանը և մասնակցությանը համայնքում, ինչպես նաև ապահովում են, որ.

ա. հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով հնարավորություն ունենան ընտրելու իրենց բնակության վայրը, որտեղ և ում հետ են ապրելու, ստիպված չլինեն ապրել բնակության ինչոր պայմաններում.

բ. հաշմանդամություն ունեցող անձինք օգտվեն մի շարք ներտնային, բնակության հետ կապված և համայնքային աջակցության այլ ծառայություններից և ստանան համայնքում ապրելու և ներգրավվելու, ինչպես նաև համայնքից չմեկուսացվելու համար անհրաժեշտ անձնական աջակցություն.

գ. բնակչության համար նախատեսված համայնքային ծառայությունները և հնարավորությունները հավասարապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց և համապատասխանեն նրանց կարիքներին:

Հոդված 20
Անհատական շարժունակությունը

Մասնակից պետությունները ձեռնարկում են արդյունավետ միջոցներ, որպեսզի ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորինս ինքնուրույն շարժունակությունը, այդ թվում.

ա) նպաստելով հաշմանդամություն ունեցող անձանց անհատական շարժունակությանը նրանց նախընտրած միջոցներով ու պահին և մատչելի գներով.
բ) հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելով շարժունակություն ապահովող օժանդակ որակյալ սարքավորումները, պարագաները, օժանդակող տեխնոլոգիաները և օգնող անձանց ու միջնորդների ծառայությունները, որոնք նաև հաշմանդամություն ունեցող անձանց պետք է տրամադրվեն մատչելի գներով.
գ) շարժունակության հմտությունների վերաբերյալ դասընթացներ կազմակերպելով հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հետ աշխատող մասնագետների համար.
դ) պահանջելով շարժունակություն ապահովող օժանդակ սարքավորումներ, պարագաներ և օժանդակող տեխնոլոգիաներ արտադրող ձեռնարկություններից հաշվի առնել հաշմանդամություն ունեցող անձանց շարժունակության բոլոր ասպեկտները:

Հոդված 21
Խոսքի ու կարծիքի ազատությունը և տեղեկատվության մատչելիությունը

Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրականացնել խոսքի ու կարծիքի ազատության իրավունքը, ինչպես նաև փնտրել, ստանալ և տարածել տեղեկություններ ու գաղափարներ մյուսների հետ հավասար հիմունքներով և հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված կարգով, այդ թվում.
ա) հաշմանդամություն ունեցող անձանց ճիշտ ժամանակին ու առանց հավելյալ ծախսերի տրամադրելով հասարակության համար նախատեսված տեղեկատվություն մատչելի ձևաչափերով և հաշմանդամության տարբեր տեսակներին հատուկ տեխնոլոգիաներով.
բ) պաշտոնական հարաբերություններում ընդունելով շարժուձևերի լեզվի, Բրայլի համակարգի, հաղորդակցության ուժեղացուցիչ ու այլընտրանքային միջոցների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց նախընտրած՝ հաղորդակցության այլ մատչելի միջոցների, տեսակների ու ձևաչափերի օգտագործումը և նպաստելով դրան.
գ) պահանջելով հասարակությանը ծառայություններ մատուցող մասնավոր ձեռնարկություններից հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվություն տրամադրել և ծառայություններ մատուցել նրանց համար մատչելի և կիրառելի ձևաչափերում, նաև՝ ինտերնետի միջոցով.
դ) զանգվածային լրատվական միջոցներից և ինտերնետի միջոցով տեղեկատվություն տրամադրողներից պահանջելով իրենց ծառայությունները մատչելի դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց համար.
ե) ընդունելով շարժուձևերի լեզվի օգտագործումը և նպաստելով դրան:

Հոդված 22
Անձնական կյանքի նկատմամբ հարգանքը

1. Անկախ բնակության վայրից կամ կենսաձևից՝ ոչ մի հաշմանդամություն ունեցող անձի անձնական կյանքը, ընտանիքը, տունը, նամակագրությունը կամ հաղորդակցության այլ ձևերը չպետք է ենթարկվեն կամայական կամ անօրինական միջամտության, կամ չպետք է անօրինական քայլեր կատարվեն նրա պատվի ու հեղինակության դեմ: Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն նման միջամտությունից կամ անօրինական քայլերից օրենքով պաշտպանության իրավունք:

2. Մասնակից պետությունները պետք է պաշտպանեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով ունենան անձնական, առողջական կամ վերականգնողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիություն:

Հոդված 23
Տան և ընտանիքի նկատմամբ հարգանքը

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են արդյունավետ ու անհրաժեշտ միջոցներ՝ մյուսների հետ հավասար հիմունքներով վերացնելու հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը բոլոր հարցերում, որոնք վերաբերում են ամուսնությանը, ընտանիքին, հայրությանն ու մայրությանը և անձնական հարաբերություններին, որպեսզի ապահովեն, որ.

ա) ճանաչվի ամուսնության տարիքում գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց՝ ապագա ամուսինների ազատ ու լիակատար համաձայնությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը.

բ) ճանաչվեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները՝ ազատ ու պատասխանատու կերպով որոշելու իրենց երեխաների թիվը և նրանց ծննդյան միջև ընկած ժամանակահատվածները, տարիքին համապատասխան տեղեկատվություն, վերարտադրողական վարքագծի ու ընտանիքի պլանավորման դաստիարակություն ստանալու, ինչպես նաև տրամադրվեն սույն իրավունքների իրականացման համար անհրաժեշտ միջոցներ.

գ) հաշմանդամություն ունեցող անձինք, ներառյալ՝ երեխաները, պաշտպանեն մայրանալու և հայրանալու իրավունքը մյուսների հետ հավասար հիմունքներով:

2. Մասնակից պետություններն ապահովում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու պարտականությունները՝ կապված երեխաների խնամակալության, հովանավորության, հոգաբարձության, որդեգրման կամ նման այլ ինստիտուտների հետ, եթե տվյալ հասկացությունները գոյություն ունեն ներպետական օրենսդրության մեջ. բոլոր դեպքերում երեխայի

բարձրագույն շահերը համարվում են առաջնահերթ: Մասնակից պետությունները համապատասխան աջակցություն են ցուցաբերում հաշմանդամություն ունեցող անձանց երեխաների դաստիարակության հետ կապված իրենց պարտականությունները կատարելիս:

3. Մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն օգտվեն ընտանեկան կյանքի իրավունքներից: Այս իրավունքներն իրականացնելու նպատակով, և որպեսզի կանխեն այնպիսի երևույթները, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող երեխաներին թաքցնելը, լքելը, նրանց նկատմամբ պարտականությունները չկատարելը և խտրականության ենթարկելը, մասնակից պետությունները պարտավորվում են հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին վաղ փուլում տալ սպառիչ տեղեկատվություն, մատուցել ծառայություններ և ցուցաբերել աջակցություն:

4. Մասնակից պետություններն ապահովում են, որ երեխան չբաժանվի ծնողներից իր կամքին հակառակ՝ բացի այն դեպքերից, երբ դատական հսկողություն իրականացնող մարմինները, կիրառելի օրենսդրության ու ընթացակարգերի համաձայն, որոշում են կայացնում, որ նման բաժանումն անհրաժեշտ է՝ ելնելով երեխայի բարձրագույն շահերից: Ոչ մի դեպքում երեխան չպետք է բաժանվի ծնողներից երեխայի կամ ծնողներից մեկի կամ երկուսի հաշմանդամության պատճառով:

5. Երբ հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիքն ի վիճակի չէ խնամելու նրան, մասնակից պետությունները քայլեր են ձեռնարկում նրան խնամելու այլ միջոցներ տրամադրելու ուղղությամբ, մասնավորապես՝ հեռավոր հարազատների միջոցով, իսկ նման հնարավորություն չլինելու դեպքում՝ տվյալ համայնքում ապրող այլ ընտանիքում տեղավորելով:

Հոդված 24
Կրթությունը

1. Մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը: Այս իրավունքն առանց խտրականության և հավասար հնարավորություններով իրականացնելու համար մասնակից պետություններն ապահովում են կրթության բոլոր ոլորտները ներառող համակարգը բոլոր մակարդակներում, ինչպես նաև՝ կրթությունը ամբողջ կյանքի ընթացքում՝ ուղղված.

ա) մարդկային ներուժի և արժանապատվության ու ինքնագնահատման լիակատար զարգացմանը, ինչպես նաև մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների ու մարդկային բազմազանության նկատմամբ հարգանքի ամրապնդմանը.

բ) հաշմանդամություն ունեցող անձանց անհատականության, տաղանդի ու ստեղծագործական մտքի զարգացմանը, ինչպես նաև նրանց մտավոր ու

ֆիզիկական կարողությունների զարգացմանը՝ օգտագործելով նրանց առավելագույն հնարավորությունները.

գ) հնարավորությունների ստեղծմանը, որի արդյունքում հաշմանդամություն ունեցող անձինք արդյունավետ կերպով մասնակցություն կունենան ազատ հասարակության կյանքում:

2. Սույն իրավունքն իրականացնելիս մասնակից պետություններն ապահովում են, որ.

ա) հաշմանդամություն ունեցող անձինք չմեկուսացվեն ընդհանուր կրթական համակարգից հաշմանդամության պատճառով, և որ հաշմանդամություն ունեցող երեխաները չզրկվեն անվճար ու պարտադիր՝ տարրական կամ միջնակարգ կրթություն ստանալու իրավունքից հաշմանդամության պատճառով.

բ) հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինի համակողմանի, որակյալ ու անվճար՝ տարրական ու միջնակարգ կրթությունը համայնքի այլ անդամների հետ հավասար հիմունքներով.

գ) տրամադրվեն անհատի պահանջներին անհրաժեշտ հնարավորություններ.

դ) ընդհանուր կրթական համակարգում հաշմանդամություն ունեցող անձինք ստանան անհրաժեշտ աջակցություն՝ իրենց արդյունավետ ուսուցումն ապահովելու նպատակով.

ե) ձեռնարկվեն անհատական աջակցությանն ուղղված արդյունավետ միջոցներ այնպիսի միջավայրերում, որոնք ամբողջությամբ ներգրավելու նպատակն իրականացնելուն զուգահեռ նաև առավելագույնս կնպաստեն նրանց ուսումնական ու սոցիալական զարգացմանը:

3. Մասնակից պետությունները պետք է հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տան սովորելու կյանքի ու սոցիալական զարգացման հմտությունները՝ աջակցելով նրանց լիակատար ու հավասար մասնակցությանը կրթական համակարգում ու հասարակական կյանքում՝ որպես լիիրավ անդամներ: Այս նպատակով մասնակից պետություններն իրականացնում են անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում.

ա) նպաստելով Բրայլի համակարգի, այլընտրանքային տառատեսակների, հաղորդակցության ուժեղացուցիչ ու այլընտրանքային միջոցների ու ձևաչափերի, ինչպես նաև կողմնորոշման և շարժունակության հմտությունների ուսուցմանը, նաև հասակակիցների կողմից աջակցության ցուցաբերմանն ու ուղղորդմանը.

բ) նպաստելով շարժուձևերի լեզվի ուսուցմանը և խուլերի լեզվական ինքնությանը.

գ) ապահովելով, որ կույր, խուլ կամ կույր ու խուլ անձանց, մասնավորապես՝ երեխաների ուսուցումը կատարվի տվյալ հաշմանդամություն ունեցող անձի համար ամենահարմար լեզվով, հաղորդակցության մեթոդներով ու միջոցներով և այնպիսի միջավայրում, որն առավելագույնս կնպաստի ուսումնական ու սոցիալական զարգացմանը:

4. Որպեսզի ապահովվի այս իրավունքի իրականացումը, մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ներգրավելու համար շարժուձևերի լեզվի և/կամ Բրայլի համակարգի որակավորմամբ ուսուցիչների, նաև՝ հաշմանդամություն ունեցող ուսուցիչների և դասընթացներ կազմակերպելու կրթական համակարգի տարբեր մակարդակներում աշխատող մասնագետների ու անձնակազմի համար: Այդ դասընթացները ներառում են իրազեկում հաշմանդամության հիմնահարցերի շուրջ և հաղորդակցության ուժեղացուցիչ ու այլընտրանքային համապատասխան միջոցների ու ձևաչափերի օգտագործում, կրթական տեխնոլոգիաներ ու նյութեր՝ նպատակ ունենալով աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց:

5. Մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով մատչելի լինեն ընդհանուր բարձրագույն կրթությունը, մասնագիտական կրթությունը, մեծահասակների ուսուցումը և կրթությունը ամբողջ կյանքի ընթացքում: Այս նպատակով մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվեն անհրաժեշտ հնարավորություններ:

Հոդված 25
Առողջությունը

1. Մասնակից պետությունները գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն առողջապահական ամենաբարձր չափորոշիչներին հասնելու իրավունք՝ առանց հաշմանդամության պատճառով խտրականության: Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք մատչելի կերպով օգտվեն առողջապահական այնպիսի ծառայություններից, նաև՝ առողջության վերականգնողական միջոցներից, որոնք հաշվի են առնում գենդերային առանձնահատկությունները: Մասնավորապես, մասնակից պետությունները.

ա) հաշմանդամություն ունեցող անձանց ապահովում են նույն կարգի, որակի ու չափանիշների անվճար կամ մատչելի առողջապահական ծառայություններով ու ծրագրերով, որոնք տրամադրվում են այլ անձանց, ներառյալ՝ սեռական ու վերարտադրողական առողջության ոլորտը և բնակչությանն առաջարկվող հանրային առողջապահական ծրագրերը.

բ) հաշմանդամություն ունեցող անձանց մատուցում են հաշմանդամության հատուկ կարիքներին անհրաժեշտ առողջապահական ծառայություններ, ներառյալ՝ վաղ հայտնաբերումն ու միջամտությունը, ինչպես նաև՝ հետագա հաշմանդամությունը նվազեցնելուն ու կանխելուն միտված ծառայություններ նաև երեխաների ու տարեցների շրջանում.

գ) այս առողջապահական ծառայությունները մատուցում են անձի բնակության վայրին հնարավորինս մոտ, ներառյալ՝ գյուղական վայրերում.

դ) բուժաշխատողներից պահանջում են հաշմանդամություն ունեցող անձանց մատուցել նույն որակի ծառայություններ, ինչ մյուսներին՝ նաև հիմք ընդունելով նրանց ազատ ու գիտակցված համաձայնությունը, մասնավորապես բարձրացնելով իրազեկվածությունը մարդու իրավունքների, արժանապատվության, ինքնուրույնության և հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների վերաբերյալ՝ հանրային ու մասնավոր առողջապահական բնագավառում ուսուցման և բարոյական չափորոշիչների տարածման միջոցով.

ե) արգելում են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության կիրառումը բժշկական ու կյանքի ապահովագրության ոլորտում, որը պետք է տրամադրվի արդարացիորեն ու ողջամիտ կերպով, եթե ապահովագրության այս տեսակն ընդունելի է ներպետական օրենսդրությամբ.

զ) արգելում են հաշմանդամության պատճառով խտրականություն կիրառել՝ հրաժարվելով ցուցաբերել բժշկական աջակցություն, մատուցել առողջապահական ծառայություններ կամ տրամադրել սնունդ և հեղուկներ:

Հոդված 26
Բուժումն ու վերականգնումը

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են արդյունավետ ու անհրաժեշտ միջոցներ, ներառյալ՝ հասակակիցների աջակցությունը, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն ընձեռվի ձեռք բերել և պահպանել առավելագույն անկախություն, ամբողջությամբ օգտագործել ֆիզիկական, մտավոր, սոցիալական ու մասնագիտական կարողությունները և լիարժեքորեն ներգրավվել ու մասնակցություն ունենալ կյանքի բոլոր ոլորտներում: Այս նպատակով մասնակից պետությունները կազմակերպում, զարգացնում ու ընդլայնում են բուժական ու վերականգնողական ծառայությունները և ծրագրերը, մասնավորապես, առողջապահության, զբաղվածության, կրթության, սոցիալական ծառայության ոլորտներում այնպես, որ այդ ծառայություններն ու ծրագրերը.

ա) իրականացվեն հնարավորինս վաղ փուլում և հիմնվեն անհատի կարիքների և ուժի բազմակողմանի գնահատման վրա.

բ) նպաստեն համայնքում և հասարակական բոլոր ոլորտներում մասնակցությանն ու ներգրավվածությանը, լինեն կամավոր և հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի՝ տեղակայված լինելով նրանց բնակության վայրին հնարավորինս մոտ, ներառյալ՝ գյուղական վայրերում:

2. Մասնակից պետությունները նպաստում են բուժական ու վերականգնողական ծառայություններում աշխատող մասնագետների ու անձնակազմի համար կազմակերպվող սկզբնական ու շարունակական դասընթացների զարգացմանը:

3. Մասնակից պետություններն աջակցում են հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված՝ բուժման ու վերականգնման օժանդակ

պարագաներ ու տեխնոլոգիաներ ձեռք բերելուն, դրանց մասին իրազեկվածությանն ու օգտագործմանը:

Հոդված 27
Աշխատանքն ու զբաղվածությունը

1. Մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքի իրավունքը. սա ներառում է ապրուստի միջոցներ վաստակելու իրավունքը աշխատանքի միջոցով, որը նա ձեռք է բերում իր ազատ ընտրության ու համաձայնության պայմաններում, ինչպես նաև աշխատուժի շուկայում և հաշմանդամություն ունեցող անձի համար բաց, ընդգրկուն ու մատչելի աշխատանքային միջավայրում: Մասնակից պետությունները պաշտպանում են աշխատանքի իրավունքը և նպաստում դրա կիրառմանը, ի թիվս այն անձանց, որոնք հաշմանդամություն են ձեռք բերել աշխատանքի ընթացքում, և անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում նաև օրենսդրության միջոցով, որպեսզի, մասնավորապես.

ա) արգելեն խտրականությունը հաշմանդամության պատճառով՝ կապված բոլոր այն հարցերին, որոնք վերաբերում են զբաղվածության տարբեր տեսակներին, ներառյալ՝ աշխատուժի հավաքագրման, վարձակալության ու աշխատանքի ընդունման պայմանները, զբաղվածության շարունակականությունը, աշխատանքային առաջընթաց ունենալը և անվտանգ ու առողջ աշխատանքային պայմանները.

բ) պաշտպանեն հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքի արդար ու բարենպաստ պայմաններ ունենալու իրավունքները, ներառյալ՝ միևնույն աշխատանքի հավասար հնարավորություններ և հավասար վարձատրություն, անվտանգ ուառողջ աշխատանքային պայմաններ, այդ թվում՝ պաշտպանություն ոտնձգություններից և վնասի փոխհատուցում.

գ) ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան մյուսների հետ հավասար հիմունքներով իրականացնել իրենց աշխատանքի և արհմիութենական իրավունքները.

դ) հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնեն տեխնիկական և մասնագիտական ընդհանուր ծրագրերը, աշխատանքի տեղավորման ծառայությունները և մասնագիտական ու շարունակական ուսուցումը.

ե) հաշմանդամություն ունեցող անձանց համար զարգացնեն աշխատանքային հնարավորությունները և նպաստեն աշխատանքային առաջընթացին աշխատուժի շուկայում, ինչպես նաև աջակցեն աշխատանք գտնելու, ձեռք բերելու, պահպանելու և աշխատանքի վերադառնալու հարցերում.

զ) զարգացնեն հնարավորությունները ինքնագործունեության, ձեռնարկատիրության բնագավառում, նպաստեն ընկերությունների զարգացմանն ու սեփական բիզնեսի ստեղծմանը.

է) հաշմանդամություն ունեցող անձինք աշխատանքի անցնեն պետական հատվածում.
ը) հաշմանդամություն ունեցող անձանց աջակցեն աշխատանքի անցնել մասնավոր հատվածում համապատասխան քաղաքականության ու միջոցառումների միջոցով, որոնք կարող են ներառել գործողությունների հաստատուն ծրագրեր, խթանիչ և այլ միջոցառումներ.
թ) ապահովեն, որ աշխատավայրում հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվեն անհրաժեշտ հնարավորություններ.
ժ) նպաստեն հաշմանդամություն ունեցող անձանց՝ աշխատուժի բաց շուկայում աշխատանքային փորձ ձեռք բերելուն.
ժա) նպաստեն հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական վերականգնման, աշխատանքի պահպանման և աշխատանքին վերադառնալու ծրագրերի իրականացմանը:

2. Մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք չպահվեն ստրկության կամ ծառայության մեջ և մյուսների հետ հավասար հիմունքներով պաշտպանված լինեն հարկադիր կամ պարտադիր աշխատանքից:

Հոդված 28
Կենսապահովման բավարար մակարդակն ու սոցիալական պաշտպանությունը

1. Մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց ու նրանց ընտանիքների՝ կենսապահովման բավարար մակարդակ ունենալու իրավունքը, որը նախատեսում է նաև բավարար քանակությամբ սննդով, հագուստով ապահովված լինելը, բնակության վայրի առկայությունը, ինչպես նաև մշտապես բարելավվող կենսական պայմանները, և անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում այս իրավունքի իրականացումն ապահովելու ու դրան նպաստելու համար՝ առանց հաշմանդամության պատճառով խտրականության:

2. Մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության իրավունքը և ընդունում են, որ նրանք պետք է օգտվեն այդ իրավունքից առանց հաշմանդամության պատճառով խտրականության, և անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում այս իրավունքի իրականացումն ապահովելու ու դրան նպաստելու համար, նաև միջոցներ են ձեռնարկում.
ա) ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձանց հավասարապես մատչելի լինեն մաքուր ջրի ծառայությունները, անհրաժեշտ ու հնարավոր բոլոր ծառայությունները, պարագաները և աջակցության այն միջոցները, որոնք նախատեսված են հաշմանդամության կարիքները հոգալու համար.

բ) ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես հաշմանդամություն ունեցող կանանց, աղջիկներին ու տարեցներին մատչելի լինեն սոցիալական պաշտպանության և աղքատության հաղթահարման ծրագրերը.
գ) ապահովելու համար, որ չքավոր հաշմանդամություն ունեցող անձինք ու նրանց ընտանիքները ստանան պետական աջակցություն հաշմանդամության ծախսերը հոգալու համար, ինչպես նաև համապատասխան ուսուցում, խորհրդատվություն, ֆինանսական աջակցություն և ժամանակավոր խնամք.
դ) ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի լինեն բնակարանով ապահովելու պետական ծրագրերը.
ե) ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձանց հավասարապես մատչելի լինեն ծերության կենսաթոշակները և ծրագրերը:

Հոդված 29
Մասնակցությունը քաղաքական ու հասարակական կյանքում

Մասնակից պետությունները երաշխավորում են հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքները և մյուսների հետ հավասար հիմունքներով դրանցից օգտվելու հնարավորությունը, ինչպես նաև պարտավորվում են.
ա) ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ կերպով ընտրված ներկայացուցիչների միջոցով, արդյունավետ ու լիարժեք կերպով մասնակցություն ունենան քաղաքական ու հասարակական կյանքին, ներառյալ՝ քվեարկելու և ընտրվելու նրանց իրավունքը և հնարավորությունը.
   (i) ապահովելով, որ քվեարկության ընթացակարգերը, վայրերը և միջոցները լինեն մատչելի ու դյուրին հասկանալու և գործածության համար.
   (ii) պաշտպանելով հաշմանդամություն ունեցող անձանց՝ ընտրությունների և հանրաքվեների գաղտնի քվեարկության իրավունքը առանց ահաբեկման, ինչպես նաև ապահովելով պետական բոլոր մակարդակներում ընտրվելու, պաշտոն զբաղեցնելու և հանրային գործառույթներ իրականացնելու նրանց իրավունքը՝ անհրաժեշտության դեպքում աջակցելով օժանդակ ու նոր տեխնոլոգիաների օգտագործմանը.
   (iii) երաշխավորելով հաշմանդամություն ունեցող անձանց՝ որպես ընտրողների կամքի ազատ արտահայտումը և, այս նպատակով, անհրաժեշտության դեպքում և նրանց խնդրանքով՝ թույլատրելով իրենց ընտրությամբ որևէ անձի օգնությունը քվեարկություն կատարելիս:
բ) Ակտիվորեն նպաստելով այնպիսի մթնոլորտի ստեղծմանը, որում հաշմանդամություն ունեցող անձինք առանց խտրականության և մյուսների հետ հավասար հիմունքներով կկարողանան արդյունավետ ու լիարժեք

կերպով մասնակցություն ունենալ հանրային գործերի կառավարմանը, ինչպես նաև խրախուսելով նրանց մասնակցությունը հանրային գործերում, ներառյալ.

(i) մասնակցությունը երկրի հանրային ու քաղաքական կյանքով զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների և ընկերությունների գործունեությանը, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների գործունեությանն ու ղեկավարմանը.

(ii) հիմնելով այնպիսի կազմակերպություններ, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց կներկայացնեն միջազգային, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում, և միանալով դրանց:

Հոդված 30
Մասնակցությունը մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին

1. Մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը և ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որ նրանց համար.

ա) մատչելի լինեն մշակութային գործերը՝ ընդունելի ձևաչափերով.

բ) մատչելի լինեն հեռուստահաղորդումները, ֆիլմերը, թատրոնը և մշակութային գործունեության այլ ձևերը՝ ընդունելի ձևաչափերով.

գ) մատչելի լինեն մշակութային ներկայացումների ու ծառայությունների համար նախատեսված վայրերը, ինչպես, օրինակ, թատրոնները, թանգարանները, կինոթատրոնները, գրադարանները, ինչպես նաև զբոսաշրջությանը վերաբերող ծառայությունները, և հնարավորինս մատչելի լինի հուշարձաններ ու ազգային մշակութային արժեք ներկայացնող վայրեր մուտք գործելը:

2. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տալու համար զարգացնել և օգտագործել իրենց ստեղծագործական, գեղարվեստական և մտավոր ներուժը ոչ միայն սեփական շահի համար, այլև ի նպաստ հասարակության հարստացման:

3. Մասնակից պետությունները, միջազգային իրավունքին համապատասխան, միջոցներ են ձեռնարկում ապահովելու համար, որ մտավոր սեփականության իրավունքները պաշտպանող օրենքներն անհիմն կերպով կամ խտրականության դրսևորմամբ չսահմանափակեն մշակութային նյութերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

4. Հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային և լեզվական յուրահատուկ ինքնությունը, ի թիվս շարժուձևերի լեզվի և խոլերի մշակույթի, ենթակա է ընդունման ու աջակցության մյուսների հետ հավասար հիմունքներով:

5. Նպատակ ունենալով հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տալ մյուսների հետ հավասար հիմունքներով մասնակցելու հանգստի, ժամանցային ու սպորտային միջոցառումներին՝ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ քայլեր.

ա) խրախուսելու համար հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորինս ակտիվ մասնակցությունը բոլոր մակարդակներում անցկացվող հիմնական սպորտային միջոցառումներին.

բ) ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունենան կազմակերպելու և զարգացնելու հաշմանդամությանը հատուկ սպորտային և առողջարարական միջոցառումներ և մասնակցեն դրանց, ինչպես նաև այս նպատակն իրականացնելու համար խրախուսում են անհրաժեշտ ուսուցման, վերապատրաստման և այլ միջոցների ապահովումը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով.

գ) ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի լինեն սպորտային, առողջարարական և զբոսաշրջության վայրերը.

դ) ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող երեխաներին մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով մատչելի լինեն խաղի, առողջարարական, ժամանցային ու սպորտային միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները, ներառյալ՝ դպրոցում նույն միջոցառումների իրականացումը.

ե) ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի լինեն առողջարարական, զբոսաշրջային, ժամանցային ու սպորտային միջոցառումներ կազմակերպող ծառայությունները:

Հոդված 31
Վիճակագրությունն ու տվյալների հավաքումը

1. Մասնակից պետությունները պարտավորվում են հավաքել անհրաժեշտ տեղեկատվություն, ներառյալ՝ վիճակագրական ու հետազոտական տվյալներ, որոնք հնարավորություն կտան մշակել ու իրականացնել սույն Կոնվենցիան կիրարկելու համար անհրաժեշտ քաղաքականություն: Այս տեղեկատվության հավաքման ու պահպանման գործընթացը.

ա) պետք է համապատասխանի իրավականորեն սահմանված երաշխիքներին, ներառյալ՝ տվյալների պաշտպանության մասին օրենսդրությանը, որը կապահովի հաշմանդամություն ունեցող անձանց անձնական կյանքի գաղտնիությունը և հարգանքը դրա նկատմամբ.

բ) պետք է համապատասխանի միջազգայնորեն ընդունված նորմերին, որոնք պաշտպանում են մարդու իրավունքները, հիմնարար ազատությունները, իսկ վիճակագրական տվյալներ հավաքելիս ու օգտագործելիս՝ բարոյական սկզբունքները:

2. Սույն հոդվածի համաձայն հավաքվող տեղեկատվությունը անհրաժեշտության դեպքում պետք է առանձնացվի և օգտագործվի անդամ պետու-

թյունների՝ սույն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումը գնահատելուն օգնելու համար, ինչպես նաև նպատակ ունենալով վերհանելու հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացած արգելքները և արձագանքելու դրանց նրանց իրավունքներն իրականացնելիս:

3. Մասնակից պետությունները պարտավորություն են ստանձնում այդ վիճակագրության տարածման համար և ապահովում են, որ այն մատչելի լինի հաշմանդամություն ունեցող անձանց և այլոց համար:

Հոդված 32
Միջազգային համագործակցություն

1. Մասնակից պետությունները գիտակցում են միջազգային համագործակցության ու դրա խթանման կարևորությունը ազգային մակարդակում սույն Կոնվենցիայի նպատակների ու խնդիրների իրականացման համար և ձեռնարկում են անհրաժեշտ ու արդյունավետ միջոցներ այս ուղղությամբ՝ համագործակցելով համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ: Նման միջոցները մասնավորապես ներառում են հետևյալ քայլերը.

ա) ապահովել, որ միջազգային համագործակցությունը, ներառյալ՝ միջազգային զարգացման ծրագրերը, լինեն համակողմանի և մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար.

բ) նպաստել ու աջակցել կարողությունների զարգացմանը մասնավորապես տեղեկատվության, փորձի, ուսուցման ծրագրերի ու լավագույն գործելակերպի փոխանակման միջոցով.

գ) նպաստել համագործակցությանը հետազոտությունների և գիտատեխնիկական գիտելիքների մատչելիության ուղղությամբ.

դ) անհրաժեշտության դեպքում տրամադրել տեխնիկական ու տնտեսական աջակցություն՝ մասնավորապես նպաստելով մատչելիությանը և փոխանակելով մատչելի ու օժանդակող տեխնոլոգիաներ:

2. Սույն հոդվածի դրույթները չպետք է հակասեն յուրաքանչյուր մասնակից պետության՝ սույն Կոնվենցիայով ստանձնած պարտավորություններին:

Հոդված 33
Ներպետական կիրարկումը և վերահսկումը

1. Մասնակից պետությունները, համաձայն իրենց կազմակերպչական համակարգի, պետք է կառավարությունում սահմանեն համապատասխան շրջանակներ, որոնք կզբաղվեն սույն Կոնվենցիայի կիրարկման հետ կապված հարցերով և պատշաճ կերպով կուսումնասիրեն կառավարությունում համակարգման մեխանիզմների հաստատման կամ ստեղծման հնարավո-

ությունները՝ նպաստելու համար համապատասխան աշխատանքների իրականացմանը տարբեր հատվածներում և մակարդակներում:

2. Մասնակից պետությունները պետք է, իրենց իրավական ու վարչական համակարգերին համապատասխան, պահպանեն, ամրապնդեն, հաստատեն կամ ստեղծեն յուրաքանչյուր մասնակից պետությունում այնպիսի համակարգ, որը անհրաժեշտության դեպքում կներառի մեկ կամ մի քանի անկախ մեխանիզմ, որը կաջակցի, կպաշտպանի և կվերահսկի սույն Կոնվենցիայի կիրարկումը: Նման մեխանիզմներ հաստատելիս կամ ստեղծելիս մասնակից պետությունները պետք է հաշվի առնեն ներպետական հաստատությունների կարգավիճակին և գործունեությանը վերաբերող սկզբունքները՝ մարդու իրավունքները պաշտպանելու ու դրանց աջակցելու համար:

3. Քաղաքացիական հասարակությունը, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունները, պետք է ներգրավվեն ու մասնակցեն վերահսկման գործընթացին:

Հոդված 34
Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն

1. Հիմնվում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե), որն իրականացնում է ստորև ներկայացված գործառույթները:

2. Կոմիտեն սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելիս պետք է կազմված լինի տասներկու փորձագետից: Եվս վաթսուն երկիր Կոնվենցիան վավերացնելուց կամ դրան միանալուց հետո Կոմիտեի անդամների թիվը պետք է ավելանա վեց անդամով, այդպիսով՝ անդամների առավելագույն թիվը պետք է հասնի տասնութի:

3. Կոմիտեի անդամները պետք է իրենց կարողությունների չափով իրականացնեն իրենց գործառույթները և օժտված լինեն բարոյական բարձր հատկանիշներով, սույն Կոնվենցիային առնչվող ոլորտում ճանաչված որակավորում և փորձ ունենան: Թեկնածուներ առաջադրելիս մասնակից պետությունները հատուկ ուշադրություն են դարձնում 4-րդ հոդվածի 3-րդ կետում նշված դրույթին:

4. Կոմիտեի անդամներն ընտրվում են մասնակից պետությունների կողմից, ընդ որում՝ հաշվի է առնվում աշխարհագրական հավասար բաշխումը, քաղաքակրթությունների տարբեր ձևերի, հիմնական իրավական համակարգերի, հավասարակշիռ գենդերային ներկայացվածությունը և հաշմանդամություն ունեցող փորձագետների մասնակցությունը:

5. Կոմիտեի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, մասնակից պետությունների կողմից ներկայացված տվյալ երկրի քաղաքացիներից, մասնակից պետությունների համաժողովների ժամանակ: Այս հանդիպումներում, որտեղ քվորում է ապահովում մասնակից պետությունների

երկու երրորդը, Կոմիտեի անդամ է ընտրվում այն անձը, որն ստանում է առավելագույն ձայներ, ինչպես նաև մասնակից պետությունների՝ ներկա գտնվող և քվեարկող ներկայացուցիչների ձայների բացարձակ մեծամասնությունը:

6. Նախնական ընտրությունը կայացվում է ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո: Յուրաքանչյուր ընտրությունից առնվազն չորս ամիս առաջ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը նամակ է ուղարկում մասնակից պետություններին՝ նրանց առաջարկելով երկամսյա ժամկետում ներկայացնել թեկնածուների ցուցակը: Գլխավոր քարտուղարն այնուհետև պատրաստում է ներկայացված բոլոր անձանց ցանկը այբբենական կարգով, նշելով այն մասնակից պետությունը, որը նրանց առաջադրել է, և այն ներկայացնում մասնակից պետություններին:

7. Կոմիտեի անդամներն ընտրվում են 4 տարի ժամկետով: Նրանք կարող են մեկ անգամ վերընտրվել: Սակայն առաջին ընտրությունների ժամանակ ընտրված վեց անդամի պաշտոնավարման ժամկետը լրանում է երկու տարուց. առաջին ընտրությունից անմիջապես հետո այս վեց անդամների անուններն ընտրվում են նիստը նախագահողի կողմից կատարվող վիճակահանությամբ, ինչպես նշված է սույն հոդվածի 5-րդ կետում:

8. Կոմիտեի լրացուցիչ վեց անդամներն ընտրվում են հերթական ընտրություններում՝ համաձայն սույն հոդվածի համապատասխան դրույթների:

9. Եթե Կոմիտեի անդամը մահանում, հրաժարական է տալիս կամ հայտարարում, որ որևէ այլ պատճառով այլևս չի կարող կատարել իր պարտականությունները, այն մասնակից պետությունը, որը նշանակել է համապատասխան թեկնածուին, առաջադրում է այլ փորձագետի, որն ունի համապատասխան որակավորում ու բավարարում է սույն հոդվածի համապատասխան դրույթներով սահմանված պահանջները: Տվյալ անդամը պետք է աշխատի մինչև սահմանված ժամկետի ավարտը:

10. Կոմիտեն հաստատում է իր ընթացակարգային կանոնները:

11. Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը Կոմիտեի աշխատանքների արդյունավետ իրականացման համար տրամադրում է համապատասխան անձնակազմ և նյութական միջոցներ՝ համաձայն սույն Կոնվենցիայի, և գումարում է դրա առաջին նիստը:

12. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հավանությամբ՝ սույն Կոնվենցիայով ստեղծված Կոմիտեի անդամները կստանան աշխատավարձ Միավորված ազգերի կազմակերպության միջոցներից այնպիսի պայմաններով, որոնք կսահմանի Ասամբլեան՝ հաշվի առնելով Կոմիտեի անդամների պարտականությունների կարևորությունը:

13. Կոմիտեի անդամներին տրվում են այնպիսի հնարավորություններ, արտոնություններ և անձեռնմխելիություն, որոնք սահմանված են Միավորված ազգերի կազմակերպության հարցերով առաքելություններ իրականացնող փորձագետների համար՝ ամրագրված «Միավորված ազգերի կազմա-

կերպության արտոնությունների և անձեռնմխելիության մասին» կոնվենցիայի համապատասխան բաժիններում:

Հոդված 35
Մասնակից պետությունների կողմից ներկայացվող հաշվետվությունները

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն համապատասխան մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի միջոցով Կոմիտեին ներկայացնում է համապարփակ հաշվետվություն սույն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված միջոցառումների և այս հարցերում արձանագրված առաջընթացի մասին:

2. Դրանից հետո մասնակից պետությունները ներկայացնում են հաշվետվություններ առնվազն 4 տարին մեկ անգամ կամ ցանկացած պահի՝ Կոմիտեի ներկայացրած պահանջի դեպքում:

3. Կոմիտեն սահմանում է այս հաշվետվությունների բովանդակության վերաբերյալ ուղեցույցներ:

4. Այն մասնակից պետությունը, որը ներկայացրել է համապարփակ նախնական հաշվետվություն, իր հետագա հաշվետվություններում կարող է չկրկնել նախկինում տրամադրած տեղեկատվությունը: Կոմիտեին ներկայացվող հաշվետվություններ նախապատրաստելիս մասնակից պետություններին առաջարկվում է հաշվետվությունների ներկայացման գործընթացը դարձնել բաց և թափանցիկ՝ պատշաճ ուշադրություն դարձնելով սույն Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին:

5. Հաշվետվության մեջ կարող են նշվել այն գործոններն ու դժվարությունները, որոնք ազդում են սույն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման վրա:

Հոդված 36
Հաշվետվությունների ուսումնասիրումը

1. Յուրաքանչյուր հաշվետվություն ուսումնասիրվում է Կոմիտեի կողմից, որը դրա վերաբերյալ ներկայացնում է առաջարկներ, անհրաժեշտության դեպքում՝ ընդհանուր առաջարկություններ, որից հետո դրանք փոխանցում է համապատասխան մասնակից պետություններին: Մասնակից պետություններն իրենց հայեցողությամբ կարող են Կոմիտեին տրամադրել ցանկացած տեղեկատվություն: Կոմիտեն կարող է պահանջել լրացուցիչ տեղեկատվություն, որը վերաբերում է սույն Կոնվենցիայի կիրարկմանը:

2. Եթե մասնակից պետությունը հաշվետվություն ներկայացնելն ուշացնում է, Կոմիտեն կարող է ծանուցել համապատասխան մասնակից պետու-

թյանը վերջինիս տարածքում սույն Կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ ուսումնասիրություն անցկացնելու անհրաժեշտության մասին, հիմնվելով Կոմիտեի ունեցած հավաստի տեղեկատվության վրա, եթե տվյալ հաշվետվությունը չներկայացվի ծանուցումից հետո երեք ամսվա ընթացքում: Կոմիտեն տվյալ մասնակից պետությանն առաջարկում է մասնակցել այդ ուսումնասիրությանը: Եթե մասնակից պետությունը ներկայացնում է համապատասխան հաշվետվությունը, ապա կիրառվում են սույն հոդվածի 1-ին կետի դրույթները:

3. Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը հաշվետվությունը տրամադրում է բոլոր մասնակից պետություններին:

4. Մասնակից պետություններն իրենց հաշվետվությունները մատչելի են դարձնում իրենց երկրների հանրության համար և դյուրացնում են այդ առաջարկների ու ընդհանուր առաջարկությունների մատչելիությունը, որոնք վերաբերում են այս հաշվետվություններին:

5. Նպատակահարմարության դեպքում Կոմիտեն մասնակից պետությունների հաշվետվությունները փոխանցում է Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված գործակալություններին, հիմնադրամներին ու ծրագրերին և այլ իրավասու մարմիններին, որպեսզի վերջիններս ուշադրություն դարձնեն դրանցում հայցվող տեխնիկական խորհրդատվությանը կամ օժանդակությանը կամ դրանց վերաբերյալ նշումներին՝ դրանց կցելով Կոմիտեի դիտարկումները և առաջարկությունները, եթե այնտեղ կան նշումներ նման խնդրանքների կամ նշումների վերաբերյալ:

Հոդված 37
Մասնակից պետությունների և Կոմիտեի համագործակցությունը

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն համագործակցում է Կոմիտեի հետ և աջակցում նրա անդամներին իրենց հանձնագրի կատարման ընթացքում:

2. Կոմիտեն մասնակից պետությունների հետ իր հարաբերություններում պատշաճ ուշադրություն է դարձնում այն եղանակներին ու միջոցներին, որոնք զարգացնում են ներպետական կարողությունները սույն Կոնվենցիան կիրարկելու համար, մասնավորապես՝ միջազգային համագործակցության միջոցով:

Հոդված 38
Կոմիտեի հարաբերությունները այլ մարմինների հետ

Սույն Կոնվենցիայի արդյունավետ կիրարկումն ապահովելու և սույն Կոնվենցիայով կարգավորվող ոլորտում միջազգային համագործակցությունը խրախուսելու նպատակով.

ա) Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված գործակալությունները և մյուս մարմինները կարող են ներկայացված լինել սույն Կոնվենցիայի այն դրույթների կիրարկմանն առնչվող քննարկումներին, որոնք գտնվում են իրենց լիազորությունների շրջանակներում: Կոմիտեն կարող է իր հայեցողությամբ հրավիրել մասնագիտացված գործակալու-

թյունների և այլ իրավասու մարմինների՝ տրամադրելու փորձագիտական խորհրդատվություն Կոնվենցիայի կիրարկման այն ոլորտներում, որոնք իրենց լիազորությունների շրջանակում են: Կոմիտեն կարող է առաջարկել Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված գործակալություններին և այլ մարմիններին ներկայացնել հաշվետվություններ Կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ այն ոլորտներում, որոնք գտնվում են իրենց գործունեության սահմաններում.

բ) իր հանձնագրի իրականացման ընթացքում Կոմիտեն խորհրդակցում է համապատասխան այլ մարմինների հետ, որոնք ստեղծվել են մարդու իրավունքների մասին միջազգային պայմանագրերով՝ նպատակ ունենալով ապահովել համապատասխանությունը նրանց կողմից ներկայացվող հաշվետվության համապատասխան ուղեցույցներում, առաջարկներում ու ընդհանուր առաջարկություններում և խուսափել կրկնություններից, գործառույթների կրկնօրինակումից և համընկնումից:

Հոդված 39
Կոմիտեի հաշվետվությունը

Յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ Կոմիտեն Գլխավոր ասամբլեային և Տնտեսական ու սոցիալական խորհրդին հաշվետվություն է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ, ինչպես նաև առաջարկներ ու ընդհանուր առաջարկություններ է ներկայացնում, որոնք հիմնված են մասնակից պետություններից ստացված հաշվետվությունների ու տեղեկատվության վրա: Նման առաջարկները և ընդհանուր առաջարկությունները պետք է ներառվեն Կոմիտեի հաշվետվության մեջ մասնակից պետությունների կողմից ներկայացված դիտողությունների հետ միասին, եթե այդպիսիք կան:

Հոդված 40
Մասնակից պետությունների համաժողովը

1. Մասնակից պետությունները պարբերաբար հանդիպում են մասնակից պետությունների համաժողովում՝ քննարկելու համար սույն Կոնվենցիայի կիրարկմանն առնչվող բոլոր հարցերը:

2. Ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը հրավիրում է համաժողով: Հետագա նիստերը հրավիրվում են գլխավոր քարտուղարի կողմից՝ երկու տարին մեկ անգամ կամ մասնակից պետությունների համաժողովում կայացված որոշմամբ:

Հոդված 41
Ավանդապահը

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը սույն Կոնվենցիայի ավանդապահն է:

Հոդված 42
Ստորագրումը

Սույն Կոնվենցիան բաց է բոլոր պետությունների և տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունների ստորագրման համար Միավորված ազգերի կազմակերպության նստավայրում՝ Նյու Յորքում, 2007 թվականի մարտի 30-ից:

Հոդված 43
Պարտադիր լինելու վերաբերյալ համաձայնություն տալը

Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման ստորագրող պետությունների կողմից, ինչպես նաև պաշտոնական հաստատման՝ ստորագրող տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունների կողմից: Ցանկացած պետություն կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպություն, որը չի ստորագրել սույն Կոնվենցիան, կարող է միանալ դրան:

Հոդված 44
Տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունները

1. «Տարածաշրջանային ինտեգրման կազմակերպություն» նշանակում է՝ տվյալ տարածաշրջանի անկախ պետությունների կողմից հիմնադրված կազմակերպություն, որին իր անդամ պետությունները տվել են Կոնվենցիայով կարգավորվող հարցերին առնչվող իրավասություններ: Այսպիսի կազմակերպությունները պաշտոնական հաստատման կամ միանալու մասին իրենց փաստաթղթերում հայտարարում են Կոնվենցիայով կարգավորվող հարցերին առնչվող իրենց իրավասությունների շրջանակները: Այնուհետև նրանք ավանդապահին տեղեկացնում են իրենց իրավասության շրջանակներում կատարվող ցանկացած էական փոփոխության մասին:

2. Սույն Կոնվենցիայում «մասնակից պետություններին» կատարված հղումները կիրառվում են նման կազմակերպությունների նկատմամբ՝ նրանց իրավասությունների սահմաններում:

3. Սույն Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 1-ին կետի և 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի նպատակներով տարածաշրջանային ինտեգրման կազմակերպության կողմից ի պահ հանձնված ոչ մի փաստաթուղթ չի հաշվարկվում:

4. Տարածաշրջանային ինտեգրման կազմակերպություններն իրենց լիազորության սահմաններում կարող են օգտագործել մասնակից պետությունների համաժողովների ժամանակ քվեարկելու իրենց իրավունքը ձայների այնպիսի քանակով, որը հավասար է սույն Կոնվենցիային միացած իրենց մասնակից պետությունների ձայների քանակին: Նման կազմակերպությունը չի օգտագործում ձայնի իր իրավունքը, եթե իր մասնակից պետությունը արդեն օգտագործել է այդ իրավունքը, և հակառակը:

Հոդված 45
Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման կամ միանալու մասին քսաներորդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

2. Յուրաքանչյուր մասնակից պետության կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպության համար, որը վավերացրել, պաշտոնապես հաստատել կամ միացել է սույն Կոնվենցիային քսաներորդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իր փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

Հոդված 46
Վերապահումները

1. Սույն Կոնվենցիայի առարկայի և նպատակների հետ անհամատեղելի վերապահումներ չեն թույլատրվում:

2. Վերապահումները կարող են հանվել ցանկացած պահի:

Հոդված 47
Փոփոխությունները

1. Ցանկացած մասնակից պետություն կարող է սույն Կոնվենցիայում փոփոխություն կատարելու վերաբերյալ առաջարկություն անել և այն ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին: Վերջինս առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է մասնակից պետություններին՝ խնդրելով ծանուցել, թե արդյոք իրենք համաձայն են համաժողով հրավիրելու, որպեսզի քննարկեն և որոշումներ կայացնեն ներկայացվող փոփոխությունների վերաբերյալ: Եթե այդ հաղորդագրությունից չորս ամիս հետո մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդը հավանություն է տալիս համաժողովի անցկացմանը, գլխավոր քարտուղարը գումարում է համաժողով Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Ներկա գտնվող և քվեարկող մասնակից պետությունների երկու երրորդ մեծամասնությամբ փոփոխության վերաբերյալ ընդունված ցանկացած առաջարկ գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային՝ հաստատելու համար, այնուհետև բոլոր մասնակից պետություններին՝ ընդունելու համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն ընդունված և հաստատված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում ընդունման մասին ի պահ հանձնված փաստաթղթերի թիվը փոփոխության ընդունման օրը մասնակից պետությունների թվի երկու երրորդին հասնելուց հետո՝ երեսուներորդ օրը: Այնուհետև փոփոխությունն ուժի մեջ է մտնում ցանկացած մասնակից

պետության համար ընդունման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը: Փոփոխությունը ենթակա է կատարման միայն այն մասնակից պետությունների կողմից, որոնք այն ընդունել են:

3. Եթե մասնակից պետությունների համաժողովի ընթացքում ընդհանուր համաձայնությամբ որոշում է կայացվել, սույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդունված և հաստատված փոփոխությունը, որը բացառապես վերաբերում է 34-րդ, 38-րդ, 39-րդ և 40-րդ հոդվածներին, ուժի մեջ է մտնում ընդունման մասին ի պահ հանձնված փաստաթղթերի թիվը փոփոխության ընդունման օրը մասնակից պետությունների թվի երկու երրորդին հասնելուց հետո՝ երեսուներորդ օրը:

Հոդված 48
Չեղյալ հայտարարումը

Մասնակից պետությունը կարող է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցելու միջոցով: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից մեկ տարի հետո:

Հոդված 49
Մատչելի ձևաչափերը

Անհրաժեշտ է ապահովել սույն Կոնվենցիայի տեքստի հասանելիությունը մատչելի ձևաչափերով:

Հոդված 50
Նույնական տեքստեր

Սույն Կոնվենցիայի արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն տեքստերը նույնական են:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալ իրավասու ներկայացուցիչները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 22-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆ
ԳՈՌ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագիրներ՝ **Հրաչիկ ՍԱՐԳՍՅԱՆ**
Վահե ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
Լեզվաոճական խմբագիր՝ **Ամալյա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
Տեխն. խմբագիր՝ **Արարատ ԹՈՎՄԱՍՅԱՆ**
Կազմը՝ **Սոֆի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ**

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ +(374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am